ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ։

ԹԻՒ Ժ. — ՇԲՋԱՆ Լ **1874** ՏԱՐԻ Ի. — ՀՈԿՏԵՄԲԵՐ 5։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն)

Ինչպէս Ամնապլոյս անցեալ Թ-րդ թիւոյ մէջ շարունակեալ յօդուածոյս ի վերջ ակնարկեցի, զի Հայկական գրականութեան պայծառ զարգացման և եկեղեցական բարեկարգութեանց յարատևելով՝ արտադրեալ արդիւնքներն կապացուցանեն Հայոց Եկեղեցւոյ և Ազգի համար յաւէտ կարևոր և անհրաժեշտ եղած միջոցները, որք միշտ Եկեղեցական Նուիրապետութեան և պաշտօնէից ձեռամբք կարդասաւորուին և կպատկուին։

Թէ արդարև այսպիսի միջոցները գոծադրող և արդասաւորող Եկեղեցական Նուիրապետութեան և պաշտօնէից դիրքն ևս որքան վեհ և ակնածելի եղած է նոյն իսկ օտարաց անգամ երկիւղ ներգործելով և նոցա ջանքերը ջլատելով, սոցա ապացոյցները քանիցս յիշեցինք, բայց պէտք է երեքկնեմք Պետրոսեանեորդ դարու մէջ պատահածներէն ևս մի կարևոր ինչ յիշել յաւելլով։

Ընդհակառակ Թուրքիոյ մէջ Պետրոս Գերեզմանի կաթուղիկոսի վերայ ուղղուած հակիրճ ակնարկէն իմացուեցան Յունաց ջանքերն և նպատակներն, որք ոչինչ աոիթի ի զուր փախցնել չէին Թողուր, և եթէ պատահէր արդել ինչ՝ առ ժամս կլուէին, բայց ի ժամանակին դարձեալ կաշխատէին, և անխոնջ ջանքով կըհետևէին արդիւնաւորել ի՛նչ որ նպատակ կալած էին։ Այսպէսն Պետրոս Գերեզմանի օրով ևս յոյնք փորձուած պիտի լինէին՝ զի իւրեանց բուն և ազգակուր նպատակները արդիւնաւորել անկարելի էր, սակայն նորա առ Ընտուած վերափոխուելէն զկնի՝ յաջորդ Խաչատուր Ե. կաթուղիկոսի օրով կատարուած նորօրինակ հարստահարութիւնք և բռնութիւնք՝ գոգցես նոցա (Յունաց) յուսահատ և օրհասական մի ձիզը ևս կատարուցանեն։

Ի հետց հետէ Յոյնք շատ փորձեր կըշռեցին, և ձեռնունայն ընկճուեցան. իսկ երբ Խաչատուր Կաթուղիկոսի օրով ևս

քենայած նոր հնարից ևս ապարդիւն ել-նելը նկատեցին, իւրեանց Կոստանդին Տուկից կայսրը թելադրեցին, որ և սկսաւ իւր իշխանութեան մէջ գտնուած Հա-յաստանի բաժնին Հայերը չարաչար տագ-նապեցնել և նեղել անհնարին տուռա-պանօք, այնպէս որ լաւ էր միանգամ մե-ռանէին քան թէ նոյնպիսի դառն կենօք ապրէին: Ընդ Յունական իշխանութե-նէն գրաւեալ լինելով և Հայրապետու-թեան Աթոռն տակաւին անդ գտանուե-լով՝ Խաչատուր Կաթուղիկոս ևս անդ կենար. ուստի Կոստանդին Տուկից կը-յաջողի զԽաչատուր Կաթուղիկոս ի Պօ-լիս բերել տալոյ, և ի նմանէ մեծ գանձ *) կպահանջէ և կսպիսպէ հատուցանել: Իսկ երբ կտեսնէ՝ որ չէ կարող մի բան կրկին խլել, կբռնադատէ զԿաթուղիկոս՝ զի իւ-րաքանչիւր տարի հարկ տայ և կսպառնայ ի Պօլիս արգելուլ՝ մինչև որ պահանջուածը վճարէ: Մինանգամայն կխորհուրդ՝ զի իւր իշխաններէն երկուսը ի Հայաստան կրկրկէ՝ որ միևն Կաթուղիկոսական իշխանութիւ-նը վարէ, և միւսն կիւրաքանչիւրեան, և նոցա միջոցով իւր կամքերը կարդասա-ռոէ. սակայն Կաթուղիկոսն անվհերու-թեամբ կարհամարհէ և առ ոչինչ կդրէ նորա սպառնալիքը և խրոխտալը և կմեր-ժէ բարբարոսական պահանջները, որպէս-սիքը քրիստոնեայ չեղող իշխանութիւն և աղգերէն անգամ պահանջուած չէին, թէև որ քրիստոնեայ եղող մի իշխանութիւն և աղգի կվայելէր պահանջել *):

(*) Զնայելով որ՝ Տուկիծն արգէն Գետա-դարձին Թողած Հարստութիւնը՝ ինչպէս նաև զիւղական կալուածները և ագարակները յա-փշտակած գրաւած էր, և կարծելով որ ուրիշ գանձ ևս ունի և այն կգտնուի Խաչիկ կամ Խաչատուր Կաթուղիկոսի մօտ՝ կպահանջէ զայն, որում՝ կակնարկեմ և ևս:

(*) Ա յս առթիւ Հ. Մ ինքայէլ Ջամչեան պատ-մագիրն հետևեալ գեղեցիկ դիտողութիւնը զե-րած է:

«Ա յլ աստ զարմանալ արժան է ընդ գործս սոցա. զի զմեծամեծ և զլուսափանձ աշխարհս՝ զորս յափշտակեցին ի Հայոց, Թողեալ էին յա-ւարառութիւն Թշնամեաց, և ինքեանք զհետ լի-նէին ընչին իրաց: Պարսիկք և Սկիւթացիք ան-դադար յարձակեալ ի սահմանս իշխանութեան նոցա՝ զգանձս քաղաքացն կողոպտեալ տանէին. և սոքա ի Հայոց խելուէշս և լումայս խնդրէին, և ամենևին փոյթ ինչ ոչ տանէին՝ գոնէ զմար-գիկ փոխանակ ընծոյիցն փրկել. այլ՝ խստա-եռուն կոխան աւարառուաց զպատուական աշ-խարհ մեր, իսկ ինքեանք զազգն պլսովին. և ի վե-րայ այսր ամենայնի կեղեքին զոգիս նոցա, և զա-դար բնաւ չտային: Զայսմանէ վկայեն իւիք և նոքին իսկ պատմիչք Յունաց, և մանաւանդ Սկի-ղեացս կիւրապաղատ, յերես 814, ի տող 634, և Զոնարաս, էջ 8 ԾԸ է համարն 8. որ և բազմօք մեղադրեն զՅոյնս և զկայսրն Տուկիծ. զի ասեն, անհոգութեամբ իւրեանց սանակոս թշնամեաց արարին զմեծն Հայաստան և մանաւանդ զաշ-խարհն Վասպուրական, և նուաղեցուցին զազգն իսպառ:» (Ջամչեան Լուսաբոյր պատմ. Հայոց, Բ. 969):

Մ ատնանշելով իմ դիտողութիւնը ևս, յայտնի բան է, զի Կոստ. Տուկիծ Գետադարձի և Խաչատուր Կաթուղիկոսի և այլոց գանձուն կամ դրամից կարօտ չէր, եւ ո՛չ այն աստիճանին հասած էր՝ որ նա իւր պէտքը լրացնելոյ համար՝ անխիղճ ամեն անձէ բռնութեամբ դրամ պահանջելոյ և յափշ-տակելոյ պարտաւորուէր: Թէ Կոստանդնի և թէ Նոյնպիսեայ նպատակն էր և է իւրեանց անձնա-կան կամ մեծադրեալ կալք և կիրքերը յագեցնել չկարողանալով՝ ի փոխարէնն կարելի եղած վը-

Ժամանակի յարմարութիւնն և Հայոց տաղնապալից ներ վիճակը բարեպատեհ առիթ համարուեցաւ Յունաց և Պոստանդնին, ուստի զԿաթուղիկոս ի Պօլիս արդելլով՝ Պոստանդինն դարձաւ մի նոր Յակոբա, և նոր հնարներ մտածելով՝ դարձեալ ամբողջ Հայոց Ազգը յուն ցնելոյ երևակայութեամբ մոլեալ՝ մտածեց մի առ մի Հայոց իշխանքը ի Պօլիս հրաւիրել, և առանց Կաթուղիկոսի գործակցութեան՝ նոցա ձեռամբք իւր կամքը կատարել տալ։ Բայց այս հնարս ևս անյաջող կինայ, և այս բանիս համար ևս յիշատակաց արժանի է գահակալքն Պարսից՝ որ մեծ դեր կատարից և արդիւնաւորեց։

Թէ ի՞նչ էր խնդիրն, ստանոր Ա՛ատթէոս Ուռհայեցի պատմագիրն Թոռ լոսի։

«Յայմ ամի (1060 թ. Փրկչական) Տուկիծ թագաւորն Հոռոմոց և Պատրիարքն և ամենայն կղերիկոսքն, և ամենայն պատք ներքինեացն լծակիցք լեալ կամին չարաշունչ և պիղծ խորհրդոյ անօրէնն թագաւորին, և ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց (Յունաց) ձեռն տուեալ խաւարային խորհրդոյն։ Ա՛սան զի կամէր թագաւորն չար միաբանելոջ իւրովք՝ բառնալ զՀայոց հաւատոյ դաւանութիւնն, և խորհէին եղծանել զհաստատ Սուրբ Լուսաւորչին Պրիգորի, և կամեցաւ զնոսա դիւաբուն և զնաւանաւերն դոր և զթելադատաւոր գհաւատոյն կատարել ի Հայս, և գհաւատան՝ զոր ի վաղ ժամանակաց հետէ ամրացեալ էր ի Հայաստան աշխարհս՝ (ջնջել)։ Ա՛սան զի հիմնարկեալ էր (հաւատն մեր) անդամանդ վիմօք՝ աշխատանօք և մահուամբ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և բազմադիմի և աղգի աղգի չարչարանօք Լուսաւորչին սրբոյն Գրիգորի, որ կայ և մնայ անսասանելի մինչև յաւիտեան։ . . . . Եւ արդ ահա առաքեաց թագաւորն Տուկիծ ի Սեբաստիա քաղաք և կոչեաց զորդիսն թագաւորացն Հայոց զՄոսէ և զՊատրսահլ՝ գալ ի Կոստանդնուպոլիս։ Եւ նոքա ծանեան առ սակաւ մի զչար խորհուրդն, և առեալ ընդ ինքեանս զՅակոբոս Ա՛րդաշէսեան՝ ըստ աւելի անուանն Վարաժնեցի՝ այր գիտնական գրոց բանից, և գնացին ի Կոստանդնուպոլիս. և թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիսն թագաւորացն Հայոց։ Եւ զնոսին սակաւ առուրց սկսաւ յայտնել զչար խորհուրդ մտաց իւրոց, և ասէր թէ՝ հրամանք է թագաւորութեանս մերում, զի դուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին՝ առնուք յանձինս ձեր զինուանք հաւատոյ

բէժիշկութիւն և կախիծ հատուցանելոյ հետ՝ նաև զԿաթուղիկոս միանգամայն զեկեղեցին աղքատացնել ըստ դրամականին և նեղլ լծել։ Սակայն եթէ նիւթականը խլուի, բարոյականը և կրօնականը կինը ինչ կլինի և կարելի է անել՝ քանի որ Հայաստանեայց Եկեղեցի և Ազգ կայ, և նոցա կրօնական և ազգային գիտութիւնք և ուսմունքներն կատարեալ են և ամեն Հայ կսիրէ։ Քաղաքականի կնմանի՝ որ նորա ուժը շատ անգամ միայն և մի մի պրոպ ձեռք կկայանայ, որպէս զի նոքա կարողանայ զօրք պահել, պատերազմական պատրաստութիւնք ունենալ, և իւր գոյութիւնը պահպանել։ Սակայն ինչ որ կրօնականն և բարոյականն կգործէ, տակաւին սակաւք կհասկանան, և նոցա դերազանց ոգեպաղքներն հրաշքներ կարտադրեն։

ազգիս Հռոմոյ։ Եւ յայնժամ նոքա ի մէջ Հռոմոյ անկան ի մեծ տարակուսանք, և ասացին ցԹագաւորն՝ Ծոմն և Պատսահէն. մեք առանց Գագկայ Աշոտոյ որդոյն ոչինչ կարեմք առնել. զի նա այր քաջ է և Թագաւոր և մեր փեսայ, առաքեա և կոչեա զնա այսր. զի եթէ մեք առանց նորա իրք առնեմք՝ հրով այրէ զմեզ ի գաւառն մեր։ Եւ լուեալ Թագաւորն ոչ կամեցաւ զգալն Գագկայ։ Ապա զի այր հզօր էր յիմաստասիրական ջոկան և անյաղթ ի պատասխանիսն. զի նա ի սուրբն Սոփի*) նստեր ի յամբիոնն ընդ աւետեան վարդապետան Հռոմոյ։ Եւ յայնժամ Ծոմ և Պատսահէ զգաստ խնդիր հանին Գագկայ։ . . . . ։ Եւ ի նոյն ժամայն իբրև զարծիւ Թռուցեալ հասանէր Գագիկ ի Կոստանդնուպօլիս. և լուեալ Թագաւորն՝ ուրախ եղև յոյժ. և իբրև մոտաւ առ Թագաւորն՝ հրամայեցաւ բերել զդիր **) միաբանութեանն. և առեալ ընթերցաւ Գագիկ. և իբրև ծանեաւ զգրեալսն Յակոբոսի՝ պատասխաց զնա՝ առաջի Թագաւորին՝ յերկուս ծունկն, և ընկեց զնա յերկիր. և Թագաւորն տես եալ ամաչեաց յոյժ. և ասէր Գագիկ ցԹագաւորն վասն վարդապետին, եթէ ահա սա այր կրօնաւոր է, և այսպիսի բազումք կան յաշխարհն Հռոմոյ՝ որք ոչ ընդունին, և ոչ ոք հնազանդի զրոց սոցա։ Եւ մեք ընդ կատարեալ վարդապետան Հռոմոյ ոչ ունիմք զսա։ Եւ յայնժամ առաջի Թագաւորին յանդիմանեաց զՅակոբոս . . . ։ Եւ զրեաց Գագիկ զիր հաւատոյ ձեռամբ իւրով . . . ։ ,,

Ընդ այսպէս ուրեմն Եկեղեցւոյ և Հայրապետութեան սերտ սիրով ընդ միմեանս անրաժանելի կերպով միաւորուելին կը յաջողի Յունաց կայսր անգամուայ վերջին փորձը ապարդիւն հանելոյ, և սորա համար էր՝ որ Խաչիկ Կաթուղիկոսի վախճանին գինի՝ Յոյնք կաշխատին որ նոր Կաթուղիկոս չընտրուի և չդրուի, որպէս զի Կաթուղիկոսական Աթոռն պարապ մնալով՝ այք Հայրապետութեան հետ կապեալ սերտ միութենէն քակտուին և սառնանան, և ի Հռոմէութիւն դիմեն՝ ինչպէս որ Ներսէս Շնորհալի և իւր աշխատասիրած ոտանաւոր պատմական վիպասանութեան մէջ պարզապէս կ՚իշէ. սակայն Թշուառքն չէին յիշեր կամ այնքան բթամիտ էին՝ զի Հայրապետական պաշտօնը վարելոյ համար զոմն ընտրել չթողլով՝ անշուշտ կկարծէին և կերևակայէին ջնջել զՀայրապետութիւն Հայոց, մինչդեռ առանց ջնջելոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ գոյութիւնը՝ անհնար է զՀայրապետութիւն և զԵկեղեցական Սուրբ Հայրապետութիւն ջնջել՝ որք ի միմեանց անբաժանելի են. և եթէ այս ինչ քաղաքի մէջ բանադատութեանց և հարստահարութեանց ենթարկուին, այն ինչ քաղաքի մէջ տեղափոխուելով և ազատութիւն գտանելով՝ կարող են միև նոյնը շարունակել՝ ինչպէս որ բազմից եղած է, և այս անգամ ևս եղաւ ի Կաթուղիկոսութիւն ընտրելով Վահրամ—Գրիգոր վկայասերը. որով դիւրին է իմանալ՝ զի ոչ տէրն և ոչ անձն է պաշտպանեալն, այլ Հայրապե-

---

(*) Կ. Պոլսոյ Ս. Սոփիոյ Եկեղեցւոյն համար է։

(**) Քարոզիննդի կամ Սանահնեցի Յակոբ Վարդապետին գրածն է՝ զոր Տաճիճ հրատարած է։

տութիւնն հանդերձ իշխանութեամբ և իրաւասութեամբքն ի պէտս Ազգի՝ և Եկեղեցւոյ և նոցա գոյութիւնքը ապահովելոյ համար։

Ինչ և իցէ։ Յունական բազմադարեայ ասելութեան արգասիքներն և պատճառներն այնքան շատ են՝ որ զրելով և պատմելով մեծ հատորներ կկազմուին, և տակաւին ինչ ինչ դաւաճանութիւնքը և նենգամիտ ջանքերը հետզհետէ պիտի տեսնուին այս հակիրճ յօդուածոյս մէջ *)։

Գրիգոր Վկայասէր Կաթուղիկոս — թէպէտ ազատ ծնաց Գնտադարձի և խոչէկ Ր. Կաթուղիկոսի ի Յունաց կրած չարաչար տառապանքներէն, մանաւանդ նորա օրով՝ Յոյնք սկսած էին առ մեզ հաստուցած վանդներէն թուլանալոյ՝ օրըստ օրէ պատճառներ ևս ունէին, և չնայելով որ Յունական և Պարսկական իշխանութեանց ըստ քաղաքականին գործած աշխարհակործան աւերմունքներն ևս կը շարունակուէին, — մի քանի եկեղեցական բարեկարգութիւններ անելէ զկնի՝ միշտ գրաւոր թարգմանութեանց պարապելէ սիրելով և կամենալով, նա և չկարողանալով Ազգի տառապանաց դարման տանել և կամ ժուժկալ, կիսորհի ի կաթուղիկոսութենէ հրաժարելոյ, և կյաջողի ի տեղի իւր Կաթուղիկոս զԳէորգ Լուսաւորչին օծելոյ, և երբեմն այլոց ևս կաթուղիկոսութիւն տալով՝ Վկայասէրն մի չար սկզբունք և օրինակ կընծայէ ապագային, և գրեթէ այն ժամանակէն սկսեալ և իբրև օրինաւորապէս կյառաջանայ այն չարիքը՝ որ փոխանակ միոյ Կաթուղիկոսի՝ հետզհետէ մի քանի Կաթուղիկոսներ կընէին, և Եկեղեցւոյ Նուիրապետական մեծ և վսեմ կապի մէջ մի մեծ զեղծմունք և խանգարմունք կմտնէ և կշարունակուի ի միաս Եկեղեցւոյ, որոյ չարիքները ցայսօր կտեսնուին և պիտի տեսնուին Ազգի մէջ՝ մինչև որ իսպառ նոյնպիսիքն բարձուին և ջնջուին։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

(*) Ցոյնք աւելի առելի նզած էին Հայոց վասն զի նոքա իրրև էրէտոնէայ և Եկեղեցւոյ համ կրօնական սէր և միաբանին քարոզելով, և պատրաստակեղծ իւրեանց նեղքին նպատակ և ձգտումները, քաղաքական իշխանութիւնն մի կողմէն, և կրօնականն միւս կողմէն մեծ վտանգներ բերին և բազում չարիք հասուցին Հայոց Եկեղեցւոյ և Ազգի վերայ։ Եւ երկար ժամանակներ նա և ուսումն և գիտութիւնք նոցա մէջ ծաղկեալ գտնուին ամենք ի մենք կիրթացին ի Յունաստան աւելի գիտութիւնները ուսանելոյ համար, և երբեմն խըմորուած կգային և միտքնին կկանգնէին, և միամտութեամբ չափազանց համակրութիւն առ Ցոյնս կցուցանէին՝ ի նոյն զԱզգն ևս յոլորել ջանալով։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԳՈՂԱՏԻՒ

Ա. — ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ ՍԻՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ։

Կաթուղիկէ Եկեղեցի կոչեցաւ առաջին Եկեղեցին Վաղարշապատայ՝ ի հիւրեհարեակն սրբոյն Գրիգորի տեսիլը յայտարերու ժամանակին, «Ոսկի խարիսխան վէմն հաստատութեան անշարժութիւնն

է. և սիւնն հրեղէն կաթուղիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի միաբանութիւն հաւատոյ ի ներքոյ թեւոց,,։ (Ագաթանգեղոս, թուղթ 31.Ր)։

Ըյս անուանակոչութիւնը վ.ազարշապատայ Մայր Եկեղեցւոյն կ'տան և առհասարակ մեր ազգի մատենագիրք հրեշտակի այս բացատրութենէն առնլով, որպէս Խորենացին (ՀԳ. գիրս, գլ. Ծ. 60.) ''Թողեալ խարսխեաց, ասէ, (մեծն Սահակ պԱեսրովբ) յԵկեղեցւոջն կաթուղիկէի, որ ի վ.ազարշապատ քաղաքի,,։

Եւ վասն զի՝ ''Ընթոռ Վահանայապետութեան Հայոց,, այս կաթուղիկէ Եկեղեցին եղաւ, ուր զառաջինն կաթուղիկոս նստաւ սուրբն Գրիգոր, նորա համար և մեր պատմաբանք Մայր Եկեղեցի կ'անուանեն զսա իբրև Գլուխ ընդհանուր Եկեղեցւոց Հայաստանի, ինչպէս դարձեալ Խորենացին Ընտարհգբութեան մէջ, ''Մայր Եկեղեցւոց, ասէ, ի Թագաւորաբնակ և յարքայանիստ վ.ազարշապատ քաղաքի,,։ Եւ Յովհաննէս կաթուղիկոս, ''Մինճ Հայրապետան Հայոց Խաբգէն առնէ ժողով Եպիսկոպոսաց ի նոր քաղաքի, ի սուրբ կաթուղիկէ, ի Մայրն Եկեղեցւոց Հայոց,,։

Խայց յետոյ այս կաթուղիկէ Եկեղեցին ի յետագային կոչեցաւ սուրբ Էջմիածին առնլը յարմարութեամբ ի խորհուրդ տեսլեան սրբոյն Գրիգորի, ''Տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ, որ զառաջսըն ունէր և զեղն ի վերուստ մինչ ի խոնարհ։ Օ.այս կերպարան մարդոյ, կը վիպէ Ագաթանգեղոս, հրեշտակին մեկնեաց ի խորհուրդ տեսչութեանն Աստուծոյ. իսկ այս ահաւոր և շքեղաւոր, որ զառաջն ունի զլուսոյն և զոսկի ուռն ի ձեռին, և բախեաց զանդարամեաս, այս տեսչութիւնն Աստուծոյ է,,. (ի թուղթն 31.Ր։) Իսկ այս տեսչութիւն Աստուծոյ վերագրեցինն նոյնպէս յետագային՝ իջմեան Միածին Բանին Հօր. այս մեքով յօրինուած է շարականն ''Էջ միածինն ի Հօրէ և ընծ։ Սորանից ատա կաթուղիկէ Եկեղեցին վ.ազարշապատայ կոչուեց Էջմիածին իբրև անուն սեպհական։

Կոչեցին և Հ.ողակաթ դարձեալնոյն տեսիլքն առնլով. ''Միւն գործեաց լոյսն շողացեալ, ասէ Ագաթանգեղոս ի թուղթն 31., և ծագեաց ի մէջ ներքին սեանցն խարսխաց,,՝ ինչպէս հին Տօնացոյցն՝ ուր դնի, ''Տօն է շողակաթին ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի,,. և Ասողիկ. ''Օ.վիրկան նշանն որ ի վերայ սրբոյ Հ.ողակաթի գմբէթին կանդնեալ էր, ճոպանօք ի վայր բերէր (Ըլհամ Ամիրայն) ի նվ.Ը թուին,,։

Մայր Եկեղեցւոյ այսքան անուանակոչութենէն՝ մեք մեր այս Աստրագրութեան մէջ առաջին անունն ի դործ դնելով կընքեալ ի հրեշտակէն, այն է կաթուղիկէ Եկեղեցի, նորա տեղը կը գտնեմք վ.ազարշապատայ քաղաքամիջին ''մօտ յապարանս արքունի,, ըստ Լ.ուսաւորչին տեսլեան. ''Եւ տեսանեմ ի մէջ քաղաքիս մօտ յապարանս արքունի խարսխաձև ճախարակաձև խարիսխ ոսկի . . . և տեղն այն, ասէ, լեցի սաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, և Ընթոռ Վահանայապետութեան,,։ (Ագաթ. թղթ. 31.Գ)։

Ա՛յս տեղ, ուր բախեաց մարդն ահաւոր ոսկի ուռամբ զԹանձրուքիւն լայնատարած գետնոյն, և ուր հրեշտակն ասաց սրբոյն Գրիգորի, ‘‘Շ՛ինեսջիր զտաճար անուանն Աստուծոյ ի տեղւոջն՝ ուր քեզ ցուցաւ,, (ի Թղթին. 31.)։ սուրբն Գրիգոր Թագաւորի և ժողովրդոց հետ բարձր քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ, և գոնով և գոնափակով ամրացնելով, կանգնեց անդ նշան Տէրունական խաչին, որ ամենայն աք գալով այն տեղ, ամենայն ոք Երապչին Աստուծոյ երկրպագեալ ծունր կրկնեն. ուր և յետոյ սուրբն Գրիգոր Կեսարիա Եպիսկոպոս ձեռնադրեցէն հաքը շինեաց ‘‘զնկատեալ տեղի տանն Աստուծոյ զցուցեալն նմա ի տեսլեան, զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զԵկեղեցին Աստուծոյ*), սրբոյն Տրդատայ Թագաւորութեան հնգետասաներորդ տարին, յամս Տեառն 301—303 և նորա մկրտութենէն ու սուրբ Հռեսարանը ընդունելէն հաքը բոլոր բանակի և ժողովրդոց հետ։

Եւ ինչպէս յայտնի է, սուրբ Լուսաւորիչն Գրիգոր այս Եկեղեցւոյ մէջ յարեւելս կանգնեց մի սեղան սրբազան խորհրդոյ և օծեց զայն սուրբ Աստուածածնի անուամբ, ուր կարգելով նմա Օգոստոս ամսոյ մէջ վերափոխման շաբաթ օրը, այս է որ մեր Եկեղեցւոյ հին Տօնացուցի մէջ, ինչպէս որ վերը դրինք, նախնիք դրել են ‘‘Շ՛աբաթ ուն է Շ՛ողակաթին տեսլեան սրբոյն Գրիգորի,,. ուսոի և յետագայ պատմագիրք մեր կը կոչեն ‘‘Շ՛ողակաթ Աստուածածնին,,։

Ըստ այսմ այս կաթուղիկէ Եկեղեցի եղաւ տեղի և Ընթռւմեծ Քահանայապետութեան Ա՛յոց և հոգևոր իշխանութեան Գրիգոր Լուսաւորչին և անմիջապէս յաջորդաց մինչև Ա՛յրապետական Ընթռւոյ Գվին փոխադրութիւը, ըստ քաղաքական հանգամանաց ազգիս, ուր սուրբ Լուսաւորչէն մինչև Մէլիտէ՝ նստան տաննըկու կաթուղիկոսունք՝ Փրկչական 303 Թուականէն մինչև.... ըստ որոյ և հաւաստի է Թէ՝ և մեծաստանն սուրբ Լուսաւորչէն սկսաւ. զոր ազգային պատմիչք Տուն կաթուղիկոսարանի կ՛անուանեն։

Ուրացեալն Մեհրուժան երբ որ Վաղարշապատը կ՛աւերեր իւր յարձակման ժամանակը յամին 380, աւերեց և կաթուղիկէ Եկեղեցի քաղաքին՝ Ընթռն Ա՛յրապետական. որոյ համար Սերէոս Եպիսկոպոս պատմիչ՝ սոյն կաթուղիկէ Եկեղեցին Վահանայ նորոգութեան ժամանակին, որոշակի կ՛գրէ և այս, Թէ Պարսից զօրքը Մեհրուժանայ առաջնորդութեամբ աւերեցին և կաթուղիկէ Եկեղեցին ըստ այսմ. ‘‘Ա՛յս Վահան, ասէ, (Մամիկոնեան) ժողովեաց և զհարկս աշխարհիս Ա՛յոց (զոր տային յալքունիս) և շինեաց զԵկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի, և ի Դվնի և ի Մզբայս . . . ,,։

Նայց ինչպէս կ՛երևի Վաղար Փարպեցւոյ Թղթէն առ Վահան տէրն Մամիկոնէից՝ զոր յառաջ պիտի բերեմք յետոյ, Վահանայ նախնիքը նորոգած պիտի լի-

(*) Ըստ ազգային աւանդութեան, աստ կանգնեց նոյ սեղան, և մատոյց Աստուծոյ իր գոհութեան պատարագը. ուր յետոյ կառապետութեան ժամանակ կայր Արտեմիս կուռք, յորմէ և կոչէր Արտիմետ քաղաք ըստ Խորենացւոյն։

նին կաթուղիկէ Եկեղեցին Վ. աղաղչապատ Պարսից Հայաստան յարձակուած ժամանակին Պապայ Թագաւորելէն ետքը՝ Մեհրուժանայ աւերմունքէն զրեթէ հարիւր տարի յետոյ, և Վ. Ահանայ նորոգութենէն յառաջ։

Փրկչական 452 թուին երբ որ Հայրապետական Աթոռն Վաղարշապատէն փոխադրուեց ի Դվին Մեծիտէ կաթուղիկոսի Հայրապետութեան առաջին տարին, ատ ի կաթուղիկէ Եկեղեցին կարգուեց միաբանութիւն հոգևոր Ուխտի ի փառաբանութիւն Աստուածոյ. որոց հոգ և խնամք կը տանէին Հայրապետք ի Դվինայ, ինչպէս կը յայտնէ Ստեփաննոս Օրբէլեան ի դիմաց կաթուղիկէի գրած ողբի մէջ։ Ըստ այսմ. «Նայց անտի (ի Դվինայ) ատ (ի Վաղարշապատ) զիս խնամէին (կաթողիկոսունք)։

Նայց ուրիշ պատմագիրներէ, Վաղար Փարպեցին իսկ կ'վկայէ առ Վ. Ահան գրած թղթի մէջ՝ որ ամենէն յառաջ է, թէ Աթոռը Դվին փոխադրուելէն ետքը՝ Վաղարշապատայ կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ կարգեցաւ «միաբանութիւն աղօթաւոր անձանց պարեգօտաւորաց», որոց գլխաւոր կարգեց Վ. Ահան զնա ինքն Վաղար. ուստի ոչ միայն կաթուղիկէ Եկեղեցւոյ վերայ Հայրապետք խնամք ունէին, այլ և իշխանք նախարարազունք և սպարապետք. յորոց Վ. Ահան Մամիկոնեան՝ որ Հայոց զօրավարն էր այս ժամանակին, Պարսից զօրացը յաղթելէն ետքը՝ նախարարաց բազմութեամբ եկաւ ի Վաղարշապատ յամի 483, ուր կաթուղիկէ Եկեղեցւոյ մէջ գոհութիւն մատուցանելով արած յաղթութեան համար, նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ «զհնացեալ գործ նախնեացն իւրոց», զկաթուղիկէ Եկեղեցին յերեսաց աւերանացն Մեհրուժանայ և հնութեան ժամանակին յամին 506, որպէս ասէ Վաղար ի պատմութեան, 273, և շինեց մեհեանան կրօնաւորաց համար. որոց և վերակացու կարգեց զՎաղար. որոյ համար գրէ և Ասողիկ, «Յակ Վահան (Մամիկոնեան) զԵկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեշէն զաշխարհս առնելով, նոյն և ի ժամանակս իշխանութեան իւրոյ՝ զմեծն կաթուղիկէ Եկեղեցին որ ի Հայս, վերստին մեծապէս նորոգեաց, զդասս կրօնաւորաց բազմացուցանելով»։

Այլ թէ և Վաղարայ վերակացութենէն յառաջ ի կաթուղիկէ Եկեղեցին՝ կը խնամէին զոյն իշխանք և նախարարք մեր և վերակացու ևս կարգած էին անդ Վահանայ նորոգութենէն ևս յառաջ, յայտնապէս կը տեսնուի Վաղարայ թղթի մէջը առ Վահան. որ երբ վերակացութենէն հանուեց, այսպէս բողոք կը գրէ նրան. «Եւ կամաւ ևս խորհիցիս զյիշեցդ առնել պատգամն երանելոյն Յովհաննու՝ Վիւտայ կաթուղիկոսի եղբօր որդւոյն քեզ Տեառն ի Սիւնեաց դրախտին. յոմանց արանց իրք խոստանալով քեզ տեառն կարասի՝ խնդրէին զտեղիդ (կաթուղիկէ Եկեղեցին)... և ընդ Տեառն Յովհաննայ զայրացար թէ բնաւ իրրև քեզ առն ոչ լսել... և ես վասն դի տկարամիտ և անղգուշացող այր եմ յերկրաւոր միոյ, ոչ զգացի առ ժամայն դաւոյն. այլ պարտ էր փութով և երագ երագ անկանիլ ի յոտսդ արտասուօք և աղաչելով ի բաց

վախչել ի հոգաբարձութենէ տեղւոյն,,։ (Ի թուղթն առ Վ֊ահան Տէրն Մամիկոնէից, տիպ Մոսկուայի)։

Սորանից յայտնի է թէ յառաջ ևս կաթուղիկէ Եկեղեցում կային կրօնաւորք, որոց վերակացու էր Պ֊ազարէն յառաջ Երանելի ասացեալն Յովհան, և այնքան նախանձելի էր միաբանից բարգաւաճեալ վիճակը, մինչև շատերը կ'զչարէին Պ֊ազարայ վերակացութեանը, և կը֊ջանային նորա ձեռքիցը յափշտակել զայն իրք խոստանալով Վ֊ահանայ Պ֊ազարը արտաքսելու համար. սորանով կարող եմք ապացուցանել թէ Հայրապետական Ընթոռը ի Դվին փոխադրուելէն ետքը, Պ֊ազարշապատայ Եկեղեցում կայր Ուխտ միաբանութեան վերատեսչութեամբ գլխաւորաց՝ մանաւանդ թէ Հայրապետատայ, որոնք կ'յիշուին Պ֊ազարու թղթի մէջը՝ մինչև նա ինքն Պ֊ազար՝ որ Վ֊ահանայ հրամանաւ կարգուեցաւ վերակացու։

Պ֊ազարու այս թղթի յառաջաբանէն դիտեմք, որ Վ֊ազարշապատայ Կաթուղիկէ Եկեղեցին փայտաշէն էր Պ֊ազարու վերակացութեան օրով, որոյ ժամանակ փայտակերտ Եկեղեցին հրով վնասուելով ,,ի վայրաբար մարդկանէ,, ինչպէս կը վկայէ թուղթը, այս պատճառաւ գնաց Պ֊ազար ի կողմանս Յունաց Յունաց Յ֊Ամիթ քաղաք (Տիարպէքիր), ուր տեսնելով որ չարանախանձ մարդիկ սուտ բաներ կը շատացնեն Կաթուղիկէ Եկեղեցւոյ և իւր ուսման համար, գրեց այն տեղից յիշեալ թուղթը առ Վ֊ահան։

Ընդ մասին յառաջաբանի գրուածը*), ,,կամեցեալ մեծի իմաստութեանն Վ֊ահանայ Մարզպանի Օ֊օրավարին Հայոց տեառն Մամիկոնէից զնա (զՊ֊ազար) իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել, շնորհէր նմա զհոյակապ և զգանաւոր տեղին ի Նոր քաղաքի, որում անուն էր սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի վանօքն. և նորա ընկալեալ զբանն Մարզպանին, խնամածէր զտեղին. պատահեաց նմա կրել տրտմութիւն ի վայրաբար մարդկանէ. զի ի հրոյ վնասեալ փայտակերտ Եկեղեցւոյն . . . (աստ պակասի մի թուղթ, որպէս դնի յօրինակին.) յայսմանէ կամ եղև նմա գնալ ի կողմանս Յունաց. հասանէր Յ֊Ամիթ քաղաք. և անդ առ ժամանակ մի զտեղն առնոյր,, (եր. 37)։

(Շարունակելի)

ԱԲԵՂ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ԸՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉԸՆԿԻՐՔ· ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՑԻՈՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ·

(Շարունակութիւն)։

Ալեքսիս՝ կողակից Բօէմոնդի՝ զկնի մահուան հօր իւրոյ վերադառնալով յԱնտիոք ծեռնտուութեամբ Պօնի իշխանին Տրապօլսոյ եւ ձոսլին Բ֊ի իշխանին Եդեսիոյ (սա մի խռովարար եւ ցոփ մէկն էր) բուռն արկաւ վերատին իւր փառասիրական խորհրդին։ Ցուլք խաղաց նորա դէմ ու հաստատեց մի փոխա-

(*) Պ֊ազարայ թղթի յառաջաբանութիւնը իւր հեղինակութիւնը չէ՛ այլ ուրիշ իրեն ժամանակակից մարդու, ինչպէս կերևի։

նորդ Յ.Նտիոք. ապա տրամադրութեամբ սեպհաց Կոստանսիայի ծերը տուաւ Բայմոնդին, որ էր երկրորդ որդի Գիլլօսի կոմսի Կիլէնի *) : Բայց վինչդեռ կորնէլին երիտասարդ իշխանին Յ.Նդղիա՝ պօն Տրապօլոյ կոմսն սպանուելով ի Տաճկաց, Թողեց իւրեան յաջորդ իւր որդի Բայմօնդն: Ալեքսիս ծժանդակութեամբ իւր քեռ դշխոյին Մէլիսանդի, որ կը Թագաւորէր յԵրուսաղէմ Ֆուլքի փոխանակ՝ ծեռ ձգեց Ա.Նտիոքայ կառավարութիւնն: Րօջէի պատրիարքն զնա գրկելու դիտաւորութեամբ հաւատացրաւ Նորան որ Բայմօնդ աւելի նախամեծար համարելու է իրեն քան իւր դուստրը, պատճառ որ՝ դեռ չէր հասած յարբունս. սակայն հազիւ Թէ իշխանն եկաւ Յ.Նտիոք 1136ին, պատրիարքն պսակելով Բայմօնդին ընդ Կոստանսիայի, տուաւ նմա կոմսութիւնն ի ժառանգութիւն՝ որպէս վճռակ պատրիարքական Եկեղեցւոյ:

Ալեքսի կայսրն դեռ հրաժարական չէր տուած իւր Ա.Նտիոքայ կոմսութեան վերայ ունեցած իշխանութիւնից Ռայմօն Թիլի երդման առթիւ, իւր որդի Յովհաննէս Կոմնենոս 1137ին մտադիր եղեւ զինու զօրութեամբ հաստատել իւր իրաւունքն, որ կը ժխտէին: Գալով ի Կիլիկիա հալածեց անտի ի Տարսոն եղած Բայմօնդի զօրքն եւ մտաւ Լեւոնի տէրութեան մէջ. Լեւոն չկարօղանալով դէմ դնել կայսեր, պատճառ որ՝ անմիաբանութիւնն ի ներքս էր սպրդել, ամրացաւ յանառիկ վայրս. կպսրը յաւաջ խաղալով տիրեց Միսիսի, Տարսոնի, Ա.տանայի, հուսկ յետոյ առնելով Անարզաբա եւ Վահկայ, երկու կողմից էլ մօտ բիւր անծինք կոտորուեցան: Ի վերջոյ Լեւոն տեսանելով իւր երկրի Թշուառութիւնն՝ անձնատուր եղեւ կայսեր 1137-ին իւր որդւոց Թորոսի եւ Ռուբենի հետ ի միասին. այս եղեւ ի Թուականութեան Հայոց ՇՀԶ. Լեւոն զրաւեցաւ ի կենաց ի տանջանս 1141-ին. իսկ պատանին եւ անմեղ նահատակն Ռուբէն իւր երկարդկային ուժի պատճառաւ զրկուեցաւ յաչաց եւ սպանուեցաւ: Վերոյիշեալ քաղաքքը առնելէն զկնի կայսրն եկաւ եւ պաշարեց զՅ.Նտիոք: Ֆուլք մտածեց առաջ փրկել Տրապօլոյ կոմսութիւնն, որ Չէնկին պաշարել էր: Բայց Ա.Թաբէկը խորտակելով նորա բոլոր զօրութիւնքն պաշարեց զՄօնֆէրրանդ, ուր ապաստանեալ էր Թագաւորն: Համայն քրիստոնեայք Պաղեստինոյ աճապարեցին ի փրկութիւն իւրեանց արքայի. բայց շատ անադա՛ն . . . առատածեռն Չէնկի արդէն մի պատուական դաշն էր կապել ընդ Ֆուլքի, որ վերադարձաւ յԵրուսաղէմ:

Բայմօնդ հնազանդեց ու խոստացաւ վերանորոգել արեւելեան կայսրութեան Ա.Նտիոքայ մասին եղած որոշումն, երբ Յովհաննէս ի ժառանգութիւն Թողէր իւրեան որպէս վճակ կայսրութեան ղՀալէպ, զկեսարիա, զԵմեսս, զՀամա, զոր մտադիր էր առնել Լատին զօրաց օգնականութեամբ: Յայնժամ եւ Յունական զօրքն ծներեց ի Կիլիկիա:

Ի 1138 ամի 4 ապրիլի վերադառնալով մտաւ ի Սիրիա ու առաւ զՌուգաա, Կեսարիա եւ այլն. ապա զալով Յ.Նտիոք պահանջեց, որ անվիջապէս յանձնեն իւրեան այդ քաղաքը: Ա.յդ միջոցին Չէնկի ետ առաւ ինչ որ կորուսեալ էր: Ջոսլին Բ. փրկեց զՐայմօնդ այն վարանմունքից, զոր առթեալ էր նմա կայսեր պահանջմունքն. մի այնպէս աղմուկ եւ շփոթ հանեց, որ կոմնենոս զարհուրելով անվիջապէս հրաժարեց եւ վերադարձաւ ի Կ. Պօլիս:

Եւ քանզի այդ միջոցում Կիլիկիոյ վերայ յարձակեցաւ Ահմէտ — Մէլիք Ղազիի՝ որ առեալ էր ի Ցունաց Վահկայ, Կապան եւլն, ուստի առաջին ուղեւորութենէն չորս ամ զկնի վերստին եկաւ Յովհաննէս Կոմնենոս Կիլիկիոյ գործոց կարդադրութիւն դնելու պատրուակաւ, ու կրկնեց իւր պահանջմունքն Ա.նտիոքայ մասին: Ա.յլ Թէեւ պատրաստվում էր գալոց գարնան շարժել իւր զօրութիւնքն, բայց վիրաւորուելով յորսս վարազուց անբժշկելի կերպիւ՝ մեռաւ 1142-ին:

— Կայսեր այդ երկրորդ արշաւանաց միջոցին Լեւոնի որդի Թորոս, որ ի դիպահոջս կար՝ խոյս տալով Կ. Պօլսից հասաւ ի Կիլիկիա, եւ ծանօթացնելով զինքն Հայոց մի քահանայի միջոցաւ՝ ուրախութեամբ ընդունուեց ազգից. ապա ճեպով զօրք դումարելով յարձակմամբ առաւ Վահկայ, Միսիս, Ա.տանա, Թիլ, Անարզաբա, Ա.մուՃ քաղաքքն. եւ հալածելով Յոյնքը իւր եղբարց Ստեփանէի եւ Մլեհի օգնականութեամբ, որք դառնալով յեդեսիոյ, այս քաղաքիս առմանէն զկնի վառեցան ի նախանձ վրիժոյ մահուան իւրեանց հօր եւ եղբօր. եւ Յոյնքը վտնելով ի վերոյիշեալ քաղաքաց վերստին հաստատեցին Հայաստանի անկախութիւնն 1144-ին:

(*) Տես. գլուխ Բ:

Պրովէն Գ. Հինգերորդ Թագաւոր Երուսաղէմայ:

Ա.յդ իսկ Յունականում մեռաւ նաեւ Ֆուլք որսի մէջ, ուր իւր երիվարը անկանելով ջախջախուեց ինքն ալ ուղիսը: Ա.րդէն շատ ժամանակ էր, որ Մելիսանդ իւր կինն ի տեղի իւր կիշխէր: Իր մահուանէն զկնի յանձն առաւ իւր որդւոյ Պրովէնց Գ.ի խնամակալութիւնն, որ դեռ երեքտասանամեայ էր: Յաւաջնում սակի Թագաւորութեան սոյն իշխանիս, այս ինքն ի 1144 Յէնկի պաշարելով զնդեսիա՝ 28 օրէն զկնի առաւ. այս քաղաքս, որ էր սպասնէշ Երուսաղեմայ Թագաւորութեան, մնացեալ էր անպաշտպան անխոհեմ ձռսլինից, որ կը զուարճանար ի Թէլպաշիր: Ա.յս պատահարքս հրատարակուեցաւ յարաբական բանաստեղծաց որպէս յաղթութիւն իսլամութեան ի վերայ քրիստոնէութեան: Զկնի երկուց ամաց ի 1146 Յէնկի սպանուեց մի սարկի ծեռամբ. ի տարապարտուց քրիստոնեայք ուրախութիւն զգեցան նորա մահուան վերայ. քանզի իւր երկու որդիքը բաժանեցին տէրութիւնն. Ակյճուդդին անդրանիկն ժառանգեց Մուսուլի աթաբէկութիւնն, իսկ կրտսերն Նուրդդին, որ կը պերազանցէր առաքինութեամբ եւ հանճարով՝ իւր հօրից ունեցաւ Հալէպի իշխանութիւնն: Ձոսլին Բ. իշխան Եդեսիոյ 1146-ին յանկարծուստ առաւ զԵդեսիա, բայց Նուրդդին զկնի վեց աւուրց վերստին տիրեց եւ կործանեց զայն ի հիմանց, յաղարտ վարելով 16,000 անձինք *):

ԳԼ. ՁՈՐՈՐԴ

Երկրորդ Խաչակո–ին է 1147.

Գոյժ առաւն Եդեսիոյ, որ վաղ կամ անագան պիտի հետեւէր եւ Երուսաղէմինն՝ արհաւիրք սփռեց ի համայն Եւրոպա, եւ ազդեց ի նոսա աւիւն զնալ յերկիրն Սուրբ: Ս. Բէրնարդոսի **) այն ժամանակուայ ամենահռչակաւոր կղերի քարոզութիւնն տարածեց ամենի վերայ մի աստուածեղէն ազդեցութիւն:

Երուսաղեմայ արքայի եւ սեպհաց առ իւրեանց Եւրոպացնակ բարեկամաց նամակքն գրգռեցին Գաղղիացի ասպետքը գնալ յօգնութիւն Սուրբ Երկրին ըստ նմանութեան հարց իւրեանց: Ի Գաղղիա յայնժամ կը թագաւորէր Լուի Է. երիտասարդն: Ա.յս իշխանս իւր խղճմտանքը բեռնաւորեալ էր մի եղեռնական ոճրով: Իւր հպատակ Շամբայնի կոմսի հետ մարտնչելով եւ առնելով Վիտրի քաղաքն կրակել տուաւ այդ քաղաքի եկեղեցին, ուր աւելի քան զ1300 անձինս, որք ապաստանեալ էին անդ՝ հրոյ ճարակ եղեն: Երիտասարդ թագաւորն ի քառութիւն իւր մեղաց երդուեց ի 1146ին գնալ յերկիրն Սուրբ: Թէեւ իւր ներհուն նախարար Սիւճերն նկրտեց արգելուլ այդ ճանապարհորդութիւնը, սակայն արքայն խորհրդակցել ցանկացաւ ընդ սրբոյն Բէրնարի, որ յայտնեց Թէ առանց Եւգինէս Գ. Պապի ոչինչ չէր կարող վճռել. Պապը հաճելով եւ հաւանութիւն տալով ի 1146-ին մի ժողով գումարուեց, որին կպորդ էին եւ աղնուականք ի Բուրգոյն. այս ժողովս առաջինն է, որոյ գաղղիական մատենագիրք պարտաւէնթ անունն կըտան: Խիստ մեծ եղեւ հանդիսականաց բազմութիւնն. Ս. Բէրնար Թագաւորի աջ կողմում մի ամպիոնի վերայ բազմած այնպիսի եռանդով ճառեց, որ ներկայ գտանուողք ցանկացան առ ժամայն ձեռնարկել այդ ուղեւորութեանդ: Ս. Բէրնար, իւր հետ բերած խաչերն չքաւականանալով, պատառեց իւր լօգկի մի մասն եւ բաժանեց. արքայն ի ծունր չոքեալ ընդունեց իւր խաչն, որ Պապն էր ուղարկեալ: Ըստ օրինակի վեհապետին՝ Թագուհին, Բօքէր Լուի Է. ի եղբայրն, Ալֆօնս Թուլուզի կոմսն, Տիէրի Ալսազեցի կոմս Ֆլանդրիոյ, Նըվերի, Սուասսոնի, Վարէնի կոմսքն եւ յոլով իշխանք խաչակրուեցան:

Ա.յդ ազդեցութիւնդ տարածուեց եւ բոլոր Գաղղիոյ մէջ. Ս. Բէրնար պրեց Պապին — «Ա.մենասուրբ հայր, դուք հրամայեցիք եւ ես հնազանդեցայ. մեր

(*) Եդեսիոյ առման վերայ այն ժամանակուայ Գրիգոր Պահլաւունեայ Հայոց հայրապետի եղբայր Ներսէս Շնորհալին գրեց դիմառնութեամբ մի բանաստեղծութիւն ողբերգական եւ սրտաշարժ նկարագրութեամբ: Նոյնպէս Գրիգոր ժամանակակից քահանայն խօսելով Եդեսիոյ վերայ առած է մի տեղ, «Զանգի տեսանելով այնչափ մարդկանց կոտորածն շարժեցաւ ի գութ եւ արգել իւր սուրն ի կոտորմանէ»: Յաւե. Թարգ:

(**) Ս. Բէրնար հիմնիչ հռչակաւոր միաբանութեան Բէրնարդեան, ծնաւ յամի 1091 Ֆօնթէն գիւղում որ ի Բուրգոյն աղնիւ ընտանիքից: Փարիզու այն ժամանակուայ համալսարանում, որոյ մէջ

Եւրոպիոյ ամենանշանաւոր ուսուցիչքն կը գտանուէին, մի քանի ժամանակ իւր անունն հռչակելէն զկնի առանձնացաւ միայնակեաց կեանք վարելու. անդ եւս շուտով հռչակուեց իւր սրբութեան անունն. յամենայն կողմանց կը վազէին խորհուրդ հարցանել ի նմանէ, որպէս եւ 1130-ին Գաղղիոյ վեհապետ Լուի Գէրն դասաւոր անուանեց նորան վճռել Անակլէ եւ Ինոսան պապերի դատը: Անաի գալով ի Միլան ժողովուրդը եւ կղերն առաջաբկեցին իւրեանց արքեպիսկոպոսութեան գահն, բայց նա մերժեց:

իշխանութիւնն օրհնեց իմ հնազանդութիւնն. քաղաքք եւ աւանք կամայանան, ամենուրեք տեսանելի որբեւայրիք, որոց ամուսինքն կենդանի են»: Բնաւիւք յարակայելով ի կարծիս Թէ ծառնարկութեան յաջողութիւնն Ս. Բէրնարդից է կախեալ, առաջարկեցին նմա զօրաց հրամանատարութիւնն. բայց նա աւելի իմաստուն քան զՊետրոս Անապատականն՝ մերժեց:

*Եթէ Լուի Է. սխալուեց խաչակրութեամբ, ապա քանի՞ն մեծ եղեւ Կոնրադ Գ. *) Գերմանիոյ Թագաւորի սխալն, որ այնքան զօրք ունէր կատարելու ի Պերմանիա: Վասն այդր պատճառի սկզբում սակաւ համակրութիւն յայտնեց Ֆրանսայի Թագաւորի ծառնարկութեան: Ս. Բէրնար մի շրջաբերական Թուղթ էր առաքել Գերմանիոյ պետութեանց, կամենալով ներշնչել ի նոսա մի եւ նոյն ազդեցութիւնն, որով լցուցեալ էր բոլոր Գաղղիա. իւր ճիգերն անարդիւնք*

(*) Լօթերիոսի մահուանէն ղկնի ընտրեցաւ կայսր Գերմանիոյ Կոնրադ դուքս Ֆրանքոնիոյ. սա է Հոհէնստօֆէնի հարստութեան (որ տեւեց մինչ ի 1254) առաջին Թագաւորն: Իւր ընտրութիւնն տեղի ունեցաւ յԷքսլաշաբէլ 1138ին. ի կայսրութեան Կոնրադի Հռովմայ քաղաքի բնակիչք կամենալով վերականգնել իրեանց տէրութեան նախկին փառն, հաստատեցին Հանրապետութիւն, Ծերակոյտ եւ Պօն. ապա գրեցին Կոնրադի Թէ մեր յամենայնի հաւատարիմ մնալով չեզ, կամենում ենք զլուխ դնել քեզ՝ վերանորոգել Հռովմայեցւոց նախկին մեծապանծ ինքնակալութիւնն. այդ պատճառաւ խնդրում ենք քեզ գալ եւ բնակիլ ի Հռոմ, ուր աղատ լինելով կղերի տիրապետութիւնից բոլորովին կը կառավարես այս աշխարհի մայրաքաղաքից Գերմանիան եւ Իտալիան:

Այս ոտանաւորով էին համառօտում իւրեանց խնդիրքն:

Rex valeat, quidquid cupit obtineat, super hostes
Imperium teneat, Romœ sedeat, regat orbem
Princeps terrarum, ceu fecit Justinianus,
Cœsaris accipiat Cœsar, quœ sunt sua Prœsul
Ut Christus jussit Petro solvente tributum.

Արքայ ողջ լեր, ինչ եւ ըղձաս քո Թշնամեացդ ընկալջիր
Ձերեզաղոյն իշխանութիւն ժառանգիր, Հռոմ նստիր,
կառավարիր նահանգն աշխարհի մայրաքաղաքի
հանդոյն ցուստիանոսի.
կեսարից ընդունիր կեսար եւ զհետ լեր նուաճել
Հոգեւորականութիւնն,
Որովհետեւ Քրիստոս հրամայեաց եւ Պետրոսին
վճարել զկիսահարկն:

Ընթերցողք անշուշտ հասկացան Թէ ինչ էր պատճառն, որ Պապը սահպտում էր Կոնրադին Ս. Բէրնարդոսի միջոցաւ դնալ մի արշաւանք անել ի Պաղեստին. կայսրն պատրեալ ի բանից պապի, զրեց իւր տեղ Թագաւոր 1147-ին իւր որդի Հենրիկոսը, եւ գնաց Սուրբ Երկիրն: Իւր վերադարձի յաջորդ տարում մեռաւ Հենրիկոս ի տիս երիտասարդութեան: Կոնրադ ինքն էլ գրաւեցաւ ի կենաց ի 1152-ին 58 ամաց: Ս. Թ.

չեղեն. բայց այն պատահարքն, որք ի ժամանակս առաջին խաչակրութեան ողողեալ էին արեւմտեան Գերմանիան, վերանորոգուեց. մի ֆանատիկ ճգնաւոր Բաուլ անուամբ քարոզեց մի խաչակրութիւն Գերմանիայում՝ ոչ Թէ միայն ընդդէմ Մուսուլմանաց, բայց առ հասարակ քրիստոնէութեան Թշնամեաց. եւ այնպիսի հալածանք հանեց Հրէից վերայ, որ միայն Ս. Բէրնարի իշխանութիւնն (այդ միջոցին նա եկեալ էր Գերմանիա) կարողացաւ չափ դնել: Կլէռվօէ աբբայն (Բէրնար) չոքաւ ի Ֆրանքֆորթ եւ առաջարկեց Թագաւորին խաչակրուիլ. բայց Կոնրադ՝ որ պաղեստին դնացած էր եւ տեղեակ էր այդ արշաւանաց դժուարութեանց՝ մերժեց: Սակայն Ս. Բէրնար չը վհատեց. դնալով աբբայի հետ ի Սպիր, եւ ի ներկայութեան նորա պատարագելով, յեղակարծում ժամու դիմեց առ նա. եւ այնքան ազդու կերպիւ նկարագրեց այն բարիքը, որ քրիստոնէութիւնն սպասում էր խաչակրութիւնից՝ եւ այն պատուհասը՝ զոր պիտի կրէր խզելով իւր խոստիքն Աստուածային պատուիրանաց, որ Թագաւորն յուզուելով գոչեց — «Պատրաստ եմ ծառայել ըստ հրամանի Տեառն», սուրբ անձն առժամայն կապեց խաչը, որին հետեւողք եղեն կայսրութեան շատ իշխանքն, ի Թիւս որոց Ֆրէդէրիկ Հոհէնստօֆէն եղբօրորդի արքային, որ երեւելի է պատպարոսսա անուամբ. Վլատիսլաւ Բ. դուքս Բոհեմիոյ եւ արքայի եղբայր պատմագիր Ոթոն եպիսկոպոսն:

Գերմանացիք առաջինքն եղեն, որ սկսեցին չուել ի 1147ին: Զօրաց մէջ կային 70,000 զրահաւորեալ ձիաւորք, առանց հաշուելոյ հետեւակ զօրքն, զինաւորեալ կանայքն եւ այն հրոսակաց խումբն, որ հուդկահարութեան յուսով խաչակրուեալ էին, եւ այլք: Լուի Է. եւ Գաղղիացիք մի քիչ անադան ճանապարհ անկան դրեթէ մի եւ նոյն Թուով: — «Այս զօրքս, ասում է Գիլլօմ ժամանակակից պատմագիրն, քաւ է բոլոր աբեւելեք տիրապետելու, եթէ Աստուած չը մերժէր այդ մարդկանց ծառայութիւնն»:

*Մանուէլ Կոմնենոս *), որ կը պարապէր յայնժամ կ. Պօլսոյ գահն՝ զարհուրեց, մի գուցէ այդ զօր-*

(*) Սա էր որդի Յովհաննէս կայսեր: Արի էր ի պատերազմունս, բայց ոչ ընդունակ զօրաց կառավարութեան մէջ. գործունեայ եւ առաքինի, բայց հետզհետէ վատթարելով ի շողոքորքից, եղեւ դժնեայ եւ բռնակալ: Յաջորդեց իւր հօր 1143 ին եւ մեռաւ 1180 ին: Այս կայսրս երեւելի է ի պատմագիրս Հայոց,

քըդ գալիս է օդնութեան ձեռք կարկառել Սիկիլիոյ Յօճեր Բ.ին, որի հետ պատերազմ ունէր: Կոնրադ խնդրելով որ Թոյլ տան իւրեան անցանել եւ հայթայթել զօրաց ուտեստն արծաթով, Մանուէլ պահանջեց որ հաւատն Քրիստոնեայք երդուեն հաստատուն մնալ ի խաղաղութեան. այս մասին խաչակիրք ոչ մի պատճառ չունենալով մերժելու, երդուեցան: Սակայն ի զուր եղեն Կոնրադի ջանքն, որ իւր ճամբարն ոչինչ նեղութիւն եւ դայթակղութիւն չը պատճառէ. սասրսափելի ռնիրք զործեցան, որոց արդասիքն եղեն Թշնամիոց եւ արիւնահեղ պատերազմք. ի հակիրճ բան, Կոնրադ հասաւ ի Պէրա, (արուարձան Պօլսոյ.) չը տեսաւ կայսեր, որ իւր աներծայն էր: Յամսեանն սեպտեմբերի 1147 խաչակիրք անցան Յ.Ասիա. անդ երկու շաւիղ կը ներկայանար նոցա առաջեւ, առաջինն՝ աղընթեր ծովի ամենաապահովն էր, բայց երկարագոյն. երկրորդն էր Իկոնիոյ ճանապարհն, որ թէեւ ամենակարճն՝ բայց ամենավտանգալին էր: Կոնրադ այս ընտրեց:

Շուտով խաչակիրք ցունաց նենգութեան փորձն առին. կը հաւանէիմք ասել, որ արեւմտեան հեղինակք չանդգնեցաս գոլով այն ազգաց լեզուաց, որոց հետ պատերազմ ունէին, դծագրել են այդ դէպքդ անհաւատարիմ աղբիւրից կամ թէ չափազանցութեամբ պատմեալ են, եթէ Մանուէլի պատմագիր Նիսէտան չը հաստատէր նոցա գանգատն: Խաչակրաց տուին այնպիսի ուղեցոյցք, որ նոցա կառաջնորդէին ի կիրճս եւ ի դարանս. հազիւ թէ կը հասանէին մի քաղաքի առաջեւ, դրունքն փակած կը գտանէին. եթէ կամենային հայթայթել իւրեանց պարէն, պէտք էր որ առաջ դնէին իւրեանց արծաթն այն զամբիւղաց մէջ որ պատի վերեւից կը կախէին. եւ բազմիցս բնակիչք առնելով արծաթն կաներեւութանային: Հացի մէջ կիր կը խառնէին. եթէ ունէին մի բան վաճառելու կամ՝ մի դումար փոխելու, կը վճարէին նոցա ուսկէտ դրամ, որ յետոյ ինքեանք կը մերժէին առնուլ: «Եւ զի պատմեցից — ասում է Հելենացի պատմաբանն — ամենայն տեսակ չարութիւնք ի կիր արկին շրջել նոցա միտքն՝ որ վերստին չգան յերկիր կայսրութեան ցունաց»:

Չկնի բազմօրեայ, դաժան եւ երկար ընթացից խաչակիրք Իկոնիոն հասանելու տեղ, ուր իւրեանց ուղեցոյցքն պիտի առաջնորդէին, փակուեցան մի կրճի մէջ. ուր Մաղսուտ սուլթանի սպարապետն յարձակեց յանկնկալս. եւ բոլորովին ի փախուստ դարձրաւ նոցա: Միայն 7000 անծիւնք զերծան ի մահուանէ կամ ի դերութենէ. Կոնրադ ի թիւս սոցա էր: Այժմ պիտի տեսնենք, որ պատահեց նա Գաղղիոյ թագաւորին ի Նիկիա:

Ֆրանսիայի արքայն իւր երկրի կառավարութեան համար մի խնամակալ կարգելէն ու եւդինէս Դ. պապի ձեռից Որի Ֆլամն *) առնելէն զկնի անցաւ Յունիսի 29 ի 1147-ին Հռենոսից ի Վ.օրմս, ուր ուտելեաց սղութիւնն հարկադրեց մի քանի իշխանքը Իտալիոյ ճանապարհն բռնել: Լուի Յոյների հետ ունեցած անհաճոյ վիճից յետոյ հասաւ Հոկտեմ. 4-ին ի Կ. Պօլիս, ուր ըստ օրինակի Ռայմոնդ կոմսին Թուլուզի երդուեց. իւր հետեւող իշխանք մատուցին իւրեանց հպատակութեան յարդանքն Մանուէլի, որպէս արարեալ էր եւ Գօտֆրուա Բուլյոն:

Ի Նիկիա հանդիպեց Գերմանական զօրաց բեկորքին. Կոնրադ Թողով իւր 7000 զօրքն Գաղղիոյ արքային՝ եւ օգտաւէտ խորհուրդք տալով նմա, վերադարձաւ ի Կ. Պօլիս, իւր առողջութիւնն զարմանելու եւ նորեկ զօրաց դալստեան սպասելու պատրաստակաս: Բայց ստոյգն այն էր, որ ամաչում էր հետեւել Ֆրանսիայի Թագաւորին այնպիսի մի աղէտալի վիճակում: Խորհուրդ տուաւ Լուիին Զմիւռնիոյ եւ Եփեսոսի ճանապարհն բռնել, որպէս դի եւ նա չհանդիպէ իւր կրած արկածից: Բայց հազիւ անցաւ Գաղղիական ճամբարն ի Մէանդրէ, իւրեանց առաջնապահ զօրքն ընդ հրամանատարութեամբ Ժէօֆրուայ Բանսօնի

նախ, որ միշտ պատերազմ ունէր Լեւոնի որդի Թորոսի հետ եւ շատ մտանեց Կիլիկիոյ, որպէսզի տեսնենք յընթացս պատմութեան. երկրորդ, որ նկրտում էր միացնել Հայկական եւ Յունական Եկեղեցիքն, որոյ պատճառաւ մեծ հակաճառութիւն ունեցաւ, գրականապէս Գրիգոր Պահլաւունւոյ եւ ապա նորա Հեղբօր Ներսէս Շնորհալւոյ հետ: Այն նամակներն զոր միմեանց գրեցին, մենք կարող ենք տեսանել Շնորհալւոյ ընդհանրական գրքի մէջ, յորում տուրք Հայրապետաց լիուլի նկարագրում է Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղափառ ծէսքն եւ պարզողութիւնքն, եւ տեղեկացնում է մոլեռանդ Յունաց որ հերձուածօղ կը համարէին զմեզ, թէ որքան ուղղափառ եւ առաքելական հիմանց վերայ է հաստատած մեր Ս. Եկեղեցին: Աչքէն յայտնի է որ գոյն միութիւնդ գլուխ չեկաւ:

Ե. Թ.

(*) Որի Ֆլամն է նախնի Դաղղիացի թագաւորաց պատերազմիկ զրօշն, որի հովանաւորութեան ներքոյ միշտ կը յաղթէին թշնամեաց, որպէս կը պատմեն:

Ե. Թ.

յանակնկալս ըմբռնուեցաւ ի Տաճկաց եւ յօշոտուեցաւ. արքայն՝ որ անդ կզտանուէր՝ շնորհիւ իւր զարմանալի քաջութեան զերծաւ ի վտանգէ. եւ հասանելով փետրվարի 2 ին 1148 յԱտալի նաւահանդիստ Ցունաց, մտաւ ի նաւ դնալ յԱնտիոք: Ա.յսպիսի նենդութեամբք մատնեցին Ցոյնք Խաչակրաց՝ յառաջոյ իրազեկ առնելով Տաճկաց, կողոպտեցին եւ փակեցին նոցա յանաւաղջ վայրս, ուր յոգունք կորան ի հիւանդութենէ եւ յանօթութենէ: Հազարեակ ապաքսիտ Գաղղիացիք նախաւեծար համարեցին անձնատուր լինել Տաճկաց, քան զրաւել ի կենաց դժնդակ մահուամբ այնպիսի քրիստոնէից մէջ, որք միայն եւ եթ անունն կը կրէին. մի փոքրիկ մասն միայն հասաւ յԱնտիոք:

Ի 25 Մարտի 1148 Լուի Երիտասարդն եհաս յԱնտիոք. մի քանի օր յառաջագոյն Կոնրադ Գ. ժամանեալ էր յԱքեայ. երկու վեհապետք մտին յերուսաղէմ տարբեր ժամանակաւ ի միմեանց: Երբ հասաւ իւրեանց զօրաւիղ զօրք՝ միացան ընդ Պըտվէն Գ.ի երուսաղեմայ արքային յարծակել Դամասկոս քաղաքի վերայ, որ յայնժամ մի առանձին իշխանութիւն կը կազմէր *): Ա.յս ձեռնարկութիւնս ի դերեւ ելաւ մի նենդութեան առիթ, եւ արտադրեց ահագին աղէտք Խաչակրաց, այլեւ մի ամօթալի փախուստ: Երկու Թագաւորք այն ժամանակ պաշարեցին զԱսկալօն. բայց Պաղեստինոյ Քրիստոնեայք՝ ընդ որս ժամադիր էին եղեալ, զլանալով կատարել իւրեանց պարտքն, Խաչակիրք յետս քաշուեցան՝ ուր օր մի անշահաւէտ յարձակում առնելէն զկնի:

Զգուելով Քրիստոնէից անվստահութենէն երկու վեհապետք՝ ցանկացան վերադառնալ ի պետութիւնս իւրեանց, Թողլով Պաղեստինոյ Քրիստոնեայքն յիւրեանց վիճակ երկպառակութեան: «Նկատողութեան «արժանի է — ասում է մի պատմաբան Խաչակրաց, «որ Սուրբ Երկրում բնակեալ Լատին Քրիստոնեայք «բնաւին յետս էին կասել իւրեանց հարց քաջութենէն եւ բարեպաշտութենէն: Անզգայաբար յարեալ «էին այդ օտար երկրին որպէս իւրեանց ծննդական «աշխարհին եւ երկարակեցութեան պատճառաւ ընտանեկան կապերով միացած էին ընդ բնիկս. Թէ «Գաղղիացիք, Գերմանացիք եւ Թէ Անգղիացիք ամենայնեւ էին ընդ Հայոմիս եւ ոմանք ընդ մահ-

(*) Մինչեւ որ 1154 ին Նուրդին առաւ:

«մետականութիւս որք քրիստոնէութիւնն կը դաւանէին: «Ով որ կը դտանուէր ի Պաղեստին՝ կը հրաւիրէր իւր «յԵրուսաղէմ մնացեալ ընտանիքը դալ եւ վայելել հանգստութիւն: Ցոյզով խղճուկ ուխտաւորք ձեւ էին «բերել խոստացեալ երկրում հարստութիւնք եւ ժառանգութիւնք. հազարեակ սեպուհք, որ յարեւմուտս «միայն մի քանի ստրուկք կը ժառանգէին, ի Սիրիա «դեղեալ էին տէր մի քանի քաղաքաց կամ ամրոց: » . . . . . .

«Ա.րեւմտեան նահանգաց Եւրոպացւոց տեղափոխութիւն մի հարուստ եւ բարեբեր երկրում, մեղ «կացրաւ նոցա վարքն: Մասակ կամ պուդէն անունն «որ կը տային ի Պաղեստին ծնեալ Լատինացւոց, կը «յայտնէր մի իգացեալ բնութեան հանգամանքն, այն «է խաբէութեան եւ խորամանկութեան: Պուլէնք «(մետակք) ընդունեցին Արեւելեան բնակչաց հանդուստն, նոցա շռայլութիւնն, զեխութիւնն, անկարգութիւնն նա մանաւանդ այն նախանձն, որ կը վա«կէին իւրեանց կանայքն Թագցնելու օտարի աչքից «եւ որ արդասաւորեց այդ սեռի մէջ քծնութեան եւ «նենդութեան խորհուրդ: »

Կոնրադ Գ. մտաւ ի նաւ 8 սեպտեմբերի 1148 առի իւր արքեպիսկոպոս Ֆրէյզինժէնի եղբօր եւ այլ իշխանաց հետ: Իսկ Լուի Է. կատարելով 1149 տարուայ Զատիկն յերուսաղէմ, ապա ճանապարհ ընկաւ:

Ա.յսպէս՝ մի ճանապարհորդութիւն, որ քրիստոնէութեան երկու հզօր Թագաւորք ձեռնարկին իւրեանց երկրից ընտիր ազնուականաց հետ՝ վերջացաւ առանց որ եւ իցէ մի արդիւնք արտադրելու: Հասարակաց կարծիքն զՍ. Բէրնար մատնեց, որ մի յաջող ելք խոստանալով այդ ճանապարհորդութեան մէնքան հազարաւոր անձանց կորստեան պատճառ էր եղել. բայց նա մի ջատագովական Թուղթ հրատարակելով բացէ ի բաց հերքեց այդ կարծիքդ յայտնելով, որ զօրապետաց անհմտութիւնն եւ եւս առաւել Անտուածային բարկութիւնն էր սպատճառ եղել:

Գ.Լ. ՀԻՆԳԵՐՐՈՐԴ.

Թագաւորք Երուսաղէմայ ի 1148ի մինչ 1187:

Մելիսանդ Թագուհին յար ընդ միշտ կառավարէր Երուսաղէմայ Թագաւորութիւնն իւր որդւոյ Պըտվէն

Գ. ի անուամբ, որին դեղեցիկ դաստիարակութիւն էր ընծեռել եւ յապահովի էր կացուցել պետութիւնն, վերանորոգելով Գաղայ քաղաքի ամրութիւնքն, որ Տաճարականք ստանձնեցին պաշտպանել արիաբար: Մէլիսանդ կիշխէր ոչ թէ մի տկար եւ անհաստատ խնամակալուհւոյ պէս, այլ մի բացարձակ վեհապետի իշխանութեամբ. նա համարում էր իւրեան իսկ տիրուհի Թագաւորութեան: Պատճառ, որ Ֆուլք իւր միջոցաւ էր ընդունել արքայական Թագն: Սակայն Թագաւորութեան սեպուհը ի նախանձ շարժեցան Մանասէի վերայ, որ էր Գօնդստաբլ (սպարապետ) եւ ազգական դշխոյին, քանզի վերջինս մեծ իշխանութիւն էր տուեալ նմա: Պրտվէնն ինքն հասանելով իւր քսանեւմէկերորդ տարին՝ ի յեղակարծում ժամու զբաւ Թագ ի գլուխ 1152 ին, առանց Թագադրել տալոյ եւ իւր մայրն, որպէս նա ցանկացած էր: Բայց արժան դատեց մի դաշնագրութիւն անել ընդ Մէլիսանդի. որով Թագաւորութիւնն բաժանուեց յերկուս մասունս. Տիւրոս, Ա.քեայ եւ բոլոր ծովեզերեայ քաղաքքն իւրեան, իսկ Երուսաղէմ եւ Սիւբէմ իւր մօրն. բայց ստրջալով այդ կարգադրութեան վերայ դեռաւուրց իշխանն եղծեց դաշն եւ սկսաւ պայքարել իւր մօր հետ. միայն արեան հեղմամբ Մէլիսանդ հրաժարուեց Երուսաղէմից եւ բաւականացաւ միայն Սիւբէմ քաղաքաւ:

Այդ իսկ տարում 1152 ին Հրսամուտին Թէմուրտաշ եւ իւր եղբարք յանկարծ երեւեցան Երուսաղէմայ առաջեւ, որ մնացեալ էր անպաշտպան. բայց Քրիստոնէից զօրքն սրացան յօգնութիւն մայրաքաղաքին եւ ի փախուստ դարձոյց զնոսա:

Ա.րիացեալ այս յաջողութեամբ Պրտվէնն Գ, մտադիր եղեւ առնուլ ի ձեռաց Ֆաթմայ խէլիֆայից Ա.սկալօնի ամենակարեւոր ամրոցն, որ Ա.րեւելից կոչնուանէին Հարանացու Սիրոյ: Յաջողեց գլխի եօթնամսեայ պաշարման ի 19 օգոստոսի 1153 ի՝ տալով այդ քաղաքդ իւր եղբօր Ա.մուրիայի, որ արդէն եղեալ էր կոմս Ցոպպէի:

Ա.սկալօնի յաղթութիւնն մի նոր աղէտք արգասուորեց Քրիստոնէից համար: — Դամասկոսի կործանման պատճառ եղեւ, որ իւրեանց պատնէշ էր կայանում ընդդէմ Նուրդինի ի ժամանակս Թագաւորութեան Մօչէրուդինի, որոյ հետ ոչնչին բարեկամութիւն. Ա.Թաբէկն Ա.սկալօնի կորստեան պատճառն Դամասկոսի իշխանի անհոգութեանն տալով, դրաւեց 1154 ին նորա բոլոր երկիրն, շարունակելով վճարել Երուսաղէմայ Թագաւորին 8000 Տիւրոսեան դենար հարկն, որ Մօչէրուդինի տալիս էր: Ի 1156 Պրտվէն Գ՝ զինադուլ առնելով ընդ Նուրդինի հրաժարուեց այդ հարկից, բայց հուն մի ժամանակէն զկնի քակելով դաշինքն ստացաւ իւր պատիժն չարաչար յաղթուելով Մեռեալ Ծովի առընթեր ի 18 յունիսի 1157 ամի. Նուրդին մի մեծ կոտորած տուաւ նորա զօրաց, որ մինչ յայնժամ պաղեստինոյ քրիստոնեայք չէին կրած, Թէ եւ ի փոխարէն հանեցին իւրեանց վրէժն ի 15 յուլիսի 1158 Թիլկէրիոյ լճի պատերազմի մէջ, ուրանօր Նուրդին մազապուրծ փախաւ:

Ա.նտիոքայ եւ Տրապօլսոյ իշխանութիւնքն սնուցին մի քանի յեղափոխութիւնք Պրտվէնի ժամանակ, որք աղեցութիւն ունեցան Երուսաղէմայ վերայ:

Ի 29 օգոստոսի 1149 Բայմոնդ իշխան Ա.նտիոքայ սպանուեց Ա.նապայի պատերազմի մէջ, որ անխոհեմաբար մղեալ էր Նուրդինի դէմ: Կոստանսիա իւր կինն կառավարում էր իշխանութիւնն, որպէս իւր սեպհականութիւնն եւ խնամակալուհի իւր Բօէմոնդ որդւոյ: Նոյնպէս Բայմոնդ իշխան Տրապօլսոյ ի 1151 սպանուեց այդ քաղաքի դրան առաջեւ. իւր հանդուն որդին մեռասանամեայ յաջորդեց նմա ընդ խնամակալութեամբ իւր Հօտիէր մօր, որ էր քոյր Մէլիսանդի: Այլ եւ Ճոսլին Բ. անուանակիր Եդեսիոյ կոմսութեան՝ անկաւ ի ձեռս Ա.Թաբէկի եւ եղաւ ի դիպահոջ:

Սակայն Կոստանսիա որք ի 22 րդ հասակի 1152 ին ամուսնացաւ վերստին ընդ Բլնօլդ Շատիյլօնի իշխանին Կրաքի եւ Մոնտրէալի որ յապառաժն Ա.րաբիասա էր մի անբարոյական, կրքոտ եւ կատաղի անձ, որ լցոյց շփոթութեամբք զպետութիւնն:

Բայց հարկն աստ ստիպում է զմեզ վերադառնալ միւսանգամ դէպ ի Կիլիկիա: — Մանուէլ կայսրն լսելով Թորոսի արարքն *) յոյժ զայրացնեցաւ եւ ուղարկեց Ա.նդրոնիկոս զօրապետն Թորոսի վերայ. այդ մասին խնդրեց Շատիյլօնէն սատար լինել իւր զօրապետին: Բայց Թորոս իւր բնական քաջու-

(*) Տես ի գլուխ Գ:

Թեամբ վանեց բոլոր Ցունաց զօրքն եւ ծերբակալեց նոցա զօրավարքն. կայսրն իրազեկ լինելով՝ դնեց այն զօրավարքն եւ Շատիլյօնի միջնորդութեամբ հաշտութիւն կապեց ընդ Թորոսի, որ տուաւ նմա (կայսեր) ի պարգեւ Անարզաբա քաղաքն: Սակայն դուն ինչ ժամանակէն զկնի, Թորոս տեսանելով որ Ցոյնք հաստատ ոչ մնան ի խաղաղութեան եւ դաւաճանութիւն խորհին ընդդէմ իւր, վերստին զէնք առաւ եւ գրաւեց Անարզաբա, Մամեստիա եւ այլ Ցունաց վերաբերեալ քաղաքքն: Կոմնենոս յահագինս կատաղելով վերստին առաքեց զԱնդրոնիկոս, բայց անվեհեր Թորոսն պատեհ առիթ դիտելով մի այնպիսի կատարեալ յաղթութիւն արաւ Ցունական զօրաց վերայ, որ հազիւ Անդրոնիկոս մի քանի արամբք զերծաւ ի մահուանէ:

Ա.յդու ամենայնիւ դարձեալ չը խրատուեց Մանուէլ եւ ըստ որում Անդրոնիկոս հետեւել էր՝ յղեց իւր աղգական Կալամանոն ջնջել ի Կիլիկիա եղեալ բոլոր Ա.րաբեան ցեղն. աստ եւս բախտն յաջողելով Թորոսի՝ ոչ թէ միայն յաղթեց զօրապետին, այլ եւ ծերբակալելով զնա վաճառեց կայսեր սուղ դնով, որպէս վկայում է նոյն ինքն Նիկետաս: Դովաւ եւս առաւել հաստատուեց Ռուբինեանց իշխանութիւնն, մանաւանդ երբ Թորոս առաւ Տարսոն քաղաքն ի 1153 ին եւ մի արշաւանք արաւ Խաւարիայում, որով ահ ազդեց Ցունաց եւ զարմացոյց Լատինացիքը մինչ այնքան, որ Պրուվէն Գ. խնդրեց իւր գործակցութիւնն*):

Կայսրն վարանելով եւ մի ճար չգտանելով դիմանալ Թորոսի արութեան, ասուէ ժամանակակից Հայ պատմագիր Սմբատն, սկսաւ հրապուրել եւ ողոքել ընծայիւք Իկոնիոյ Սուլթան Մաղսուդին, որպէս զի պատերազմ բանայ ընդ Թորոսի: Մաղսուդ թէ եւ երդմամբ դաշն էր կապել Թորոսի հետ հաստատուն մնալ ի խաղաղութեան, սակայն զիջանելով կայսեր խնդրանաց՝ ասպատակ սփռեց ի Կիլիկիա**): Այս անգամ Թորոս դրեթէ առանց պատերազմի յաղթեց Սուլթանին. մի սոսկալի ժանտախտ ծաւալեցաւ Մաղսուդի բանակի մէջ, եւ անհամար բազմութիւնք ջարդեց. միւս կողմէն Թորոսի եղբայր Ստեփանէն պատահելով Սուլթանի որդւոյ Եաղուպին՝ կոտորեց նորա բոլոր զօրքն եւ իւրեան էլ սպանեց: Այս բաւ չը համարելով՝ արին Թորոս դնաց դաղտնապէս Սուլթանի երկիրն եւ սկսաւ ասպատակել, մինչեւ որ Մաղսուդ իրազեկ լինելով եւ տեսանելով, որ անկար է յաղթել նմա՝ խաղաղութիւն հաստատեց ի 1155 ին:

Ի 1157 ամի Բընօլդ Շատիլյօն չնայեցեալ Մանուէլ Կոմնենոսի եւ արեւմտեան Քրիստոնէից մէջ եղեալ խաղաղութեան, առանց որ եւ իցէ պատճառի յափշտակեց Կիպրոս կղզին եւ զարհուրելի անգթութիւնք արաւ բանտարկելով կառավարիչն, որ էր աղգական Կայսեր *):

Այդ պատահարքից երկարեայ դադարմանէն զկնի Կայսրն՝ Կիլիկիոյ կառավարիչ Թորոսը նուաճելու պատրուակաւ ահագին բազմութեամբ եկաւ այդ երկիրը: — Ապա յառաջ խաղալով տիրապետեց Տարսոն, Թիլ եւ այլ քաղաքաց. Թորոս չկարենալով դէմ դնել Կայսեր, ըստ որում իւր եղբայր Մլեհն վտարանջեալ էր յիւրմէ, միջնորդ ձգեց Երուսաղէմայ Թագաւոր Պրալվէնին եւ վերադարձնելով Կայսեր Անարզաբա եւ Մամեստիա հաշտուեց ընդ նմա: Սիննամոս Ցոյն ժամանակակից պատմագիրն, որ կոչուէ Թորոսին « խոռոգէս ձարցարահնար », պատմէ թէ Կայսրն անուանեց զնա Սերաստիոս: —

Ի Կիլիկիոյ Մանուէլ սպառնացաւ պատժել Բընօլդի լպիշութիւնն, իսկ վերջինս ոչ մի կողմանէ օգնութիւն չը գտանելով՝ ստիպուեց խոնարհիլ. Կայսեր առաջեւ, ուստի ժամանելով ի Մամեստիա՝ ներկայացաւ նմա բոկոտն եւ չուան ի պարանոց աղերսելով դթութիւն: Պրուվէն Գ. նոյնպէս եկն անդ կրկնել իւր բարեկամութիւնքն ընդ Մանուէլի, որ մի քանի վեհասլետական գործեր ցուցանելէն զկնի յԱնտիոք՝ վերադարձաւ ի Կ. Պոլիս: Բայց հազիւ թէ գնաց, Բընօլդ սկսաւ ասպատակել Ճոսլինի հին կոմսութեան մէջ եւ շատ աւար առնել. սակայն ի ճանապարհի զերի անկանելով Նուրդինի ծեռն, 16 ամ արդելուած մնաց: Իւր իշխանութիւնն կառավարէր Անտիոքայ պատրիարք:

(Շարունակելի):

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

(*) Զարմանալի է, թէ էր պատմութեանս հեղինակն ոչինչ չէ յիշում այս մասին:

(**) Հ. Միք. Զամչեան Մաղսուդի որդի Ղլիճ—Արսլանն է դնում:

(*) Այդ արշաւանաց մասնակից էր եւ մերն Թորոս, ըստ վկայութեան բոլոր պատմագրաց, թէեւ ինչպէս տեսնումենք գրքոյս հեղինակն չէ յիշում. այդ եղեւ պատճառ շատ դժբախտութեանց Կիլիկիոյ, ըստ որում Մանուէլ լսելով այդ եկաւ ի Կիլիկիա եւ առաւ շատ քաղաքք:

Ծ. Թարգ:

ԱԶԳԱՅԻՆ

ԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԿՏԱԿ

Խաղմայ քաջայայտ և Ներկայնաբազուկ — Արղութեանց Հանգուցեալ Պ. Ահրաման իշխանին կտակը, որով Աղեքսանդրապօլ քաղաքին մէջ Հայոց օրիորդաց համար դպրոց հիմնուած է և կշարունակուի նորին անուամբ և կտակեալ դրամին տոկոսօք, որոց համար ի ժամանակին՝ ամսագրոյս մէջ կարևոր տեղեկութիւնք հրատարակուած են։

Այնպէս բազմայ վաղածանօթ պիտի լինի սոյն կտակի դէմ Երժանայիշատակ Արղութեանց Պ. Ահրաման իշխանի ազգականներէն ոմանց յարուցած դատը, զոր երբեմն յաջողեցան և կարճեցին վաստակած լինել, սակայն Հայոց Հոգևոր իշխանութիւն այս խնդրոյս մէջ ունեցած իրաւասութեամբ իբրև երբեք անյն բողոք կալաւ առ Ծերակոյտն Ս. Պ. բուրգոյ, որ Տփղեաց Դատաստանական Պալատան վճռոյն հակառակ հաստատելով կատկին վաւերականութիւնը՝ առաջարկած էր Տփղեաց Դատ. Պալատան ըստ այնմ կրկին նկատողութեան առնուլ և վճռել, ուր հակառակորդաց բացատրութիւն լինելով՝ Հոգևոր Իշխանութեան իրաւունք հաստատուած լինելը աւետեցաւ մեզ ի Տփղեայ, զոր բերկրատատար սրտիւ հաղորդելով մեր համայն սիրելի Ազգայնոց՝ նաև կշնորհաւորեմք մեր Աղեքսանդրապօլեցի եղբայրները՝ իւրեանց ի վանդի եղած Արղութեանց օրիորդաց դպրոցի ազատութեան համար . . . ։

Ու այժմ արժան կհամարիմք այս խնդրոյ առթիւ Տփղիսայ Մեպո- լրագրոյ 40րդ թուոյն մէջ հրատարակած հետևեալ կարևոր տեղեկութիւնը և դիտողութիւնը ատ յաւելուլ՝ յուսալով որ՝ կրկին առիթ պիտի ունենամք այս խնդրոյ վերայ աւելի ընդարձակ գրելոյ։

« Մեր ընթերցողներին յայտնի է արդէն հետագրալուրից Ծերակոյտի վճիռը իշխան Պահրաման Արղութեանի կտակի մասին մեր Հոգևոր կառավարութեան բողոքի պատճառաւ Տփղիսի Դատաստանական պալատի վճռի դէմ։ Ծերակոյտը վճռաբեկեց վերջինը և առաջարկեց միևնոյն պալատին վերաքննել միևնոյն գործը վերաբերութեամբ Հայոց Հոգևոր կառավարութեան մասնակցութեան և իրաւանցը։ Կառավարչական ծերակոյտը մատնացոյց եղաւ պալատին նորա ապագայ վճռի նախագծի վերայ, պարզելով թէ Իշխան Արղութեանի ժառանգները կտակի 11-դ յօդուածի մասին իւրեանց պահանջով պիտի դիմէին ոչ թէ դէպի կտակակատարներն, այլ դէպի Հայոց Հոգևոր իշխանութիւնը, որին կը պատկանի սեպհականութեան իրաւունքը 11-դ յօդուածի մէջ կտակած գումարի վերայ։ Այդ պատճառաւ Տփղիսի Դատաստանական պալատն իւր երկրորդ քննապատութեան մէջ համաձայն ծերակոյտի հրամանին՝ վճռեց Իշխան Արղութեանի ժառանգների վճռը 11-դ յօդուածի առթիւ կտակակատարների դէմ թողնել առանց քննութեան։

Այստեղից հետևում է, որ մեր Հոգևոր կառավարութիւնը պիտի պատրաստ լինի սպասել ժառանգների կողմից վէճ միևնոյն հարցի մասին։ Հոգևոր կառավարութիւնը պէտք է ինկատի ունենայ, որ սպասելի վէճի պարունակութիւնը նորա կողմից երկու կէտից պիտի կազմակերպուի, այն ժողք ինչպէս այդ գործը պարզուեցաւ ծերակոյտում՝ եղած վիճաբանութիւններից, և նորա վճռի գաղափարովը այսինքն Կանսիստորիայն կարող է հաստատել ուսումնարանի գոյութիւնը մինչև անգամ 11 դ յօդուածի նպատակի հիման վերայ, միւս կողմից նա պիտի ապացուցանէ, որ

օրհնաբեր եղէ ուսումնարանի գոյութիւնը կատարեալ լինի, գարձեալ գումարն է սեպհականութիւն հոգևորականութեան, միայն այն պայմանով, որ Հոգևոր կառավարութիւնն այդ գումարը ծախիլիս այլ նպատակներու համար պարտ է իւրաքանչիւր դիպուածքում՝ խնդրել թոյլտուութիւն ներքին գործոց նախարարի կողմից։ Ցանկանում ենք մեր Հոգևոր կառավարութեանը յաջողութիւն այդ գործում։

ՆՊԱՍՏ.

Ինչպէս Ամենապրայս օգոստոսի թիւրթին մէջ հրատարակեցինք Կավրիժոյ Ա՛յոց դպրոցին նպաստողացանուանքը, այս անգամ կ՚յաւելուածք հրատարակել հետևեալ ներուն անուանքը ևս։

	Թում. Ղրան*)
Ա.յսէկ Կրէնֆիլդ	100
Դանիէլ Մ. Շահրազեանց . . .	100
Սողոմոն Բէժոյեան	50
Թովմաս Ճելալեան	20
Սողոմոն խան Յաղինեանց . . .	20
Ա.ալան Եաւար Ենակոլոփեանց . .	20
Կարապետ Մանուէլեան . . .	15
Դաւիթ Սարգսեան	14
Եսայի Մահտեսի Ա.ստուածատուրեան	12
Մկրտիչ Զոհրաբեան	10
Ստեփան Կ. Նէրսեսեանց . . .	10
Յակովբ Բ. Թամիրեանց . . .	7
Խաչատուր Սէֆազեան	7
Ա.րղուման Հայրապետեան . . .	6
Ա.նտոն Ֆօրէսի, Յոյն	5
Ա.ւետիս Յովհաննէսեան. . . .	5
Մկրտում Ա.ղաբեկեան	4
Սարգիս Մկրտչեան	3
Պետրոս Համբարձումեան . . .	3
Յօնան Յակոբեան	2
Նատուր Եղվազեան	2
Նատուր Մնացականեան . . .	2
Սարգիս Հայրապետեան . . .	2
Բաղդասար Մահտեսի Դաւթեան .	2
Մինաս Գրիգորեան	1
Դաւիթ Ա.պրէսեան	2 5
Սարգիս Գրիգորեան.	— 7
Դումարն է	425 2

(*) Մի ղրանն արժէ 28 1/2 կոպէկ արծաթ Ռուսիոյ։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԻՐ

Յանցելումն Վ. Հ. Ա՛յրապետ Ա՛յկ. 12 աստիճան տաւէն հանգերձ նոտրուիէ և այլ պարագայիւք՝ ուրախ իսկ չափ տառ ընծայած էր ի ձեռն Հոգելոյսն Մամբրէ Եպիսկոպոսի Մամիկոնեանց, և յիշեալ Եպիսկոպոսն զայն ի Մուշ Գյակայ հրաչակաւոր վանուց յանձնած լինելով, այս անգամ յիշեալ վանուց Մխիթարեան թիւն յատկապէս առ Վ. Հ. Ա՛յրապետ հետևեալ շնորհակալեաց գիրը ուղերձեալ էր, զոր արժան կհամարիմք հրատարակելոյ։

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի ժամանակին՝ յորում Ճոխանայր յաշխարհի ահեղ պատուհասն Երշանկունեայց արքայութեան, փառք դերապոյն քան զաշխարհի ցոլացաւ ի վերուստ յազգս Ա՛յոց. քանզի Տէրն փառաց իսկ Միածին Որդին Աստուծոյ էջ յերկինից գնել զհիմունս անվախճան թագաւորութեան, բազմապատկանել Հայրարատեան աշխարհի զրուսս սրբոյ Սիոնի Ա՛յաստանեայց զԱ՛րան լուսոյ զկաթուղիկէ Մայրն ամենայն Եկեղեցեաց զՈւորբ էջ միածինն սաւմք, որում արժանապէս փեսայացեալդ էք յընտրութենէ և ի հրաւիրանաց սուրբ Ա՛ղբոյն։

Ընդ դարք բազումք, անկան կործանեցան աշխարհային փառք մեր, գանձանն արքունի, քաղաք հոյակապ, քաջք արի արանց և պարծանք յաղթական զօրավարացն մերոց, այլ յայսմ ամենայնի օրհնեալ եղեցի անուն Տեառն՝ որ անհուն զթութեամբ իւրով զարձեալ ոչ իսպառ անտես արար զմեզ, այլ զՏունն յաւիտենական փառացն՝ դիւրիմք հիմնադրեալն եթող մեզ կոթող մխիթարութեան առ հնապանծ յաւերժական ծերունի լերամբն Մասեաց բարձրացելոց առաջի յաւիտենականին իբրև զսեղան խնկոց և պատարագաց ի յիշատակ փառաց և ի պարծանս մշանջենաւոր յաղթութեց յաղգս, յորում վ. հմափառութիւն Զեր Վահանայատեառ աղօթանուէր և քաջարար ժողովրդեանն Ասուածոյկանգնեալ կայ իբրև զջահ լուսապայծառ և փառաւորեալ ի զարդ անկողոպտելի: Ոյժ տեսանելով վ. հմափառութեան Զերում զմանկունս Ներկեղեցւոյ ի խաւարի տգիտութեան, զներկեղեալս՝ զդստերս Մայր Եթոռոյ ի խրթնացեալ վիճակի և զպատկառութիւն քանիքրուն և հոգելի պաշտօնէից՝ չէր մարթ հանդարտել վասնմանէ ոչ զոր Զերոյ, վասն որոյ զիոյթ մեծ և ճիգն յանձին կալայք շաւիղ ընդարձակ և գնդեցիկ հորդել ի յառաջադիմութիւն և ի լուսաւորութիւն մանկանց Հայաստանեայց Ներկեղեցւոյ. որով բերկրեցան ոգիք համայն որդւոցն Սիովնի:

Ո՛վ ոք է՝ որ ոչնիկի աչս ի դրախս, և ուշ ի խնդրատատակ, և ոչ տեսանիցէ այսօր զարդիւնաւոր աղդատոյս ջանս սրբոյ Հայրապետիդ նուիրելոյ ի փառս Ներկեղեցւոյ, քանզի ընդ ձեռն Զեր ձառագայթ վայելչութեան Հարսին լուսոյ ընդ ամենայն տեղիս հարկանէ. առ ձեօք նորանոր բարեկարգութեամբք և շինութեամբք բարգաւաճեալ ծոխացաւ Մայրն լուսածին և որով կամիցէին ի Զեզ ձգեցիք զսիրտս հարազատ որդւոցդ սիրելոյ ընդ չորեսին ծագս աշխարհի. որք զհաւատոյ ձշմարիտ սիրոյ և համակրութեան յայտնեցին առ Մայր Եթոռն՝ ամօթապարտ թողեալ զնորթամիտս ոմանս և խայտառակեալ զնենգադատիր հնարս նոցա՝ որք դուն գործեցին զկլաճին ատելութեան արկանել ընդ Սիոն և ընդ որդիս իւր: Այլ Հայրապետական խնամք Զեր և անձնուէր ջանք խոցին զամենայն բերանս չարախօսս և կարկեցին զբերուս հայհոյիչս. և ուսումնասիրական ջանք Զեր ի դաստիարակութիւն մանկանց Ներկեղեցւոյ խոստացեալս դրոշմեցին զյիշատակ երախտագիտական ի սիրտս համօրէն Հայոց՝ որք ընդ արդիւնաւոր Հայրապետս անմոռաց պահին զնուիրական անուն վ. հմափառութեան Զերում:

Ներ արդ միաբանական Ուխտս մեծի վանուց սրբոյն Կարապետի զերծեալ այսօր յանցելոց մրրկաբեր ծփանաց և ի յուզմանց և հասեալ ի նաւահանգիստ խաղաղութեան ընդ հովանեաւ Առաջնորդի խնամանոյ և խաղաղասիրի, փութայ զհաւատարիմ հնազանդութիւն իւր և զխոնարհ հպատակութիւն յայտնել վ. հմափառ սուրբ Հօրդ հասարակաց յարդելով զօրէնս և զկրամանս Տէրութեան Զերում, և անձնուէր պաշտօնեայ խոստանալով լինել վասն փառաց և զբարգաւաճութեան սրբոյ Սիոնին Հայաստանեայց:

Երախտագիտական սրտիւ զնորին դո-
հութիւնս մեր յայտնեմք Վ. Հայրապե-
ապետական Տեառնդ ընդ մասնաւոր դու-
Ձեր և շնորհ առ Ննաւակնեան ուխտս
սրբոյ Կարապետի և առ Գ. Երապա-
սիս Վ. անահայր մեր, ընդ որ ձեռն ըն-
կալաք զնուիրեալն ի Վ. Հայրապետու-
նէ Ձերմէ զգապագրական ընտիր տառս
ի չափ տասն և հինգ լտեր, որով և ա-
ռաւել շնորհապարտ կացուցիք զմեզ
մեզ առ Մայր Էջմիածն. զոհ եմք և զմեր-
մէն Գ. Երապատիս Վ. անահօրէ, որ ընդ
մեզ զործելն ի վանս, ջերմագին և ընտ-
րոյս եռանդնամբն իւրով աջակից ու-
նելով զմիաբանութիւնս բուռն հհար
զբարեկարգութիւնն և զշինութիւնն վանու-
ցըս. և քանզի չունիմք ի վանս ոչ գիտ-
մարտաւոր ընդարձակ ուսուհնարան, ոչ
զննճայարան ժառանգաւորաց Նկեղե-
ցւոյ, ոչ զտպագրատուն, ոչ զմանդա-
րան, և ոչ զհասարակաց սենեակատուն,
ուսոր վանն այսց ամենակարևոր շինու-
թիւնս խորհուրդ ի մէջ առեալ՝ որոշեալ
եմք յառաջիկայ գարնանս հիմն արկանել
շինութեանցս այսոցիկ՝ վստահացեալ
յօրհնութիւն և ի քաջալերութիւն Վ. Հ-
այրապետութեան Ձերում և յա-
ռատաձիրտ ձեռնտուութիւն սիրելի Ընկ-
դայնոց մերոց:

Գխոհ Վ. Հայրապետ Տէրութիւնն ձեր,
զի սրբոյ Կարապետի ուխտս գուստր և
Կաթուղիկէ Մայր Նկեղեցւոյ ի մէջ
Հայաստանի, ուսոր խնդրեմք ի Ձէնջ Տէր
Վ. Հայրապետ, զի ընդ յուսոյն մերոյ զբարձ-
րացեալ Ընդ Ձեր Հայրապետական յամե-
նայն ժամ հովանի կալջիք ի վերայ վա-
նուցս, ի վերայ Գ. Երապատիս Վ. անահօր
մերոյ Տեառն Մամբրէի Եպիսկոպոսի
Մամիկոնենանց՝ սիրելի որդւոյ ձերոյ և ի
վերայ հաւատիս ուխտիս՝ որ ընդ նմա միա-
բան՝ որպէս խոնարհեմք Վ. Հայրապետի սրբոյ
Հօրդ, պահելով զմեզ ընդ ամրափակ
թևօք Հովուապետութեան ձերում. զի
և մեք աղօթիւք և օրհնութեամբ Ձերով
խրախուսեալ և զօրացեալ յառաջ ըն-
թացցուք ի շինութիւն սրբոյ Նկեղեցւոյ
և Հայրենեացդ, շինելով և բարեկարգելով
զդպրոցս, ի գործ դնելով զՏպարանս, և
ընդարձակելով զժառանգաւորաց Վար-
ժարանս, և դաստիարակեալ ինամ զն-
կեղեցական պաշտօնեայս և ուսուցիչս
ըստ բաղձանաց Աստուածարեալ Վ. Հ-
այրապետութեան Ձերում:

Որում միամիտ մշտնջենաւոր որդի և
հաւատարիմ ծառայ Ուխտ միաբանու-
թեան սրբոյ Կարապետի վանուց Տա-
րօնոյ:

(Աստղագրութիւն Մկրտչեան):

Ծոմ Տեառն 1874 ի Հոկտեմբերի 5

ի վանս սրբոյ Կարապետի
Տարօնոյ.

ԳԻՒՄՐԻՑԻՈՑ ՎԵՐԱՁՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ ՆԵՐԱՒՍԵԱՆ ԴԱՐՈՑԻ ՄԱՍԻՆ:

Ինչպէս Ամենագրոյս անցեալ Ը-րդ
Թուոյ մէջ հաղորդած էինք միանգամայն
խոստացած՝ այսպիսի վերնագրով՝ այս-
ինքն՝ Գ-ի-մրեցւոց վերջնական խօսքը ՚ներա-
Դպրոցի մասին՝ ստացուել ըստ բաւակա-
նին մեծապէս—ընդարձակ ձեռագիր մի
տետրակին վերայ ու քանի կարևոր տե-
ղեկութիւնք տալ հանդերձ դիտողու-

թեամբք ինչ, ահաւասիկ կկատարեմք նոյնը *)։

Թէպէտ Մայր Ընթոռոյս տպարանի ծանր և խառնակ զբաղմունքներ չներեցին ամբողջ աւտրակը առանձին հրատարակելոյ, իսկ ամսագրոյս մի քանի թիւրթիւ մէջ և առանց երկար ջանք-նաեկելի թողոյ պարունակել դժուարին լինելով. և միւս կողմանէ և ոմանց թախանձագին խնդրանաց յաձախելին տիպեալ՝ Ըրատոյ Խմբագրութիւնս արժան համարեցաւ իրրև ծաղկաքաղ ինչ ինչ պարբերութիւնքը որոշել և ընդ բովանդակութեանն հաղորդել ընթերցողաց։

Յիշեալ տետրն հետևեալ բացատրութեամբ կսկսանի։

«Իմ երրորդ տետրակը «վերջնական խօսք» անուանեցի. որովհետև դժուար թէ այսուհետև միջոց և ժամանակ ունենամ Ներսիսեան Դպրոցի մասին գրելու և իմ գրուածոց մասին եղած քննադատութեանց պատասխանելու»։

«Իմ երկրորդ տետրակի հետ տպած Ընթակեցի բարեկամիս ինձ ուղղած նամակը ես ընդունեցի իրրև մի առանձին բանաքննութիւն (բեցնեղիա) իմ Ա. Տետրակիս վերայ. որովհետև նորա մտքերը չեն համապատասխանում երկու տետրակացս լուն զաղափարին և առարկութեանը։ Այդ պարզ կարող էր տեսնել ամեն ուշիմ և ճոհչական ընթերցողը նոյն իսկ մեր 2 րդ տետրակից։ Սորա մէջ ես ասել եմ (երես 7)»։

«Այս առթիւ. . . . Ներսիսեան Դպրոցի Ցոբելեանի օրուան համար մի յանձնաժողով պէտք էր կազմուի . . . . մեր ուսումնարանաց բարեկամ յայտնի անձինքներից . . . . թող այդ յանձնաժողովը յանձն առնի մի և նոյն ժամանակ զանազան կարևոր պատրաստութիւն տեսնել, ծրագիր հաստատել՝ Ներսիսեան Դպրոցը վերջապէս տեղաւորելոյ համար պատրաստուող Սեմինարի *) աստիճան բարձրացնելու»։

«Բայց Ընթակեցի բարեկամն իւր նամակով առաջարկում այդ մտքերին բոլորովին հակառակ բան — յետ վերցնել Ներսիսեան Դպրոցից և կազմել առանձին վերջապէսանոց. հրաժարուել իմ Ա. տետրակիս Ցառաջաբանի մտքից՝ թէ պէտք է և կարելի է Դպրոցի այժմեան հոգաբարձութեան յառաջադիմական ձգտումներին կանոնաւոր և Դպրոցի գոյութեան բուն նպատակին յարմար ուղղութիւն տալ»։

«Ես խնդրել էի Պ. Ընթակեցուն իմ վերը բերած առաջարկութեանս համաձայն մի մանրամասն ծրագիր պատրաստել Ներսիսեան Դպրոցի Ցոբելեանը տօնելու համար և նամակն ձեռք տալ իմ 2րդ տետրակիս հետ։ Սակայն իմ բացակայութեան (Թիֆլիզից), ժամանակի սղութեան և այլ մանաւոր հանգամանաց արգելքներով՝ բարեկամն չէր յաջողել՝ իւր նոր պատրաստած նամակը հասցնել ինձ և իմ կարծիքը իմանալ՝ տետրակիս հետ տպելու։ Նա ուղղակի տպել է իւր մտքերը միմիայն իւր պատասխանատուութեան ներքոյ։ Ուստի ես բոլորովին մասնակցութիւն չունենալով այդ նամակի բովանդակութեանը՝ իրաւունք ունիմ նայելու դորա վերայ իրրև մի երրորդ (բացի Դպրոց ամսագրինը և Մեղուինը) քննադատութեան վերայ իմ Ա. տետրակիս դէմ»։

«Ինձ անցեալ տարուանից են մի որոշեալ ղրամագլուխ եմ յետ ձգել — առանց որ և իցէ կանոնաւոր պարբերական հրատարակութեան ևմբաթրութիւն կպնելու — Ընթակեցի բարեկամիս օգնութեամբ և հրատարակութեամբ՝ մեր ժամանակը և հանգամանքը ներածի չափ տպելու օրինաւոր կարգաւ առաջնորդուելով վերաբերեալ փոքրիկ տետրակներ Հայոց և երբեմն Վրաց լեզուաւ, որոնց նպատակը պէտք է լինի առողջա-

(*) Մի քանի ամիս ակամայ յետացնելոյս համար կյուսամք ներողամտութեան հանդիպել։

Խմբ.

(*) Այդ առաջինը (Հոգևոր դպրոցի բարձրանալու) ես մանրամասն բացատրած եմ Ա. տետրակիս մէջ, որը այժմ առաւել բացորոշ մեկնաբանութեամբ այս Գ. տետրակիս մէջ։

Խմբ. Հեղ.

պահուլեան գործնական և օգտաւէտ տեղեկութիւնները մեր երկու անտիպագոյն ժողովրդոց մէջ աճման գնով տարածելը։ Քանի՛ որ առողջապահուլեան գրուածներ յիշեալ լեզուներով դեռ լիովին պատրաստ չունէինք, ես ամէնքդ էլ համարեցի առ այժմ արգէն պատրաստ այնպիսի տետրակներ հրատարակելու՝ որոնք ծառայէին մեր Հայ հասարակութեան այս րոպէի կնճռոտ խնդիրները ըստ մեր կարեաց պարզաբանելու։ Այս մտքով թէ իմ, թէ Որնակեցու և թէ մեր այլ բարեկամաց գրուածները, մեր ղրամագլխով տպագրելիք, իրարուց լոլորովին անկախ են և ազատ։ Որովհետև Որնակեցին ինձ հետ խմբագրութիւն չէ կազմում՝ այլ տպագրող է հրատարակիչ։ Ես իմ կողմանէ իմ երկու գրուածով կամեցայ եմ կրկին զարթեցնել մեր մէջ մի երկու քնած և տակաւ մշակուած հարցեր — կանանաւորական էջ ընել, փոխանակներ և փոխ է շարժ օբինաւոր վարժապետներ (մեր հոգևոր Դպրոցաց համար) պատրաստելու։ Քնդէլը և Ներքինեան Դպրոցը եթէ այդ բոնը նպատակին և ակնկալեան համեմատ բարեկարգելու և բարձրացնելու քնդէլը։ Որնակեցին դոցա առթիւ իւր սեփհական կարծիքն է յայտնել, ինչպէս միւսները, հիմայ ես այս գրուածով զարձեալ նորա և իմ միւս քննադատից դէմ իմ կարծիքներն եմ պաշտպանում։ . . . . Ահա այսպէս է մեր հրատարակութեանց բնաւորութիւնը և նշանակութիւնը։ . . . . Իսկ որ ինչ կվերաբերի իմ մի երկու բարեկամաց ափսոսալուն թէ Թիֆլիզու կրթեալ Հայ հասարակութիւնը «սաքսափելի կապանքներ է կրում», իմ երկու տետրակաց և նոր բարեկամութեան վերայ . . . . »

«Պատասխանում։

«Ես պատրաստ եմ եղել միշտ բարեկամանալու և գործելու ամեն խելացի, աշխատասէր, մեր ժողովրդի դրութիւնը ճանաչող և մտածող հայի հետ, ամենևին միտք չունենալով թէ Նա իւր անձնական հանգամանքներով ինչ շրջանի մէջ էլ գերմանական կամ ռուսական համալսարանում է աւարտել իւր կուրսը, թէ մի յետին գաւառական գպրոցում կամ գիմնազիայի այս կամ այն դասատանը և թէ մի Ներսիսեան Դպրոցում։ Ես գործող անձանց չափում եմ նոցա հասարակական գործով և արդիւնքով՝ և ոչ զանազան առաջնին աբժանաւորութիւններով և պակասութիւններով, ոչ նոցա խորատուչ բնութիւններով այս և այն երևելի Պրօֆեսօրի աշակերտ լինելովը, — այլ՝ ազգան դիտութեանց և պատմութեան կարևոր և մի խորտցած հասարակութեան անծանօթ տեղեկութիւնքը՝ գրաւիչ, յարմար և հասկանալի կերպով՝ ժողովրդականացնելովը։ Մեր այժմեան դրութեան մէջ՝ նոյնպէս մենք ամենքս ղգոյշ պէտք է լինինք փնտրել մի գործող անձն այն համարմունքով, որ Նա յաջողել է վաստակել այս կամ այն մեր Հայ հասարակութեան մէջ։ Մանաւանդ այդ կողմից՝ շատ սակաւ նշանակութիւն կարելի է տալ Թիֆլիզու կրթեալ Հայ հասարակութեան մեծ մասի կարծեացը մի գործողի վերայ, միտ դարձնելով այդ հասարակութեան մեր ընդհանուր գործոց վերայ ունեցած չնչին տեղեկութեանց և գաղափարաց բաբելոնեան խառնակութեանը։ . . . »։

«Եւ յիրաւի, ի՞նչ է այդ Թիֆլիզու կրթեալ Հայ հասարակութիւնը։

«— Նա ներկայացնում է այս րոպէիս ուշիմ դիտողի աչաց մի անկապ, բարոյապէս քայքայված Հայ հասարակութեան մարմին *) . . . . ես կղգուշիմ այս տեղ մի առ մի միտ բերել, թէ ինչպիսի պատճառներ և շարժառիթներ լիակատար բաժանում են իրարուց Թիֆլիզի մտածող Հայերը . . . . . բարեկամնե՛ր՝ դուք փորը ինչ պիտեցէ՛ք, քննեցէ՛ք այդ հասարակութիւնը։ Այն անձինք, որ իմ տետրակաց և բարեկամութեանս վերայ ափսոսալուն կապանքներ են յայտնել ձեզ, մեկ իմացէ՛ք, ոչ ապաքէն իրաւ վերայ ևս առաւել սարսափելի կապանքներ են յայտնում։ Այն ժամանակ՝ կհամոզուիք, որ Թիֆլիզու մանաւանդ կրթեալ Հայ (գործող) երիտասարդաց խումբը, մեր այժմեան հասարակական սխալ դիրքից, այն աստիճանի մտաւոր անբարոյախոհութեան է հասել, որ համարեա իւրաքանչիւրը՝ միւս մի փոքր

(*) Այս և հետևեալ սոյնպիսի կարծեաց պատասխանատուութիւնը ևս Ազատատաց խմբագրութիւնս հեղինակի վերայ կը թողու։

աչքի ընկնող երիտասարդի վերայ պատրաստ է և ընդունակ շատ դիւրութեամբ ամենատոր բամբասանք և կասկած յայտնելու, տպաւորիչ, ցոյցի արձակութիւն, քաղաքական փոփոխութիւնը. . . . . ամեն բան ծախելու, — այս և սոցա նման մեղադրանքը և կասկածները իրար վերայ թափուելն հայը դէպ ասելու դիւրութեամբ. . . . բաւական էր որ մէկը կասկածանաց մի նշոյլ յայտնէր, այնուհետև էլ ոչ ոք հարկաւոր չի համարիլ քննել սեփական խելքով քո ասածը, գրածը, գործածը. . . . : Այսպիսի թշուառ հասարակութեան մէջ, նորա եռանդուն, ճշմարիտ գործասէր անդամները շատ անգամ դեռ ստիպուած պիտի լինին իւրեանց խորհրդ զգալու, եթէ աշխոյժ ունեցան՝ համարեա ինքնակ գործելու, եթէ ոչ՝ բոլորովին անտարբեր կենալու կամ հեռանալու. . . :

Ծիծաղելին այն է, որ ամեն կրթեալ, փոքր ի շատէ աղգեցութիւն ունեցող Թիֆլիզցու մեր գործող երիտասարդը՝ իւրեան միայն և իւր վերջի օրուայ երեւելիին՝ ազգի բարոյականութեան սիւնն և խարիսխն է համարում, իսկ միւսներին՝ վատակ, մեհրուժան, ծուռայ, չգիտեմ էլ ինչ:

«Այս էլ պէտք է միտ բերել, բարեկամք, թէ վերջի 10—20 տարիքս՝ մեր մէջ որ գործողի վերայ ամենասև կասկածները չյարուցին և իրարու կանոնաւոր, բարոյական յառաջադիմութիւնը չը խեղդեցին. . . . Ո՞ւմ չզըպարտեցին և չեն զըրպարտում զանազան դաւաճանութեանց հայհոյքով՝ սկսած մեր պլխաւորներից, մինչև ամենահասարակ խոհեմ անձն, որ դժբաղդութիւն էր ունեցել՝ ազգի գործերին ծանօթ լինելու և ազգային գործերի խառնուելու. . . . Նոյն իսկ Թիֆլիզու երդուեալ ազգ. հերոս բամբասողները՝ այսօր հեռու տեղերում չեն բամբասվում ընդհանուրի շահը. . . . ծախելում և այլն և այլն. . . .

«Փոքր ինչ մտածեցէք պարոններ, այս ինչ դրութիւն է:»

«Մի՞թէ այս ամենը մասամբ յառաջ է գալի մեր հայ հասարակութեանց վերին աստիճանի խախուտ դրութիւնից, որով ոչ հայի գերդաստունը և ոչ հայի ազգայնութիւնը իւր մէջ հաստատ բարոյական հիմքեր և իդէալներ կպարունակէ, կանուցանէ և կտարածէ. . . . Էլ բարեկամութեան հաստատուն կապ չկայ մեր մէջ. . . .»:

«Ես դեռ չեմ մեռուցել իմ մէջ հաստատ դէպի հայրենիքն կրթուած. և ինքնուրոյն բնական խելքով զարգացած հայի՝ բարոյական ուժերը: Ես կարող եմ մաքառել նորա գաղափարաց դէմ, բայց միայն իրրև գաղափարաց, առանց թոյլ տալու ինձ կասկածել, նորա զանազան ներքին անյայտ աղնիւ կամ անազնիւ շարժառիթների նկատմամբ. . . : Այս պատճառաւ թող իմ խորհրդատու ընկերները ինձ անուանեն «միամիտ», «հաւատացող», «խաբուող», բայց ես այնուամենայնիւ բարեկամ ընտրելիս և գործելիս, դեռ ուզի կհաւատամ իմ հայկական ընդհանուր և անխտիր զգացմունքիս բարոյականութեանը, քան զթէ Թիֆլիզցու պէս մի հայ հասարակութեան բամբասանքներին և կեղտոտ կասկածներին. . . . :

«Փոխադարձաբար զգուշացնում եմ իմ հրկու բարեկամներիս. լաւ դատեցէք և քննեցէք Թիֆլիզցու այժմեան կրթեալ հայ երիտասարդաց և փոքրաթիւ մտածող անձանց ամեն տրամաբանութիւնքը և հանգամանքները որպէս զի խաղալիք չդառնաք այս կամ այն մանր և ողորմելի կուսակցութեան համակրութեանց և հակակրութեանց: Եթէ ոչ՝ Ձեր արդիւնքը Թիֆլիզի հայ հասարակութեան հիմնական յառաջադիմութեան մէջ կլինի նոյն «զըօ»ից մի փոքր բան աւելի», ինչ որ ներկայացրին Ձեր մեծակայ ասպարէզն ունեցող վերջի ժամանակներիս՝ ձեր նախորդները. . . . »:

Յետ այսորիկ՝ Պ. Գ-իւմրեցին պատասխանելով իւր Ե. տետրակի երկաք քննադատներին, յառաջ կբերէ ընդարձակ կերպիւ՝ վարժապետներ պատրաստելոյ խնդիրը՝ և նորա հոդևոր Գպրանոցաց (սեմինարների) միջոցաւ՝ ինչ կերպ զարթեցնելը և քննութիւնը, պատմական տեղեկութիւնք Ներսիսեան Գպրոցի վերջի 10—17 տարիների ներքին կազմակերպութեան և ուսման արդիւնքի վերայ, և

ի յարմարագոյն ձրագիչը նա մէջ բերելով, վերջապէս՝ հնդկական դուրս է բերած իւր բոլոր դրուածքն հետևեալ եղրակացութիւնքը՝ զոր Օրագրէն քաղուած կարեւոր պարբերութիւնէ յետոյ՝ կօրինակեմք:

«Ահա այդ ծրագիրն ևս ես դուրս եմ դնում, միայն դորա գլխաւոր հիմունքը,»:

«Եղանակն ամենայն դաստատութեան յամենայն ուսումնարանս Հայոց ունի զբազում թերութիւնս ի դաստիարակութեան: Զէ նա յատկացեալ ոչ ըստ չափու կարևորութեան գիտութեան, ոչ ըստ օգտի և ոչ ըստ չափու ընդունակութեան մանկանց, որոց կրթութիւնք յոյժ հարկաւորք են իբրև զգրաւական ապառնի յուսոյ ծնողաց և Հայրենեաց»:

«Իրաւամբ ասաց մի ոմն ի փիլիսոփայից (Լիվրնից) թէ՝ նէրլայն յղացեալ է ապառնեաւ, վասն որոյ և դաստիարակութիւն մանկանց յոյժ վսեմ է ըստ ամենայն հետևանաց իւրոց»:

«Եղանակ այժմեան դաստատութեան չունի զէական մասունս, տայ զմեծ առաւելութիւն փոքու արժանաւորութեան և զիաոքր արժանաւորութիւն այնմ, որ զառաջինն պարտի ունել զտեղի»:

«. . . . . առանց ինչ պարտաւադիր լինելոյ այլոց, որք արարին, զոր կարացինն. քննողական ընտրութեամբ ասեմ զիմ կարծիս — դաստիարակութիւն և կրթութիւն պարտին զոլ առաջին վսեմ՝ պէտք վասն մարդոյ, վասն կառավարութեան և վասն ազգի»:

«Հիմն կրթութեան մարդոյ պարտին լինել կարևոր և էական գիտութիւնք, որք հարկաւոր են յամենայն վիճակի և յամենայն ժամանակի»:

«. . . . . Նախ՝ կրօնն, երկրորդ՝ Բարոյագիտութիւն, երրորդ՝ Բնագիտութիւն:

«Առաջին պատուիրանն, զոր առանդեաց մեզ Տէրն է — սիրել զԱստուած և ծառայել նմա յամենայն զօրութենէ հոգւոյ. իսկ երկրորդն Աստուծոյ և ամենայն հաստարակութեան լինել շահաբեր մարդկութեան ամենայն ձիրւք, զորս ետ Աստուած ի մարդումն և այսու կատարելութեամբ պաշտել զԱստուած, սիրել զընկերն և աշխատել վասն ժամանակաւոր և յաւիտենական երջանկութեան»:

3 «Բնագիտութիւնն, որով իմանամք զկազմ աշխարհի, Բնագիտութիւն, որ ըստ գիտնցիկ ասից Առաքելոյն Պօղոսի յետ Աստուածաշնչի երկրորդ ծնիդիրը, յորում ակներև տեսանին մեծութիւն՝ ամենակարողութիւն և նախախնամութիւն Աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանին»:

«Ընդ բնագիտութեան հարկ է անշուշտ ուսանել և զկազմութիւն մարդոյ, այն է իմանալ զայն ամենայն, զորմէ կախի առողջութիւն մարդոյ, որ ամեր և ամենից պահպանելով զմարմին, պահպանէ և զհոգին առողջ և զուարթ, որպես ասաց ոմն յիմաստասիրաց — Առողջ հոգի յառողջ մարմին»:

«Երեմն հիմն և առարկայ կրթութեան են երկքին սոքա — Աստուած, Մարդ և Բնութիւն. Ճանաչումն Աստուծոյ է հիմն ճանաչման մարդոյ: իսկ ճանաչումն մարդոյ է հիմն ճանաչման բնութեան: Ուստի և Տարօնացւոցն ոչ այսոցիկ առաքեալք պարտին լինել հիմն ուսման է ներքինաց հոգեւոր Դպրոցք Հայոց Տիրեցոյ այսու յերեսփոխս Եղեռնակոս:

Նախ՝

Ա. Սրբազան պատմութիւն:

Բ. Քրիստոնէականութիւն, որ պատմէ զՀմարտութիւնն, որք են հիմն հաւատոյ:

Գ. Բարոյականութիւն, այն է պարտաւորութիւն մարդկան առ Աստուած, առ մարդ և առ այլս:

Յայնմ տեղւոջ, ուր եղերի Սրբազան Պատմութիւն, այս ինքն՝ ցՀամարձումն Քրիստոսի և ցիջումն Հոգւոյն Սրբոյ, սկսանի

Դ. Պատմութիւն եկեղեցւոյ:

Ե. Պատմութիւն եկեղեցական կարգաց, ծանից և ծիսից:

Զ. Քահանայական — Աստուածաբանութիւն, այն է՝ պարտաւորութիւն քահանայի, որպես տարազ է ասէրպան և պատեան քարոզութեան:

Երէկոյ՝

Մարդ առ ի ճանաչել զինքն իբրև զանդամ ազգի (և շահաւիղ մարդկութեան) պարտի իմանալ

Է. Ազատմութիւն համարիւն ազգի իւրոյ։

Ը. Ձօտարազգի պատմութիւն. իսկ ընդ պատմութեան շաղկապեալ են նաև կարևոր դիտութիւնք լեզուաց։

Թ. Մայրենի լեզու (իբրև հիմն ուսումնասիրութեան)։

Ժ. Վասն պատմութեան Ռուսաց, լեզու Ռուսերէն։

ԺԱ. Վասն պատմութեան Եւրոպացւոց և օտարազգեաց՝ լեզու Գաղղիերէն։

Երրորդ՝

ԺԲ. Դասատուութիւն Մարդաբանութեան (Անտրապօլօգիայ) թէ զնմանէ զարգանան և կատարելագործին զօրութիւնք հոգւոյ (ընդ որ և՝)

ԺԳ. Հիմունք (տարերք) բնախօսութեան (ֆիզիօլօգիայի). ընդ առարկել զառողջ կազմութենէ մարդոյ, պարտի խօսել դասատուն և զպահպանութենէն և զվնասուց առողջութեան (զիգիենա). զծաղկապատուաստութենէ երևելոյից՝ ի պահպանութիւն առողջութեան իւրոյ և առհասարակ ժողովրդականաց։

ԺԴ. Բնագիտութիւն աշխարհի, ընդ ամին Աշխարհագրութիւն։

ԺԵ. Բնագիտութիւն (ֆիզիքայ) ընդ որ և ծանօթութիւն հպատութեան և շահաւետութեան թէ ի բուսականաց մասին և թէ ի լեռնային հանքագործութեանց։

Չորրորդ՝

ԺԶ. Թուաբանութիւն (Մատեմատիքայ), որ թեթևացուցանէ զհաշուական համարս և զարգացուցանէ զմիտաւոր զօրութիւնս ուսանողաց. երկրաչափութիւն և մասամբ Ալժէբրայի ծանօթութիւն։

«Ի վերջոյ ծրագիրը խօսում է նախակրթական եկեղեցական վարժարանաց մասին, որ տեղից պիտի աշակերտք պատրաստուին Ներսիսեան Հոգևոր Դպրոցը մտնելու։

Այս բոլոր բերածս ծրագրի մէջ ես շատ թեթև փոփոխութիւններ միայն արի, որ ծանօթութիւններով չծանրաբեռնեմ դրուածս։ Եւ այժմ ահա ասում եմ այս ծրագիրն էլ որ իմ Ա. տեսարակիս երկու ծրագրաց հետ՝ Ներսիսեան Դպրոցի վարչութիւնը այժմ ի նկատի առնու, կարող է կազմել մի հնարաւոր ծրագիր այդ բոլորից։

Ա. Ներսիսեան Դպրոցը պէտք է լինի լիակատար Թեմական Հոգևոր Դպրոց (Հոգևոր սեմինարիայ), այս բառի բուն նշանակութեամբ*)։ Սոյն դիտմամբ այժմեան հինգ դասատան վերայ կաւելանան երկու բարձր դասատուն ևս։

Բ. Ներսիսեան դպրոցը իւր երեք վերին դասատանց մէջ մտցնելով մանկավարժական պաշտօն+, և աւանդելով ի շարս այլ հանրակրթական առարկայից՝ քահանայութեան և մանկավարժութեան նպաստող հնարաւոր առարկայքը, պէտք է պատրաստէ աշխատասէր եկեղեցականներ և հոգ է շատ հնարաւոր վարժապետներ։

Գ. Ահա այս երկու բանը պահանջումէր իւր դպրոցից երջանկայիշատակ Ներսէս Կաթ. (մնաւանդ իւր կենաց վերջին տարիները)։ Նոյնը պահանջել է և դրոշմել իւր հաստատած կանոնադրութեան մէջ երջանկայիշատակ Մատթէոս Կաթողիկոսը։ Նոյնը իրագործելու հրաւէր է կարգացել շատ անգամ մեր արդի ուսումնարանասէր Վեհափառը։ Նոյնը պահանջել են 61 թեմական նին պիտաւոր ծրագիր կազմող քանի մի առաջաւոր աղգայինք Թիֆլիզում։

Դ. Այս նպատակը սոյն իսկ տարուանից կարելի է և պէտք է հաստատապէս իրագործել։ Դորա համար հարկաւոր է։

1) Դպրոցի սոյն տարեսկզբից ամեն տեսակ հնարովմամբ եւ ջանքերով ընտրել մի վանկավարժ տեղւոյ Ներսիսեան դպրոցի համար։

2) Ընդունել վարչութեան անդամոց բազմաց համոզմամբ իմ առաջին եւ երրորդ տետրակաց մէջ յառաջ բերած երեք զանազան անծանց

(*) Այս Պ. Ծօդուածագրի մի նախապաշարեալ (զոր ակամայ կտիպուխիմք ցաւ ի սիրտ ասելոյ.) գաղափարը կերևի, զոր պարզապես հասկացնելոյ համար արգելաւոխի ինչ ինչ հանգամանքներ չներին մեզ աւելի խօսել։ Սակայն այսքանը կյաւելուսք, զի երբ դպրոցի դրամական միջոցն կիներէ, առանց առնձանական վտիտուրեանց, հնչտ է դասատուները յաւելու

Ծ. Խ.

ծրագրաց ոգին, առարկայից դասաւանդութեան չափն ու եղանակը կամ ամբողջ ուղղութիւնը :

3) Ա յս ծրագրերից մանկավարժ տեսչի ջանիւք կազմել մի լիակատար ուսումնակրթական ծրագիր եւ դործ դնել նոյնը երկար ժամանակ անփոփոխ եւ անխախտ:

4) Այդ ծրագիրը այն կերպի շրջահայեցութեամբ պիտի կազմուի, որ մինչի բարձր դասատները աշակերտք, եթէ ցանկանան, կարողանան փոխուել ուրիշ դպրոցներ այն տեղից. իսկ մեր գաւառաց Հոգեւոր դպրոցներից կարողանան մանել այս կամ այն դասատանը Ներսիսեան դպրոցի, այս պատճառով այդ ծրագիրը հրապարակաւ քննելուց յետոյ, դորա մասերը պիտի դառնան (ըստ կարդադրութեան Հոգեւոր իշխանութեան) եւ ծրագիր մեր գաւառական հոգեւոր դպրոցաց համար, որոնք բոլորը ներդաշնակ կազմուած լինին իրար հետ:

Ե. Վերը բերած հիմնական նպատակի իրագործումը, և Ներսիսեան Դպրոցը բարձրացնելը՝ կարևոր է այժմ մանաւանդ, ըստ որում նորա այս 10 – 17 տարիների ուսումնակրթական կազմակերպութիւնը և բոլոր բարոյական արդիւնքը՝ հնձաւոր հնութեան պակ առնողի աչացը կներկայանայ. . . . :

Զ. Երկրորդ ընծայաբերութեանս իմ ջրաածով կուզէի ցոյց տալ, թէ այդ նպատակը շուտով իրագործելը ստիպողական է, ժամանակ չկայ երկար սպասելու. մեր ներկայ հանդամանաց մէջ, երբ պէտք է մէկ կողմ դնել այդ սուրբ նպատակի համար ամեն կիրք, կռիւ և շփոթ, եթէ ոչ՝ մեր ուսումնարանները ինքն իրենց կհասնեն յիտին խեղճութեան, առանց որևիցէ բռնաբարութեան:

Է. Ներսիսեան Դպրոցի. . . . վարչութիւնը և այժմեան Հոգաբարձութիւնը շատ լաւ և ոչ պակաս մեղանից կարող են հասկանալ վերը բերածս նպատակաց սերտ կապակցութեան և իրագործման նշանակութիւնը: Ո՞նչ է Հոգաբարձութեան իրաւասութիւնը և ուսումնարանի մէջ գործելու չափը:

Ը. Առանձին հայկական վարժապետանոցներ հիմնելս և կամ առանձին վարժապետական բաժանումներ Ներսիսեան Դպրոցին կպցնելս ես շատ անյարմարութիւնք և դժուարութիւնք կը տեսնեմ:

Թ. Ես համաձայն չեմ Որնակեցի բարեկամիս ակնարկութեանց, որով Թուի թէ՝ կամի ասել, իբրև թէ՝ Էջմիածնից շատ սակաւ յոյս պիտի ունենանք. ընդհակառակը՝ մենք ամեն կերպ պէտք է նպաստենք Էջմիածնայ յառաջադիմութեան և ոչ անդամալուծենք այն տեղ տեսնուած ջանքերը. . . . և եթէ Էջմիածնից չսպասենք, ոչ պէտք է փընտռել մեր կեդրոնը, և յառաջադիմութիւնը, ևս գոյութիւնը. . . . :

Ժ. Մեր Հոգևոր Իշխանութիւնը և մեր հեռատես Հոգաբարձութիւնը պէտք է՝ մեր Դպրոցների յառաջադէմ և փորձուած աշակերտներից աւարտողները մասամբ պատրաստեն և ուղարկեն Եւրոպայի և Ռուսաստանի վարժապետական ճեմարաններում:

ԺԱ. Բրօշիւրների նշանակութիւնը, իբրև կարապետներ ապագայ մեծագիր ամաղրաց: ,,

Պ. Գիւմրեցին իւր գրուածքի վերջաբանի մէջ կ յայտնում Որնակեցւոյ մի կարծիքի դէմ այսպէս:

„Ես համաձայն չեմ Որնակեցու այն կարծիքին, թէ՝ Էջմիածնում վեհարանը ամեն ջանքը առանց նշանաւոր օգուտի կմնայ և հիմնած ճեմարանը — ակադեմիան — ծխական դպրոցին աւելի չէ բարձրանալու և այլն: Ես իմ՝ առաջի տետրակի մէջ մի ակնարկութիւն արի այդ հարցի մասին, բայց ակնարկութեան պլանաւոր դիտումն էր հասկացնել թէ՝ Էջմիածինը իւր ճեմարանի համար առանձին աստուածաբանական դիտութեանց տեղակ՝ վերջապէսներ պիտի պարտադրէ Եւրոպայում, որ արդարև ճեմարանը այն լինի՝ ինչ որ ազգը սպասումէ: Ի՛նչ որ կվերաբերի կլիմային և վանքի. . . . ուղղութեանը, ես այսքան կասեմ առ այժմ, — ծնողք իւրեանց զաւակունքը Էջմիածին ուղարկելով՝ նոցա զոհ տուած չեն լինել՝ ամառուան կլիմային. որովհետև վեհարանը ժառանգաւոր աշակերտաց համար մի պատուա-

կան տեղում՝ Արագածի արևելեան ստորոտում՝ . . . ամարանոց ևս պատրաստում ենք *)։

Այս կերպ Պ. Որնակեցի, ամենքս պիտի աշխատենք Վեհափառի հետ՝ մեր Մայր Աթոռոյ անյարմարութիւնքը սակաւ առ սակաւ անհետացնել՝ և ոչ թողնել ևս առաւել ծանրանալու և ազգի միակ կեդրոնը և փրկութեան վայրը արհամարհելու։

Ցետոյ ինքնութիւն էլ ի՞նչով կարող է վերանալ, եթէ ոչ՝ այնպիսի հաստատութիւններով էջմիածնում, որոնք պահանջին փոքր իշատէ զարգացած անձանց ներկայութիւն ևն։

Ուրեմն ցանկանք յաջողութիւն այն բոլոր բարեկարգութեանց էջմիածնում, որ այժմ յոյսեր է ծանուցանում՝ ամեն տեսնողի և փութողի մէջ։ Թէ թիկունք լինինք մեր ազգի Վեհափառի ջանքերին՝ և ոչ նոցա ջլատենք. . . . ։,,

Ի ՂՈՒՉԱԲՒԼԱՆ ԳԻՒՂ.

Այս տարի՝ անցեալ Յուլիս ամսեան՝ քանի մի գործոյ առթիւ հարկ եղև ինձ գնալ Ղուչխլիքիակ անուանեալ գիւղն, որ Վայոց ձոր (Դարալագեաղ) գաւառի վերջին և լեռնաբնակ գիւղն է համարվում՝ որոյ մերձակայ բարձրաբերձ և շղթայացած լեռները իւրեանց վրայի թաւ անտառներով զարդարուած և հովիտների դաշտավայր և սիզաւէտ կանաչութեամբ գոգցես գեղեցիկ և աւետ տեսարան մի և զբօսարան հներկայացնեն մարդոյ առաջև, նա մանաւանդ երբ այն լեռներից յորդառատ և քաղցրահամ աղբերակները հետ զհետէ իջանելով և ի մի վայր գումարվելով կբազմացնեն Արփայ անուանեալ գետն, որը իւր սրընթաց քայլերով հասանելով նոյն գիւղի դիմացն, այնուհետև անանցանելի է լինում մի կողմէ միւսը՝ մանաւանդ գարնան ժամանակ երբ աւելի և մեծ քանակութեամբ ջուրը բարձրացած է իւր շրջանից, և այսու իսկ պատճառաւ թէ կողմանց բնակիչք և օտարակողման վաճառականք և թէ տեղւոյն հանքային ջրերը գնացող երթևեկք մեծ նեղութեամբ կկատարէին իւրեանց անցուդարձն։ Ուստի այս նեղութիւնները և դժուարութիւնները տեսնելով յիշեալ գիւղցի բարեպաշտ ոմն Մարտիրոս անուն և կամելով դիւրութիւն տալ նոցա երթևեկութեանց՝ իւր սեպհականութենէն ցամաք հարիւր մանէթ ծախ դնելով այն գետի վրայ մի հոյակապ և քարաշէն կամուրջ կառուցած է, որ որ Աստուածահաճոյ բարեպաշտութիւնը արդարև արժանի է գովութեան, որ գիւղական շրջանի մէջ գտնուող հայազգէ այս յիսին և պաղած ժամանակում իւր ազգային մեծագործութեան և բարեպաշտութեան նշանը կտեսնուի, և սորա համար՝ ինչպէս կպատմեն՝ մտադրութիւն ունի նա և նոր քարաշէն եկեղեցի կառուցանել գիւղի մէջ, ըստ որում այժմեանն քայքայուած լինելով՝ անվայել է նորա մէջ Աստուածպաշտութիւն կատարել։ Ուրեմն բարեմաղթենք առ Աստուած, զի այսպիսի բարեպաշտ և հասարակութեան օգուտ զգացող անձինք պարգևէ մեր Ազգին, որ միշտ իւրեանց ազդօգուտ և բարեպաշտութեան գործերով փայլին մեր մէջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ԵՍԱՅԵԱՆՑ.

1874 ամի յունիսի 20։

ՎԱՍՄ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՕՆԱՆԵԱՆՑ ԵՒ ԻՐ ՆՈՒԻՐՆԵՐ։

Ի 12-ն ամսոյս՝ Մայր Աթոռս էջմիածին ուրախութեամբ հիւրասիրեց զվսեմափայլ Յովհաննէս Ս. Յօնանեանց՝ զայրն բազմածանօթ եւ բարեհամբաւ, որ ընկերակցութեամբ իւր Մեծ. եղբօր Ալեքսանդրի Յօնանեանց, որդւոյն Ստեփանի եւ Ալէքսան փեսային եւ այլոց երկուց անձանց՝ եկած էր յուխտ եւ յերկրպագութիւն Ս. էջմիածնի եւ նուիրական Սրբութեանց որ ի սմա՝ եւ շրջակայ վանօրէից։ Սակաւ կատարեց

(*) Ես լսեցի թէ մի հայ ամէմ աշխատութեամբ Եվկալիպտի Գլօբուլուի սերմեր բերել տալ Էջմիածին, որ Վեհափառի հրամանաւ ուշադրութիւն դարձուի այդ ծառի տնկման յարմարութեանը Էջմիածնում. եթէ որ և իցէ կերպով յաջողին փորձերը, այն ժամանակ փոքր առ փոքր անտառ տնկուի Էջմիածնայ չուրջը, որով գուցէ մեր Մայր Աթոռոյ պատուական կլիմային վերանայ տենդը, ինչպես վերացել է միւս մի քանի տենդային տեղերից (Խաղխայի մի երկու տեղում, և այլն)։

այնպիսի՛ մի պատասխանութեան դիւացումը, զոր ամենայն ճշմարիտ Հայ սրտին մէջ մշտավառ պէտք է ունենայ ի պանդխտութեան, եւ եթէ ծեռնհաս է՝ պատշաճ է անմիջապէս արտայայտել այն սէրը, զոր ունի առ Մայրն Հայաստոյ Ս. Էջմիածին. այն է՝ գործնականապէս կատարելով իր ուխտը եւ գալով յայցելութիւն այս սուրբ կեդրոնիս, որ յաւէտ լինելոյ է անլուծանելի շաղկապ կրօնական եւ բարոյական միութեան ամբողջ Հայ Ազգի՛ ուր եւ ցրուած լինի նա իւր վերջին քաղաքական կենաց վերջանալէն յետոյ: Այսպիսի պարտուց ճանաչումն հետզհետէ պէտք է զօրանայ, եթէ Ազգն կցանկայ որ Ս. Էջմիածին, իբր Ազգային Հոգեւոր նշանակութիւնը անթերի կատարէ եւ իւր ազգաշահ ծեռնարկները անխափան իրագործէ:

Եւ ահա այս առթիւ վստահայել ձովհաննէս Ցոնաեանցի շրջանկայտ տեսութենէն չկրցան ծածկուիլ այն բարեվիճ ծեռնարկներն ու նորահաստատ բարեկարգութիւնք՝ զոր վեր վերնափառ Հայրապետ ընդ միշտ ջանացած է ի գործ դնել Ս. Աթոռոյս պայծառութեան, ներկայ եւ ապագայ Միաբանից մտաւոր եւ բարոյական յառաջադիմութեան նկատմամբ, ուստի ի նշան իւր խորին համակրութեան՝ եւ իբրեւ յայտարար իւր ազգային պարտքերը քաջ ճանաչելոյն՝ ի 15-ն ամսոյս նախ քան զմեկնիլն ի Ս. Էջմիածնէ՝ ուղղեց հետեւեալ գրութիւնը առ վեհ. Հայրապետ:

ՎԵՀԱՓԱՌ. ՀԱՅՐ.ՊԵՏ.

Ներմակարօտ սիրով և հոգեառնէն անձկանօք երկար դողով իմ յուսա և յերկրպագութիւն մեծահոչակ վանից Ս. Էջմիածնի և ամենայն նուիրական սուրբ տեղեաց՝ որք շուրջ զսովաւ գտանին, աստղաժալիր լոյն ցնծութեամբ սրտի նկատեալ տեսի, զի նորանոր բարեկարգութեանց արդիւնք յայտ յանդիման երևանին յամենայն քայլափոխս և վանքն գնոր լոյն զգեցեալ է և զգենու կերպարան վայելչութեան և կենդանութեան երէկ նորակառոյց շինուածոց յաւելմամբ և երէկ արդէն ահղելոցն բարեխնամ նորոգութեամբք:

Օյայսոսիկ գովանի արարս մեծագործութեանց համարելով անուրանալի արգասիս ազգասիրական փութոյ Վ. Հիւիդ և քաղցրագին խնամոյ, որովք ջանս ի ջանս յաւելուք զԳերագահ Ընծուն Ս. Էջմիածնի օր քան զօր փառաւոր և պատկառելի կացուցանել յաչս մերայնոց և օտարաց և ըստ հոգեւոր նշանակութեանն աղբերացուցանել ի սմանէ յընդհանուրս Հայաստան աշխարհի և յամենայն տեղիս, յորս ցրուեալ են պանդուխտ Հայկազունք, զհոգեւոր դաստիարակութեան ըղձոյդառատ ուղիս ընդ ձեռն Նորակառոյց Ճեմարանի և զբարոյական կրթութեան գկենցաղօգուտ արդիւնս ընդ ձեռն Ընտրատ պատուական Ընծագրոյ, թողից առնել գայլ բարեվաստակ ձեռնարկս Վ. Հիւիդ, յորոց սակի են խորանաշէն Թանգարանն, Նորատունկ անտառն և այլ բազմատեսակ սիրագործութիւնք, որոց նպատակն է պայծառութիւն վանից Ս. Էջմիածնի և բարօրութիւն Միաբանից սորին. սոցին աղագաւ կամ եղև ինձ ի հաւատս խորին յարքանաց իմոց առ ամենայն ձեռնարկս Վ. Հիւիդ և իբրև նպաստ դուզնաքեայ առ անվհատ իրագործութիւն ազգաշահ նպատակաց ձերոց նուիրել նախ՝ ռուպլիս արծաթոյ երեք հազար Նորակառոյց Ճեմարանի սակս կրթելոյ ի նմա տակաւին այնր գումարին զորդեդիր մի, երկրորդ՝ երկու հազար ռուպլիս ի վերանորոգութիւն սրբոյ Տաճարին Էջմիածնի, որում կարօտի մեծապէս, և երրորդ՝ զառեալն ինև փոխարինաբար պինդ հազար վեց հարիւր յիսուն և չորս ռուպլիս և պահանջեն զինուն կոպեկս ի գինս եռատեսակ թղթոց, միոյ փոքրա-

դիր արագատպի և տպարանական մամլոյ*)՝ բաշխել յօգուտ Տպարանին և յարդիւնաւոր յառաջադիմութիւն նորին։

Ի յայտ գոլով, որ Վ. Տէրտէրեան զգուշանալու պայմանով՝ զորս նուիրեմ յարդար վաստակոց իմոց, ընկալցի ի հաճոյս իւր և համարեսցի առհաւատչեայ մեծի համակրութեան իմոյ առ ամենայն մեծագործութիւնս իւր, որովք սեսի զԱթոռն զարդարեալ և վայելչացեալ, մընամ

Վեհափառ Տէրութեանդ

ԱՀԻՆԱԿԱՆԱԳԻ ԾԱՌԱՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՆԱՆԵԱՆՑ.

Ի 15 Հոկտեմբերի 1874 ամի,

Ի Ս. Էջմիածին ի Վաղարշապատ։

Վսեմափայլ Յօնանեանցն սովաւ անշուշտ կցուցանէ Թէ՝ ո՛րչափ լաւ եւ հիմնովին կճանչնայ իւր ազգին ներկայ դարուս մէջ ունեցած մասնաւոր եւ բարոյական պահանջները եւ շատ աղղայիններէն աւելի հասոն եւ նորը հեռատեսութեամբ զգացած է Ս. Ծոռոյս այն հոգեւոր մեծ նշանակութիւնը, զոր ունեցած է Սա ի հնումն եւ զոր ունենալոց է ի ներկայումս եւ յապէս Ազգիս կրօնական զարգացման եւ բարոյական դաստիարակութեան վերաբերութեամբ. նորա բարեսլաշտութեան եւ աղգասիրութեան այս նշանաւոր քայլը, — որ Թէպէտ առաջինն չէ ի ցոյց ազդի վերայ ունեցած սիրոյն, — փոքր խրախոյս չէ մեր Վեհափառ Հայրապետի համար եւս, որ իւր գործառնութիւններն եւ ձեռնարկներն յաջողութեամբ պսակուած կհամարի այն ժամանակ՝ երբ այսպիսի երեւելի ազգայնոց բարոյական ձեռնտուութեանց կը հանդիպի եւ կխխիմարի այն յուսով Թէ՝ յարատեւ եւ արդիւնաւոր կենան նորա այսպիսի բարեսէր զգացմանց մէջ եւ իւրեանց բարեգործութեանց կոթողները կանդնելով առ դուռս նորոյս Սիօնի՝ կ յանկուն Ս. Ծոռոյս պարծանքը, կխրախուսեն վաստակողաց սրտերն եւ հոգին՝ եւ անմահ յիշատակ անուան կժառանգեն ազգային յիշատակարանաց մէջ։

Սիրելի՝ ընթերցող, քո Մայր Էջմիածին՝ Ազգասէր Յօնանեանցի բազմարդիւն յիշատակները արծանագրելով իւր ազգասէր որդւոց ցուցակին մէջ, անտարակոյս է, որ դու ես նորա փառաւոր անունը սիրով տպաւորեցիր մտացդ ու սրտիդ մէջ, որպէս զի ըստ որ կարեաց աշխատիս առ Ս. Էջմիածին ունեցած պարտքերդ ճանաչել եւ եռանդնալից փութով կատարել։

«Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին»։

ՀՐԿԻԶՈՒԹԻՒՆ Ի ՁԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ներկայ Թուոյս մէջ ակամայ եւ վիշտ ի սիրտ պարտաւորուած եմք նորաբաց Ձեմարանի վերայ պատահած տխրատխրութիւն մի ծանր դժբաղդութիւնը գուժելոյ, յորմէ անշուշտ իւրաքանչիւր Հայ պիտի վշտանայ եւ տրտմի։

Ամսոյս 16-ն էր՝ Ուրբաթշաբթի օր՝ մինչ առտուանց Ժամական ժամ իբր 2—3 ի միջոցներուն՝ Ձեմարանի մէջ աշակերտք

(*) Ձհաւասիկ ստացօր կհրատարակեմք Պ. Յօնանեանցի Տըպարանիս ի նուէր տուած պարագայից հաշիւը եւ ցուցակը.

1, Վասն 150 պուրակ (օզմայ) տպարանակ. Թղթոց (ի թ. 18) իւրաքանչիւր պուրակն 3 ր. 40 կ.	ր.	կ. 510
2, Վասն 200 պուրակ Թղթոց (ի թ. 20) իւրաքանչիւր պուրակն 3 ր. 50 կ.		660
3, Վասն 650 պուրակ Թղթոց (ի թ. 24) իւրաքանչիւր պուրակն 3 ր. 10 կ.		1955
4, Վասն այլ եւ այլ ծախուց (մոմաշորի, Թաղիքի, խսիրի, չուանի, կարելաԹելի եւլն) ի պէտս հանից Թղթոց.		196 88
5, Վասն ճանապարհածախուց 640 փթ. Թղթոց ի Մոսկվայէ ցՏփխիս, իւրաքանչիւր փութն 1 ր. 80 կ.		1152
6, Վասն միոյ միջակաղիր մամլոյ (495 ր.) եւ փոքրիկ արագատպի (688 ր.) ընդ ծախուցն ձեռնադարձի ի պերլինէ ցՍ. Էջմիածին, եւ արագատպինն ի էնդօնէ ցՓօթի, համայնն իմիասին.		1183
Ամբողջ գումարն	5654	88

և դասատուք իւրեանց պարտաւորութեամբք զբաղեալ էին, արտաքուստ մի քանի անձինք վազ ի վազ կըսլանան դէպ ի Ա՛ռմարան և կիմացնեն տանեաց յարևմտեան կողմն ծուխ ինչ երևիլը, և Ա՛ռմարանի բակին արևմտեան կողմը կառուցուած նոր շինութեան աշխատաւորներն մի քանի վարպետ անմիջապէս կդիմեն և կելնեն տանեաց վերայ։

Գոյժը կհասնի Ս. Էջմիածնի Վ֊անուց մէջ ևս, և անսի թէ Վ֊ահարանէն, թէ Տպարանէն և թէ այլ աշխատաւորներէն՝ ինչպէս նաև ամբողջ Մխալանութիւն Մայր Եկեղեցւոյս՝ և հիւր գտնուած Գ֊եր. Մակար և Սարգիս Ս. Էջմիածնայ սուն և Թադէոս Երուսաղէմայ սրբոց դրելոց հետ՝ և Վ֊ազարշապատէն բաւական մարդիկ փութով հասած էին և հետզհետէ կհասանէին ի Ա՛ռմարան։

Յառաջահաս անձինքներէն ոմանք կարծելով որ ծուխը՝ հետևաբար նաև հուրն խոհանոցի ծխնելուզէն է, — որովհետև նմին մօտիկ տեղէն կելնէր ծուխը, — անմիջապէս կսկսանին երկաթեայ թիթեղները՝ տախտակները ևն քակելով ծխնելուզի բոլորտիքը բանալ կրակը արմատէն այս ինքն է՝ ծխնելուզին կից տանեաց պարագաներէն դասնելոյ և շինուցանելոյ ակնկալութեամբ, սակայն կրակն ոչ թէ ծխնելուզին կից, այլ բաւական վերև, այս ինքն՝ ծխնելոյզն տանեաց կողին հարաւային բաժանման մէջ լայնութեան միջակին մօտ կգտնուէր, իսկ կրակն դէպ իվեր հիւսիսային ծայրին մօտ էր, որոյ նեղքև ևզած (ձեմելիքի — սօֆա) կաճածեփ կամարին և տանեաց միջոցն կարի նեղ՝ իսկ դէպ ի վայր (ձեմելիքը և անոնեակները ի միմեանց բաժանող պատերուն վերայ) բաւական արձակ լինելով, կրակն դէպ ի արձակ կողմերն դիմած միջոցին՝ կարողացած է ծխնելուզին մօտիկ տեղ դասնել և անսի ծուխ դուրս տալ, ինչպէս որ ականատես վարպետք պատմեցին, և երբ առանց կարևոր պատրաստութեան՝ ծխնելուզին շրջակայքը կբանան՝ կրակն աւելն օդ և հով կստանայ և կսկսանի արագ բորբոքիլ և արծարծուիլ։ Թէպէտ բաւական բազմութիւն հասած և դիզուած էր, այլ դրեթէ համայնն այսպիսի կրակին անսովոր և անփորձ դոլով՝ մանաւանդ ոչ հրշէջ ջրհան, ոչ կացին և տապար և այլ յարմար գործիք՝ ինչպէս նաև ջուր կրելոյ առիններ լինելով՝ բայ ի հողային կուժերէ, կրակին բոլորտիքը անմիջապէս փուզանելով շրջուցանելոյ համար. և ոմանց անխոնջ ջանքերն ապարդիւն կերթային այնքան՝ զի բազմավիշտ և սրտաբեկ յուսահատութիւնն համայնից վերայ կերևէր։ Ի վերայ այսր ամենայնի՝ դարձեալ ժողովուրդն՝ ծերք և երիտասարդք՝ անխոնջ ջանալով կաշխատէին մի կողմն կրակը մարելոյ և միւս կողմն մշակ համայն պարագայքը, հանդերձատան արկղները ևն մինչև դռները և մի քանի պատուհանները ազատելոյ։

Իսկ Վ֊ՀՀ. Հայրապետ՝ բոլորովին ևրևսաց գոյնը շրջած՝ քալելոյ կարողութենէ զրկուած՝ սրտաթունդ և դողդոջուն՝ խսպառ տխրազդեաց սրտիւ՝ մարելոյ վտանգի մէջ տագնապելով՝ աչքերը արտասուօք լցուած՝ ամենեցուն կաղաչէր և կըյորդորէր աշխատել և միջոցներ ցուցանելով կքանայր կրակին առջևը առնուլ։

Ուսոի ժողովրդեան մեծ և հռանդուն մասն ևս աչք յարտասուս՝ և առաւել կարեվեր և կարեկից ղգացմամբ ոգի ի բուին ունելով՝ սկսաւ այլ միջոցներ ձեռք առնուլ, և երեք —չորս կողմին՝ յարտաքուստ և ի ներքուստ կրակին շարունակութիւնը և տարածումը ընդհատելոյ համար տեղ տեղ թէ ի տանիս և թէ ի միջին՝ Հանդիսարանի դրան առջև եղած ձեմելեաց մասի տախտակամածը կտրատել և քանդել: Հանդիսարանի և Հրանդանոցի պատերուն բարձրութիւն և առանձին դիրքն թէև ղՙեմարան որոշ մասերու բաժանածի պէս էր, այլ ի ներքուստ ձեմելիքի տախտակամածի վրայով՝ և յարտաքուստ բոցին բորբոքն և ապրութիւնն ներգործելով երկաթեայ թիթեղներու վերայ՝ այրելով կրկճկեցներ և կբանայր ներքևի տախտակները, որով հեղհեղ տախտակներն ևս տաքանալով՝ կբռնկէին. և ահա սոցա առջևը առնոյ համար՝ Հրանդանոցի վերայ մարդիկ եղած կրակին դէմ կհսկէին և կժերով ջուր տանելով՝ տաքութենէ և կրակէ ազատ կպահէին տանիքը՝ թէ և խառնաշունչ և հակառակ փչած հողմին՝ հրկիզութեան ծուխը նոցա վերայ շրջելով՝ կսպառնայր խեղդել զնոսա: Ըստ այսմ Հանդիսարանի կողմն ևս հսկելոյ համար մարդիկ կպահէին՝ մանաւանդ թէ այն կողմն խիստ երկիւղալի և վտանգաւոր էր, ևս եղած գործիքն անբաւական, որ միայն կուժերով ջուր պիտի հասցնէին և թափէին կրակին բոլորտիքն: Վասն որոյ Հանդիսարանի մի կողմն ևս երկաթեայ թիթեղաց ներքեւէն կրակն կարողացած էր կամարին վերայ սպրդել և աննշմարելի կերպով գըմբէթի մէջէն այրել, որ Հանդիսարանի մէջէն՝ գմբէթի ներքև իսպառ կաճածելի և քանդակագործ լինելով՝ չէր երևէր և կկարծուէր զի անվտանգ ճնացած է, մինչև որ գմբէթի մէջի կապ եղած կաղնեայ ամուր փայտերն այրելով՝ միանգամայն ամբողջ գմբէթն ահագին շառաչմամբ խոնարհեցաւ:—Ասյս միջոցիս՝ մի կողմէն յուսահատութիւնն և միւս կողմէն կարեկից ղղացմանց եռանդուն սէրն աւելի ևս դրդռուելով և բազմապատկուելով՝ ծայրագոյն ջանքեր ի գործ դրուեցան, այնքան որ կարողացան թէ տանեաց վրայէն և թէ ի ներքուստ Հանդիսարանի դռան առջևէն և նոյն ուղղութեամբ ներքին յարկէն կէտ նպատակի դրուածին համաձայն կրակին դէմ կատաղութեամբ մաքառել՝ գործիք ունենալով միայն՝ կուժերով և պղնձեայ ամաններով ջուր թափելը և թիակներով հողախառն (գեխոտ) ջուր նետել կրակին մօտեցած տեղուանքը, միանգամայն վերնայարկի՝ Հանդիսարանի դռան մերձ կտրուած տեղէն՝ թրջած դորգով՝ Հանդիսարանի ներքին յարկի ՛ե-մարանի մէջ բանած դռնէն դուրս ելած բոցոյն դէպ ի ներքին յարկի առաստաղը յառաջանալոյն և բռնկցնելոյ սպառնալեաց արգելք դրին:

Այսպիսի ջանիւք՝ հակառակ ոմանց յուսահատ բանից՝ երեկոեան դէմ ասիական ժամ 10ի միջոցներուն՝ կրակի կատաղութիւնը Հանդարտուեցաւ, և ՛ե-մարանի կէս մասն ազատութեան շաւղին մէջ մտաւ: Ուսոի ժողովուրդն ուրախութեամբ լցուած այնքան ոգևորեալ էր՝ որ սկսաւ վտանգին առաջը բոլորովին առնելոյ համար՝ թէ Հանդիսարանի ներքեւ խոնարհած և այրուող փայտերը՝

է որ կիսայրեաց՝ է որ ամբողջ կրակ դարձած կաղները՝ տաք երկաթները ևլն դուրս քաշել և արտաքին բակին մէջ նետել: Յայտ պահու սրարշաւ հասան Երևանի արքունական պաշարին կոչուած հրշէջ խումբն իւր գլխաւորի հետ, որ քառասուն հոգիէ կբաղկանայինի և հետները ունէին մի քանի բահ, թիթեղեայ դոյլ և մի երկաթ «ի-լը-նի» կոչուած: — Առքա առաւօտուց կրակին նոր սկսած միջոցում՝ Դաւառապետի կոչնական խըրկուած յատուկ սուրհանդակաւ կոչուած էին—: Այս խումբ ևս միանալով և դոդջես նոր այժ տալով վաստակաբեկ աշխատաւորաց՝ ջրով և բահերով կրակին վրա նդաւոր եղած տեղից մէջ մտան և մարելով՝ և կիսայրեաց փայտերը արտաքս քաշելով և նետելով՝ գիշերոյ առաջին պահու ժ. $1\frac{1}{2}$-ին բաւական ապահովութիւն տեսնու եցաւ կրակին դէմ: Որով արքունական հրշէջ խմբին կէս մասը Երևան վերադառնալով՝ մնացեալն՝ և նոցա հետ մերձ չիսուն հոգի պահապան դրուեցան, և մինչև առաւօտ հսկելոյ համար կարևոր այլ պատրաստութիւնքը ևս կարգադրած՝ ժամ ձիշտ 3 ին՝ Վ. Կ. Ա յրապետ վերադարձաւ ի Վ. Կարան՝ գիշերապահներու հետ ի Ա՛ղամարանի թողլով զմանն ի Մխիթարեանից՝ և զիւր հոդևսուն որդի Սահման Նախիկոպոս Սանասարեան, որք մինչև ցառաւօտ հըսկեցին *):

(*) Ոչ սակաւ մխիթարութիւն է և այս՝ զի կրակն գիշերոյն չպատահեցաւ և աշակերտաց և այլոց աշխատասէր մարդկանց կորստ և վնաս ինչ չղիպաւ:

Ա՛ղամարանի այրեցեալ մասին մէջ հըրկիզեցան Ա՛նդիսարանն, երկու Նշանքանք, Ա՛նդերձատունն, Սեղանատունն, Խոհանոցն, Տնտեսատունն, անտեսի սենեակն, վերին և ներքին յարկաց հարկատորք և լուսայարանք, լուսայատունն, Ա՛նդիսարանի ներքև եղած ի պէտս վերակացուաց յատկացած երկու սենեակք: Նոյ ազատեցեալ մասին մէջ մնացին Ա՛նդիսարանի դիմաց երկու սենեակ բաղկացեալ Ա՛իւանդանոցն, Սերատանն, ամբողջ դասարանք, վարժապետական Խորհրդարանն, Տեսչի սենեակն, և այլ երկք սենեակք և մի պահարան:

Ընդ այս դժբաղդ արկածին հարուած ծրքան ևս Ասան հպարտ մնանէթէն ասելի նիւթական վնաս տուաւ Ս. Ներսիսեանի և Ընդհ՝ և ա բարոյապէս բաւական մեծ վնաս և արտմուԹիւն ապատորեց Վ. Կ. Ա՛յրապետի՝ ինչպէս նաև համայն ողջամիտ և ձշմարիտ Ա՛յոց սրտից մէջ, սակայն սոքա երբէք չպիտի զօրեն և ոչ ինչ վնասուԹիւն չպիտի ներգործեն ինչպէս որ ներգործած չեն Վ. Կ. Ա՛յրապետի մերում, ընդհակառակն՝ առաւել ևս ոգևորուելով և գօսէպնդուելով՝ առ Ստուած ապաւինուած պէտք է ջանալ նպատակը և ձեռնարկուած մեծ գործը՝ առանց ընդհատելոյ և թուլանալոյ շարունակել և արդիւնաւորել: Ուր հռանդն սէր և հաստատամիտ նպատակ կայ, անդ վհատուԹիւն չկայ և ամեն արգելք և արկած կյաղԹուի, և այս բազմից ապացուցեալ է բաղում օրինակօք: Վ. Կ. Ա՛յրապետ՝ առանց երբէք վհատելոյ՝ և բաղում խնամօք և տաժանմամբք՝ երկարժամանակեայ խորհրդով և պատրաստու-

թեամբք յարդարած և ի գործադրութիւն բերած բուն և նուիրական նպատակը՝ յաւէտ ապաւինելով առ Աստուած և Ազգիս համակրութեան և ձեռնտուութեան՝ ինչպէս նաև Օգոստ. Պայսեր Ո. ուսոց բարեմիտ ակնարկութեան և խնամոց հանդիպելով՝ պիտի շարունակէ և Աստուծոյ յաջողութեամբ պիտի արդիւնաւորէ, ինչպէս որ փորձով ևս կտեսնուի, զի Ա՛ևմարանի կէս մասին այրուելէն ետքը՝ հազիւ մի քանի օր անցաւ՝ Ս. Էջմիածնի Պ. ազարապատ հիւրանոցը *) ի Ա՛ևմարան փոխարկեց և աշակերտները տեղաւորեց, ուր իւրեանց պարտաւորութիւնքը կկատարեն և կշարունակեն։ Այսպիսի հանգամանաց մէջ տեղւոյ անձկութիւն և այլ ինչ ինչ անյարմարութիւնքն նկատելի են։ Եւ ոչ միայն այսչափ. այլ և Երևանայ նահանգին ալքունական ճարտարապետը հրաւիրելով և Ա՛ևմարանի այրեցեալ մասին ամբողջ պատերուն հաստատութեան և անվնաս մնացած լինելոյն վերայ ապահովուելով՝ զկնի կարևոր խորհրդածութեանց ընդ որոց արժան էր՝ յիշեալ ճարտարապետի հետ ի տարև հրատարակեալ պայմանը կռնեցաւ, որով արդէն վերաշինութեան նախապատրաստութիւնք սկսուած են և $2\frac{1}{2}$ ամիսէն զկնի այս պայմանի մէջ յիշուած մասերը աւարտուելով՝ այնուհետև մնացելոց համար ևս կարևորը կհոգացուի. որով Աստուծով մինչև յառաջիկայ տարւոյ Յունիսի ցվերջ՝ ամբողջ վերաշինութիւնք կաւարտուին և աշակերաք դմնէ յաշնանն կը փոխադրուին ի Ա՛ևմարանական շէնքն։

Մեր խօսքերը կնքելէ յառաջ կրաղձամք յայտնել և անշուշտ կյուսամք նաև, զի այս առթիւ մեր սիրելի եղբայրք ևս կիութեան կարևկից լինել և դարձեալ կարևոր եղած օժանդակութիւնը առատաձեռնելով՝ արդիամբք կպարգևեն իւրեանց զգայմունքը և համակրութիւնքը, որում անտարակոյս եմք՝ զի մեր Ազգ. Թերթերն ևս կհայնակցին և յորդոր կկարդան՝ ինչպէս որ արդէն Մեղու Հայաստանի լրագրին 22րդ թուոյն մէջ այսպիսի բարի նպատակաւ յառաջքնթաց հանդիսացած էր, որով մեր շնորհակալութիւնը ևս գրաւեց։

Ալհաւասիկ ալքունական—նահանգական Ա՛արտարապետի հետ կապուած պայմանին պատճէնը։

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ի 1874 ամի ի 25-ն Հոկտ. ես ստորագրեալս իմին Նահանգական Երկրաչափ Կապիտան Վօրընցով Վիլհամինով կռնեցի զայս պայմանագիրս ընդ Սինօդին սրբոյ Էջմիածնի հայոց, թէ՝ ընդունիմ յիմ վերայ զամենայն շինութիւնս յիշատակեալս յեղեալ ի սմին հաշուեցուցակի ամբողջութեամբ եօթն հազար հիսուն հարիւր ռուբլեօք ի վերայ հետևեալ պայմանաց. Նախ՝ ի պատրաստութիւն նիւթոց, ես պարտաւորիմ ձեռն արկանել անյապաղ և յամենայն շինութիւնս յընթացս երկու և կէս ամսոց յօրէ կընդունելոյ զգաշն զայս. եթէ լեցին խառնակ աւազը (անձրևային)՝ յայնժամ թիւք աւազոյ յաւելուլ պարտին աւ ժամագրեալն միջոց աւարտման շինութեանն։ Երկրորդ՝ զնոյն յիմ պարտաւորութիւն և հետևեալ գործք, արկանել շրջանակադերանս (նալ), արկանել զգերանս առաստաղաց և յատակաց վերին յարկի ի վերայ համայն այրեցեալ մասին ձեմարանի բաց ի Հանդիսարանէն, որոց գերանքն պարտին զնիլ մի արշին հեռաւորութեամբ ի միմեանց և ունել առաջինքն զհաստութիւն 5 վերշոկ. (մատ) և զլայնութիւն

(*) Եթէ հարկ լինէր՝ Ա.ՀԿ. Հայրապետ պատրաստ էր իւր բնակած Վէհարանը ի ձեմարան փոխարկել՝ անձկալով յաւէտ՝ զի նուիրական ազգօգուտ նպատակը և ձեռնարկութիւնը չընդհատուի և Ծննդեան դպրեվանց չնմանի։

3 վերշօկ, և վերջինքն՝ հաստուռմեամբ 6 վերշօկ և լայնուռմեամբ կ՚ընդ նմին գերանքն ընդ նալի-ցըն պարտին ամրապնդեալ լինիլ գամուքս եբբոդ՝ շինել զկամարս ի միջին ճեմելիս գնելով առ այն զ՚ելուռն կազապարս ամրապնդեալս երկաթեայ օղա-կօք, շինել զտրապիզս (գերանակապս) ի գերանաց բաց ի գմբեթէն, չորս վերշօք հաստուռմեամբ և-րեք վերշօք լայնուռմեամբ, այնպէս զի ձև տանեացն լինի բոլորովիմբ յարևմտեան միւս մասին (որ չէ պրե-ցեալ)։ Ծածկել զտանիս տախտակօք հաստուռմեամբ երիք քառորդ վերշօք, ծածկել զտանիս թիմիդամբ ներկելով զայն յերկուս նուագս։ իսկ զմնացեալ մասն մի անգամ՝ կանանչագոյն ներկիւ ձիմով կտաւատի, կցել զառաստաղն վերնայարկի քա-դասիւք, որք պարտին լինիլ տաշեալք և ունիլ զհաստատուռմիւն երիք չերեքվերկ վերշօքի։ Ջոր-դոդ՝ պարտաւորուռմեան իմում՝ վերաբերի նաև շինուռմիւն վերնակաց և բարձրացուցանել զը-միայս ի վերայ տանեացն, և շինել խաղովակս ջուրց։ Չինեցդոդ՝ ամենայն շինուռմիւնք պարտին լինել կատարեալ ըստ ամենայնի բարեպէտ և եթէ յոտի ինչ երևեսցի կամ անկանոն՝ զայնոսիկ շի-նուռմիւնս պարտիմ շինել կամ ուղղել, ի-մ հաշիւ վերստին։ զամենայն միայտեղէնս պարտիմ գործածել յեղևնեայ միայտից բերելոց ի Տփղի-սայ, և եթէ գործագրեցից զբաւարտ միայտ յայն-ժամ՝ պարտաւորիմ՝ վասն իւրաքանչիւր բարտենի գերանաց գործագրելոց ի պէտս շինուռմեանց՝ վճ-ճարել ի տուգանս զհարիւր ռուբլիս։ Վեցեբոդ՝ եթէ Վանքն կամիցի՝ ունի իրաւունս տալ ինձ ըզ-միայտ և գերկաթ թիմեղեայ, յորոց զառաջինն ես պարտաւորիմ՝ ընդունել ըստ գնահատական հաշուեցուցակին միայն քան տոկոսեաց զկրկոդու-թեամբ. քանզի զմիայտսն պարտ է տաշել մինչ գեռ ի Տփղիսայ ընդունելոց եմ՝ զոտաշեալսն։ Եօթ-նեբոդ՝ վասն ընդունելուռմեան միայտ և երկաթ-թեղինաց, ես պարտիմ տալ զանդորրագիրն, ըստ որոց պարտին ղեղել զինեն ի ժամ հաշուատես-տուռմեան։ Ութնեբոդ՝ միայտք և երկաթք՝ զորս տացէ ինձ Վանքն՝ պարտէ Վանքն ինքնին հա-տուցանել ի տեղի շինուռմեան։ Ինեբոդ՝ ի պէտս պատրաստուռմեան նիւթոց՝ ես պարտիմ ոտանալ ի կուն զայս պայման զերկու հազար ռուբլիս և յետ այնր տուչուռմիւն մնացեալ գրամոց պարտի լինել հետևեալ կարգաւ. զկնի գնելոյ զգերանս ա-ոաստաղաց և յատակաց հազար ռուբլի, զկնի շինելոյ զտրապիզսն՝ զերկու հազար ռուբլիս, իսկ մնացեալ գրամքն յաւարտ շինուռմեանն։ Եւ ես-նեբոդ՝ պայմանս այս պարտի պահպանել սրբուա-թեամբ և անդրժելի յերկուց պայմանադիր կող-մանց. իսկականն սորին պարտէ մնալ ի Սիոնդին և պատճէնն յանձն լինել ինձ։

Բաց յայսոցունց շինուռմեանց ես պարտաւորիմ գնել զգերանս յատակաց առաջի հանդիսարանադ-րանն, ուղղել զմիջնաւայրն ամրոյց և թիւրամեք կոպանց, զորս և յինուլ ի սիւնան՝ որ յանկիւնս սանդխոց։ փայտ վասն այսոցիկ շինուռմեանց պարտի գործադրել ի Վանուցն, իսկ արհեստա-ւորք և երկաթեայ պարագայքն յիմոց սեպհա-կանուռմեանց։ (Սոոբոֆբո-ԲՒ-Ն)

ՎԱՐԱՆՑՈՎ ՎԻԼԵԱՄԻՆՈՎ.

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻՐ ԲԻՋԱՆԴԻՆԱՆ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Ամեն. Ս. Պատրիարքը զգալով որ՝ Ընդհանուր Ժողովոյ ենթարկուած անկարգուռմեանց դլխաւոր պատճառը անոր ներքին կանոնագիր մը չունենալն է, խնդրեր է Ռուսինեան էֆէնտիէն որ սահմա-նադրական ազգայ Ընդհ. Ժողովոյ ներքին կանո-նադրուռմիւններէն քաղելով մեր Ընդհ. Ժողովոյ յարմար կանոնադրուռմիւն մը խմբագրէ ու Ընդհ. Ժողովոյն վաւերացմանը ներկայացնէ. նա ալ ա-մենայն սիրով յանձն առնելով այդ աշխատու-թիւնը՝ կանոնագիր մը խմբագրեր, իւր ծախքովը տպագրել տուեր և երեսփոխանաց հաղորդեր է։

Ա յս պէսքը ժամանակաւ Ընդհ. Ժողովն զգաց և ի պաշտօնէ իւր առաջին Ատենապետը գոնուող Օտեան էֆէնտիէն խնդրեց, որ այդպիսի կանոնա-գիր մը խմբագրէ ու Ընդհ. Ժողովոյն բերէ. նա ալ խոստացաւ քիչ ատենէն Ընդհ. Ժողովոյ այդ խնդիրը կատարել. վրան 6—7 նիստ անցաւ, բայց այդ խոստման գործադրուռմեան գոնէ նշոյլը չը տեսնուեցաւ, ուստի հարցնուեցաւ Օտեան էֆէն-տիի թէ ե՞րբ պիտի բերէ այդ խոստացած կանո-նագիրը. պատասխան տուաւ թէ՝ չէ կրցած Եւ-րոպական խորհրդարանաց ներքին կանոնագիրը ձեռք ձգել, որ իւր ըրած այդ խոստումը կարենայ կատարել. այս յայտարարուռմեան վրայ խնդիրը առ կախ ձգուեցաւ և Ընդհ. Ժողովն իր անկար-գուռմեանց մէջ յառաջացաւ, որոյ վերջ պիտի տրուի հարկաւ Ռուսինեան էֆէնտիի կանոնագրին ընդունուելը։

Ա յս պատմուռմենէն ահաւասիկ յայտնի կը տեսնուի թէ՝ Ռուսինեան էֆէնտիի ըրածը ոչ-այլ ինչ է՝ բայց եթէ Օտեան էֆէնտիի պաշտօնական դատապարտուռմիւնը. զի նա որ Ատենապետական պաշտօն ու հանդիսաւոր ըրած խոստում ունէր ու չը գործագրեց, սա Ատենապետական պաշտօն և հանդիսաւոր խոստում չունենալով՝ սոսկ Ս.

Պատրիարքին խնդրանօքը Օտեան էֆէնտիի չըբածն ու ընել չուզածը, ըրած ու հրապարակ իջաւ։

Մենք ասոր այսպէս ըլլալը գիտնալով հանդերձ բնաւ այս մասին վրայ դիտողութիւն չըրինք և խնդրոյն այդ մասը լուսաբեմէ անցանք և գործեալ նոյն ընթացքը պիտի բռնէինք, եթէ Օտեան էֆէնտիի հանրածանօթ խնկարկու Մասիսը՝ մեզ չը պարտաւորէր մեր լռութեան կապը լուծելու իր խմաստակ ու չըպիտոյ դիտողութիւններովը։

Սա առաջին անգամ չըլաւ, այս կանոնագիրը եա ձգել տալու համար Ընդհ. ժողովոյ դիւանին վրայ առնական կանոնագիր մը կայ արդէն ըսելով, նախադասութեան խնդիր մը յարոյց, մեք լուռ կեցանք ասոր դէմ, վասն զի տեսանք որ թէև Մասիս քօութեամբ է որ այս խնդիրը կը յարուցանէ, բայց առնական կանոնագիր մը դիւանին վրայ կենալով վիճաբանութեան տակ ըլլալը կընդունի, որով այս կամ այն կերպով Ընդհ. ժողովոյ անկարգութեանց վերջ տալու սկզբունքը յարգուած կըլլայ. սակայն Մասիս՝ ալ աւելի յառաջ կանցնի և այդ կանոնագրին ընդունուիլը կամ չընդունուիլը Սահմանադրութեան վերաքննութեան հետ կը կապէ. կապ մը՝ որ քակտելիք չունի, եթէ Երեսփոխանք միամտաբար անգամ մը իյնան այդ ծուղակը և այդ կապին ձեռք զարնեն, կապ մը՝ որ Ընդհ. ժողովոյ վիճաբանութեան ազատութիւնը կը կաշկանդէ անկարգութեանց տակ, կապ մը՝ որ Ընդհ. ժողովոյ գոյութեանը մահ կսպառնայ, զայն սրիկայական ճնշմանց տակ թաղելով. կապ մը վերջապէս՝ որ Սահմանադրութիւնը յառնուն վերաքննութեան բնակինջ ընելու չափ զօրութիւն ունի։

Ասոր պատասխանը Ուսկիւնեան էֆէնտի թէև տուաւ մեր թերթին մէջ դեռ Մասիս իր այդ պիտողութիւնը չը հրատարակած, ուղղակի անոնց՝ որք հրամայած էին իրենց ծառայ Մասիսին այդպիսի դիտողութեամբ մը մաքերը պղտորելու, և որմէ հասկցուեցաւ թէ՝ ան է այդ կանոնագրին խնդրոյ կարգէն անուղղակի նետուիլ ուզող մարմինը, սակայն հարկ է որ հարցնենք Մասիսի թէ՝ ի՞նչ վնաս ունի մէկ քարով երկու թռչուն զարնելը եթէ իրօք այդ Կանոնագրութիւնը Սահմանադրութեան վերաքննութեան հետ կապակցութիւն ունի, և ատոր ընդունելովը Սահմանադրութեան վերաքննութիւնն ալ կատարուած պիտի ըլլայ։

Եթէ կայ այդ կանոնագրութեան մէջ Սահմանադրութեան հիմնական սկզբանց դպչիլու կէտեր՝ գործեալ այդ մէկ քանի կետերուն համար, ոչ թերևս սխալմամբ տպրտած ըլլան, խնդրոյ կարգէն դուրս ձգելու հարկ չը կայ, այլ կրնան այդ սկզբունքի վերաբերեալ կետերը զատուելով փոփոխուիլ և այնպէս ընդունուիլ։

Ըսեն թերևս՝ թէ այդ կանոնագիրը Սահմանադրութեան վերաքննութեան հետ կապուելով, անուղղակի խնդրոյ կարգէն դուրս նետուած չըլլար։

Ընդհակառակն կրսենք՝ այդ խնդիրն Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն հետ կապելով երկու խնդիրը միանգամայն խնդրոյ կարգէն դուրս կը ձգուի։

Ահաւասիկ բուն իսկ Մասիսի խօսքերը։

«Այս կանոնագրին քննութիւնը Սահմանադրութեան վերաքննութեան հետ անքաժանելի կապակցութեան մէ ունենալով, Ընդհ. ժողովոյ գործն աւելի կը դժուարանայ երբոր ձրագրին հետ ալ գործ ունենալ էր»։

Ասով՝ եթէ այդ կանոնագիրը Սահմանադրութեան վերաքննութեան հետ մէկ տեղ Ընդհ. ժողովոյ խնդրոց ցանկէն դուրս նետել չը հասկցուիր, հապա ի՞նչ կը հասկցուի։ Եւ հետևաբար ասով եթէ՝ Ընդհ. ժողովը տակաւին երկար ժամանակ անկանոն վիճակի մէջ պահել չըհասկցուիր, ուրիշ ի՞նչ կը հասկցուի։

Լաւ է գէշ օրէնք մը ունենալնալ, քան բնաւ օրէնք չունենալ։ Ասոր այսպէս ըլլալը նոյն իսկ Օտեան էֆէնտի խոստովանած էր իր տեղեկագրին մէջ։

Արդ Ընդհ. ժողովին իր ատեանը կառավարելու օրէնք չունի։

Ի՞նչ ընել պէտք է այսպիսի վիճակի մը մէջ երբ ատեան ունինք ու զայն կառավարելու օրէնք չունինք։

Եթէ կարելի է առանց օրէնքի կառավարուիլ, բնաւ հարկ չէ այդպիսի օրէնք մը ունենալ. իսկ

կարելի չէ առանց օրէնքի կառավարուիլ, ապա-քէն ոչխիսի օրինաւոր կառավարութեամբ պիտի շարունակես վիճաբանութիւնդ այդ ատենական օրէնքն ընդունելու։

Հանելուկ մէ այս, որ կարելի չէ ուրիշ կերպով լուծել, բայց եթէ ընդունելով օրէնք մը խիստ կարճ վիճաբանութեամբ անոր ընդհանուր տրամադրութեան վրայ, զանց հետզհետէ փորձառութեամբ վերաքննելու պայմանաւ, դի լաւ է ունենալ դէշ օրէնք մը՝ քան բնաւ օրէնք չունենալ։ Հետևաբար կը զարմանանք որ՝ Օտեան էֆէնտի դեռ Մասիսի էջ հրամայեր, որ իւր այդ յայտնած ճշմարտութիւնը պաշտպանէ և Ընդհ. ժողովը կանոնաւորութիւն մը ստանայ։

Օրագիր, թիւ 1551 Սեպտ. 17։

Ահա այս խնդիրը է՝ որ Հոկտ. 4ին Պօլսոյ Հայոց Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ մէջ լուծուած է՝ ինչպէս կտակնուն փոխնէքն քաղուած հետևեալ տեղեկութեան մէջ։

Երեսփոխանական ընդհ. ժողովն երէկ (Հոկտ. 4) ժամը 7 1/2ին ատեներէն նիստ ընելով Գումգարուի Պատրիարքարանին մէջ, նախագահութեամբ ամեն Ս. Պատրիարք Հօր, ատենապետութեամբ վեհափայլ Յարութիւն պէյի Տատեանի, և առօրեայ ատենադպրութեամբ Մ. Էրէնգուլի Յարութիւն էֆէնտիի, յետ ինչ ինչ դիտողութեանց՝ ընդհանուր հաւանութեամբ ընդունից ու վաւերացոյց իւր նիստին կանոնադրութիւնը, կարևոր եղած սրբագրութիւններն կամ փոփոխութիւններն հետզհետէ ընելու պայմանաւ։

Ժողովը շնորհակալութիւն մատոյց ամեն. Ս. Պատրիարք Հօր և Ռուսինեան էֆէնտիին, այս կարևոր կանոնադրութեան պատրաստութեան համար, որով ազգային ժողովն այսուհետև ուղեցոյց կունենայ առաջի իւր, յորմէ ցարդ զուրկ լինելով՝ յաճախ կտատամնէր։

Ի վերջոյ, թէ մայրաքաղաքիս և թէ քանի մը գաւառաց կողմանէ կատարուած երեսփոխանական ընտրութիւնք վաւերացան։ Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան՝ որ Պէշիկթաշի և միանգամայն Պրուսայի կողմանէ ընտրեալ էր, վերջինը ընդունեց։

Ատեանը գոցուած չէր, և ահա ամեն. Ս. Պատրիարք Հօր մատուցին հեռագիր մը։ Նորին Սրբազնութիւնը՝ որ ատեանը բացուած ատեն հակիճ՝ բայց խիստ ազդու կերպիւ մեր գաւառաբնակ ազգայնոց բազմաց ներկայ աղետալի վիճակը ծանուցանելով ի կարեկցութիւն և յօգնութիւն հրաւիրած էր զԺողովն, յանկարծ արտասուօք ծանոյց թէ առ ձեռն հեռագիրն Էնկիւրիէն եկած է, և բազմաթիւ ազգայնոց բազում օրերէ հետէ խոտաճարակ և մահամերձ վիճակի մէջ գտնուիլն գուժելով՝ անյապաղ օգնութիւն կխնդրէ։ Համայն ժողովականք տխրեցան այս գոյժն լսելով՝ և ինդրեցին Ս. Պատրիարք Հօրէն որ իսկոյն յանձնաժողով մը կազմէ, և հանգանակութիւնը նախ երեսփոխաններէն սկսուի *)։

Ատեանը գոցուելէն անմիջապէս յետոյ, Նորին Սրբազնութիւնը փութացաւ անուանել յանձնաժողովն, և այսօր կսկսի հանգանակութիւնը։

Ձեմք կարծեր, որ բոլորովին աւելորդ համարուի նշանակել թէ կանոնադրութեան շարադրութեան վրայ ալ դիտողութիւն ըլլալով՝ որոշուեցաւ մանաժողովոյ մը միջոցաւ սրբագրել, ինչպէս արդէն նոյն իսկ կանոնադրութիւնն ալ տըրամադրած է։

Այս անգամ ունկնդրութեան համար բազմաթիւ ժողովուրդ էկար՝ անշուշտ նկատելով թէ խորհրդարանը ջտանիր, և մանաւանդ փափաքելով որ ժողովն առանձին մնայ և յանդարտու խորհրդակցի։

Ի վերջէ, պարտ կհամարիմք մեզ՝ հրապարակաւ իսկ շնորհակալութիւն մատուցանել Տատեան վեհամեծայլ Յարութիւն պէյի, որ ժողովին օրինաւորութիւնն ու ներդաշնակութիւնը մինչև ցը-

---

(*) Եօզղատի քահանայք ալ, տեղւոյն սուվալուկ ազգայնոց թշուառ վիճակին նկարագիրը ղրկելով Պատրիարքարան, անյապաղ օգնութիւն խնդրեր են։

Պանարմայի մէջ ալ հաղարաւոր ազգայինք լսած ըլլալով, թէ Պատրիարքարանը իւրեանց համար հանգանակութիւն ընել որոշած է, ղէտակն կսպասեն։

Ցունաց Պատրիարքարանը արդէն երկրորդ հանգանակութեան ձեռնարկած է յօգնութիւն կարօտելոց Էնկիւրիւի։

վախճան անխանգար պահելու համար փոյթ տա-
րաւ, և արգելից յուզիչ շարժումներն։

Ցաջորդ նիստը՝ 15 օրէն յետոյ պիտի ըլլայ։

Փուռջ թ. 225. Հոկտ. 5.

Ի ՊՐՈՒՍԱՑԻ.

Օրագիր լրագրոյ 1357 թիւ Թերթին մէջ (Հոկտ. 7) հետեւեալը կընթերուածուի։

Պրուսացին հետեւեալը կը գրեն մեզ Հոկտ. 2 թուով։

Սեպտեմբերի 28-ին Պրուսայի մէջ ըսա սովո-
րութեան Վ.Հ. Գէորգ Դ. Կաթուղիկոսին տօնա-
խմբութեան տարեդարձի հանդէսը կատարուեցաւ։
Որոյ անուամբ և ջանիւքը կատուցեալ է նաև սոյն
քաղքին ազգային վարժարանը*)։ Նոյն օրն Վ.Հ.
Հայրապետին բարերջանիկ կենացը յարատեւու-
թեան համար գոհաբանական աղօթք մը յետոյ,
լումանդակ եկեղեցական պաշտօնեայք և գպիրք
աշակերտաց և աշակերտուհեաց ընկերակցու-
թեամբը և Գեր. Բարդուղիմէոս սրբազանի ա-
ւաջնորդութեամբ երգօք և նուագօք ի վարժա-
րան կը դիմեն. ուր Ազգայնոց խումն բազմու-
թիւն մը արդէն դանուելով կսպասէր։ Ցետ խա-
չահանգստի և աղօթից, ի պատիւ Վ.Հ. Կաթո-
ղիկոսի յօրինեալ երգէ մը վերջը, աշակերտաց
կողմանէ մէկ քանի ճառախօսութիւններ եղան,
այլ և այլ երգերով ընդմիջեալ, յորմէ յետոյ
Գեր. Սրբազան Առաջնորդ Հայրը գեղեցիկ և ազ-
դու ատենաբանութեամբ մը, յորում ցոյց կու-
տար թէ բուն ազգին օգուտն ու ապագայն
տղայոց լաւ կրթութիւն մը տալուն մէջ կը կայա-
նայ, ինքեց հանդէսը՝ բոլոր հանդիսականք գոհ և
ուրախ սրտիւ իւրաքանչիւրն իւր տեղը դառնալով։

(*) 1862 թուականին այրուելով Պրուսայի մեծ հրկիզու-
թեան մէջ նաև Եկեղեցին, երկաթ դպրոցն և Առաջնորդա-
րանն, 63—66 թուականաց մէջ Վ.Հ. Հայրապետ տեղւոյն
Առաջնորդ լինելով՝ Պրուսայի և այլ տեղեաց Հայոց նպաստիւք
և եկեղեցւոյ արդեամբք ի նորոյ շինեց ինչպէս հոյակապ և
ետայարկ ուսումնարանը, նոյնպէս զեկեղեցին և վԱռաջնոր-
դարանն հանդերձ այլովք շինուածովք։

Տաճ. Խմբ. Արտաւազդ.

Ա յս հանդիսի մէջ ընթերցեալ հետե-
ւեալ ճառը և Հայրենիք լրագրոյ 220 րդ
թուէն քաղելով կհրատարակեմք։

Տեարք իմ.

Ինչ բարեբաստիկ վայրկեան, քաջատրելու այսօրուան իմ ըն-
դացած ջերմ հանակրութեանս հաւաստին, զոր ունիմ Ս. Գէորգ-
եան վարժարանիս նկատմամբ, այն այսօր վարժարանս այնպիսի
դիրքի մը մէջ կտեսնուի, որ կարծեմ թէ ոչ ոք կրնայ ներքին
զրդմամբ պարտուպատշաճ զովեստն չկարդալ. Թէ եւ ասի իրա-
ւամբ զովեստից արժանի կդատիմ, բայց այսու եւ եթ չեմ կրնար
անտարբեր մնալ առանց այն դիտողութիւնքս հոս Ձեզ հաղորդե-
լու թէ «վարժարանը ազգի մը զոյութեան էական եւ կենսական
տարրն ըլլալով, նորա մէջ է մէն մի անհատի ոյժն ու կեանքն,
յոյսն ու երջանկութիւնը, նովաւ է ազգի մը անկումը, եւ նովաւ
է ազգի մը կանգնումը, վերջին զայն մէջ տեղէ, եւ ահա կոր-
ծանման դատակնիքը կնքեցիր այն ազգին կամ ժողովրդեան,,.
այս պատճառաւ որքան ջանք եւ ճգունք դոհէք նորա յառաջա-
դիմութեանն, այնքան աւելի կկրկնապատկի ձեր փառքն ու պար-
ծանքն. որքան քրտունք քամէք հոն, կաճին ու կբարգաւաճին բու-
սած ծաղկունք։ Տեարք իմ, մի խաբուիք թէ մեք զձեզ շողոմե-
լու համար հրապարակ կենեուիմք այսօր, այլ այն անուրանալի
ճշմարտութիւնը խոստովանելու, որ անհրաժեշտ պարտքերնիս է.
եթէ այսօր վարժարաննուս դիրքը կգովեմք, առանց յիշելու չէ թէ
որքան արգելքներ եւ խոչընդոտներ կպատահին ձեր վսեմ նպա-
տակի ճամբուն մէջ. ցարդ ամենաբար կուրծք պատրաստած այն
բոլոր խոչընդոտներուն դէմ հակազինել չշուարեցաք, ուստի մըր-
տենուդ արժանի պակներ ընդունելու ձեր վեհ ճակտին նախան-
ձելի բաղդին արժանաւորութիւնն ունեցած էք. ինչ մեծ տիպաղս,
ինչ սքանչելի պարծանք յաւիտենական յիշատակաց արժանի, ու-
րեմն խրախոյս առէք, թշուառ ազգի մը ապագայն վերակենդա-
նացնելու յոյս տուող մանկտեաց վարժարանիս տարեդարձին առ-
թիւ այս օրուան ներկայացուցած սրտաշարժ հանդէսը տեսնելու
երջանիկ ուրախութիւնն վայելած էք, ինչպէս երբեմն. հաւաստի
եմ որ օր մալ մեր քրտնաթոր աշխատութեան արդիւնը ու պըր-
տուղը Ձեզ եւ սիրելի ազգիս ընծայելու մեծ բարեբաղդութիւնը
պիտի ունենամք։

Վարժարանիս բարերար հիմնադիր Տ. Տ. Գէորգեայ բաղմե-
րախտ Վեհ. Հայրապետին վրայ զովեստ տալ չհարկաւորիր, քան-
զի իւր սքանչելի գործոցն հոյակապ յիշատակները ճշմարիտ ազ-
գասիրաց սրտերէն անհետանալ երբէք կարելի չէ, եւ նոյնը ան-
ջնջելի պարծանք կնուիրէ ապագային, այս հոյաշէն վարժարանիս
(որոյ անուամբ իսկ կառուցեալ է) սանունք երախտապարտ ըլ-
լալնին ջերմ փափաքանօք կխոստովանին, եւ յատկ կենդանի
սրտով ու բերնով կօրհնեն ու կբարձրացնեն անմահ Հայրապետին
կենսատու եւ նուիրագործ յիշատակը, կեցցէներ գոչելով նորա
ազդօգուտ կենացն անդադար։ Ասկէ զատ բոլորով սրտիւ երախ-
տապարտ եմք ի աղնիւ Պրուսացիք, այսօր մեր բարեխնամ Ա-
ռաջնորդին դերերջանիկ Հօր Բարդուղիմէոս բարձր Սրբա-
զնին եպիսկոպոսի, որոյ քանկագին բարերարութեանց գողտր շը-
նորհքները ցարդ վայելած եմք, կվայելեմք, եւ պիտի վայելեմք։
Նորին դերապատուութեան մասնաւորապէս վարժարաննուս յա-
ռաջադիմութեան մասին եռանդնալից համակրութիւն ու սրտա-
տոչոր փափաք մունենալը ամենուս յայտնի է, եւ չուրացուիր
այ երբէք որ իրեն արդարակորով ջանից ծեռնտու եւ աջակից-
ներ չեն պակսած եւ չեն պակսիր. զլխաւորաբար ազգ. ուսումն-
նական եւ քաղ. խորհրդոց պատուարժան անդամք անդուլ հսկո-
ղութիւննին եւ աչալուրջ խնամածութիւննին չեն զլացած ցայսօր։
Սրբազան Հօր միակ նպատակի ու բաղմանաց առարկայն է ազգ.
վարժարանս եւ անոր մէջ ուսանող 500—600 ի չափ մատաղ
հայ մանկտւոյն ապագայ վիճակին զարգացումը ու յաջողութիւնն.

Ա յս հանդիսի մէջ ընթերցեալ հետե-
ւեալ ճառը և Հայրենիք լրագրոյ 220 րդ
թուէն քաղելով կհրատարակեմք։

Տեարք իմ.

Ինչ բարեբաստիկ վայրկեան, քաջատրելու այսօրուան իմ ըն-
դացած ջերմ հանակրութեանս հաւաստին, զոր ունիմ Ս. Գէորգ-
եան վարժարանիս նկատմամբ, այն այսօր վարժարանս այնպիսի
դիրքի մը մէջ կտեսնուի, որ կարծեմ թէ ոչ ոք կրնայ ներքին
զրդմամբ պարտուպատշաճ զովեստն չկարդալ. Թէ եւ ասի իրա-
ւամբ զովեստից արժանի կդատիմ, բայց այսու եւ եթ չեմ կրնար
անտարբեր մնալ առանց այն դիտողութիւնքս հոս Ձեզ հաղորդե-
լու թէ «վարժարանը ազգի մը զոյութեան էական եւ կենսական
տարրն ըլլալով, նորա մէջ է մէն մի անհատի ոյժն ու կեանքն,
յոյսն ու երջանկութիւնը, նովաւ է ազգի մը անկումը, եւ նովաւ
է ազգի մը կանգնումը, վերջին զայն մէջ տեղէ, եւ ահա կոր-
ծանման դատակնիքը կնքեցիր այն ազգին կամ ժողովրդեան,,.
այս պատճառաւ որքան ջանք եւ ճգունք դոհէք նորա յառաջա-
դիմութեանն, այնքան աւելի կկրկնապատկի ձեր փառքն ու պար-
ծանքն. որքան քրտունք քամէք հոն, կաճին ու կբարգաւաճին բու-
սած ծաղկունք։ Տեարք իմ, մի խաբուիք թէ մեք զձեզ շողոմե-
լու համար հրապարակ կենեուիմք այսօր, այլ այն անուրանալի
ճշմարտութիւնը խոստովանելու, որ անհրաժեշտ պարտքերնիս է.
եթէ այսօր վարժարաննուս դիրքը կգովեմք, առանց յիշելու չէ թէ
որքան արգելքներ եւ խոչընդոտներ կպատահին ձեր վսեմ նպա-
տակի ճամբուն մէջ. ցարդ ամենաբար կուրծք պատրաստած այն
բոլոր խոչընդոտներուն դէմ հակազինել չշուարեցաք, ուստի մըր-
տենուդ արժանի պակներ ընդունելու ձեր վեհ ճակտին նախան-
ձելի բաղդին արժանաւորութիւնն ունեցած էք. ինչ մեծ տիպաղս,
ինչ սքանչելի պարծանք յաւիտենական յիշատակաց արժանի, ու-
րեմն խրախոյս առէք, թշուառ ազգի մը ապագայն վերակենդա-
նացնելու յոյս տուող մանկտեաց վարժարանիս տարեդարձին առ-
թիւ այս օրուան ներկայացուցած սրտաշարժ հանդէսը տեսնելու
երջանիկ ուրախութիւնն վայելած էք, ինչպէս երբեմն. հաւաստի
եմ որ օր մալ մեր քրտնաթոր աշխատութեան արդիւնը ու պըր-
տուղը Ձեզ եւ սիրելի ազգիս ընծայելու մեծ բարեբաղդութիւնը
պիտի ունենամք։

Վարժարանիս բարերար հիմնադիր Տ. Տ. Գէորգեայ բաղմե-
րախտ Վեհ. Հայրապետին վրայ զովեստ տալ չհարկաւորիր, քան-
զի իւր սքանչելի գործոցն հոյակապ յիշատակները ճշմարիտ ազ-
գասիրաց սրտերէն անհետանալ երբէք կարելի չէ, եւ նոյնը ան-
ջնջելի պարծանք կնուիրէ ապագային, այս հոյաշէն վարժարանիս
(որոյ անուամբ իսկ կառուցեալ է) սանունք երախտապարտ ըլ-
լալնին ջերմ փափաքանօք կխոստովանին, եւ յատկ կենդանի
սրտով ու բերնով կօրհնեն ու կբարձրացնեն անմահ Հայրապետին
կենսատու եւ նուիրագործ յիշատակը, կեցցէներ գոչելով նորա
ազդօգուտ կենացն անդադար։ Ասկէ զատ բոլորով սրտիւ երախ-
տապարտ եմք ի աղնիւ Պրուսացիք, այսօր մեր բարեխնամ Ա-
ռաջնորդին դերերջանիկ Հօր Բարդուղիմէոս բարձր Սրբա-
զնին եպիսկոպոսի, որոյ քանկագին բարերարութեանց գողտր շը-
նորհքները ցարդ վայելած եմք, կվայելեմք, եւ պիտի վայելեմք։
Նորին դերապատուութեան մասնաւորապէս վարժարաննուս յա-
ռաջադիմութեան մասին եռանդնալից համակրութիւն ու սրտա-
տոչոր փափաք մունենալը ամենուս յայտնի է, եւ չուրացուիր
այ երբէք որ իրեն արդարակորով ջանից ծեռնտու եւ աջակից-
ներ չեն պակսած եւ չեն պակսիր. զլխաւորաբար ազգ. ուսումն-
նական եւ քաղ. խորհրդոց պատուարժան անդամք անդուլ հսկո-
ղութիւննին եւ աչալուրջ խնամածութիւննին չեն զլացած ցայսօր։
Սրբազան Հօր միակ նպատակի ու բաղմանաց առարկայն է ազգ.
վարժարանս եւ անոր մէջ ուսանող 500—600 ի չափ մատաղ
հայ մանկտւոյն ապագայ վիճակին զարգացումը ու յաջողութիւնն.

իւր բուն նպատակի եւ ոգւոյն հաւատոցաց նշանաբանն կրնայ հանդիսանալ սա աղդու եւ ջերմ խօսքը, դոր շրթունք իւր արտասանած է թէ «կամ մեռնելու եմ, կամ վարժարանիս յառաջադիմութիւնը տեսնելու համար ապրելու եմ». կրեղգեղեմք զայն քիւրուցս բիւր, եւ ի պատիւ անմահ արժանեաց անմոռաց ու հոյակապ արժանիք կբարձրացնեմք մեր սրտից խորերուն վրայ, կեցցէ նա, եւ փոխարէն իւր անկուն ջանից քաջալերուի, զի արդի հայ սերունդը թմրեալ եւ անտարբեր չէ, այլ եռանդուն եւ գործօղ. կկրկնեմ խօսքս թող քաջալերուի եւ անվհատ գործէ ինչ որ է նպատակը, եւ հուսկ պատրաստուի իւր կենդանի ճրագաց եւ յաղթութեանց արիւնոտ դափնին նոցա ձեռքերէն ընդունելու:

. Հայրենիք Թիւ. 220. Հոկտեմբ. 8.

Գեր. Գաբրիէլ Ըրքեպիսկոպոս Այվազովսկի եղբայր և նշանաւոր նկարիչ Պ. Յովհաննէս Այվազովսկոյ վերայ՝ որ յանցելումն ի Պօլիս ուղեւորած էր՝ հեռեւեալ բերկրաւոր աւդեկութիւնքը կ՚քաղեմք և կհրատարակեմք:

ԱՆՈՒԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԿԵՐԱՆԸ.

Պօլսոյ մէջ վերջին օրերս մարդ չի մնաց որ չիլսէ թէ, Այվազովսքի Յովհաննէս էֆէնտի անուանի Հայ պատկերահանը Պօլիս եկած է, վեհ. Սուլթանին ներկայացած *) եւ սիրալիր ընդունելութիւն գտած եւ Օսմանիէի երկրորդ չքանշանին արժանացած է:

Եւրոպական Թերթերու եւ բարձր ընկերութիւններու մէջ այս անուանի պատկերահանին նկարները կը խօսուին. եւ ամեն տեսողներ կը վկայեն եւ կը հաստատեն թէ զմայլելի եւ հիանալի են:

Ա.սանկ հանճարի մը Հայ ըլլալը մեծ պատիւ եւ պարծանք է ամենուս. բայց եկուր տես որ Հայը այս պարագային մէջ ալ անվսխմար մնել կուզեն:

Եւրոպացիներէն ոմանք արատ կամ բիծ եւ կամ քննադատելու փոքրիկ կէտ մը անդամ չկրնալով դտնել Այվազովսքիի նկարներուն մէջ, սկսան բերաննուն ջուրը վազցնել, եւ բան չդտան նէ, ելան այնպէս հռչակել թէ, Այվազովսքի հայ չէ, այլ Ռուս մը:

Նոյն իսկ Ռուսաց վկայութիւնն ալ իրենց համար Թերեւս հաճելի չըլլայ, որովհետեւ անոնք ալ կաղաղակեն թէ Այվազովսքի Հայ մ է, եւ 70 տարիէ ի վեր Հայ, ի ծնէ Հայ եւ նոր անուանի եղած չէ, այլ 40—50 տարիէ ի վեր անոր համբաւը տարածուած է, եւ համայն Եւրոպիոյ արքունիքներուն մէջ, բարձր դահլիճներու եւ արուեստանոցներու մէջ լի են անոր այդ դրաւող, դիտողին միտքն ու հոդին յափշտակող նկարները. եւ ամենէն ալ վկայեալ եւ հաստատեալ է թէ Այվազովսքի Հայ պատկերահանին վրձինը աշխարհիս վրայ ԵՋԱԿԱՆ է, եւ իր վրձինին յիշատակներովը յաւիտեան անմահ պիտի մնայ իր անունը, փառք՝ ինքեան եւ պարծանք Հայութեան:

Մամուլ. Թ. 422, Հոկտ. 12:

Մամլոյ յաջորդ Թերթի մէջ և հետեւեալ տեղեկութիւնը ընթերցանք և արժան համարեցինք մեր ընթերցողաց հաղորդելոյ:

Ա.րքունական հրաւէրներու եւ իշխանական ընդունելութիւններու մէջ ճոխացող անուանի Հայազդի պատկերահան Յովհաննէս էֆէնտի Այվազովսքի այս կիրակի Վսեմ. Սարգիս պէյի տանը մէջ հաճեցաւ իր ներկայութեանն սիրալիր կերպով ընդունել զ. Պօլսոյ մէջ գտնուող հայազդի պատկերահանաց մէկ պատդամաւորութիւնը, որ հետեւեալ ուղերձը մատոյց նորին Վսեմութեան:

"Վսեմափայլ եւ չքնաղահանճար Տէր,

« Գիտեմք որ Եւրոպիոյ ամեն Թագաւորներէն Ձեր վեհ ճակատը դափնիներով պսակուած է, եւ յաղթանակի մրցանակներով կուրծքերնիդ ծածկուած: Գիտեմք որ տիեզերական գովասանութեամբք եւ պատուով այնչափ կշտացած եւ լցուած էք՝ որ ալ ուրիշ մեծութիւն մը Ձեր վրայ հրապոյր մը չունի:

Սակայն գիտեմք նաեւ որ Ձեր վսեմ եւ ազդասէր սրտին մէջ միշտ տեղ մը բաց է իրեն արիւնակից եղող Հայ արուեստաւորաց անկեղծ խնդակցութիւնը ընդունելու՝ որ այսօր եկել է Ձեզ բարեմաղթել:

Ա.րդարեւ ինչպիսի մեծ բարերաղդութիւն է մեզ, մեր ուրախութեան զգացումը յայտնել Ձեզ՝ որուն համբաւն ու փառքը բոլոր Հայկազեան աղգիս վրայ կը տարածուի:

Ա.յո, Հայ ազդը բոլոր աշխարհիս առջեւ կը պանծայ Ձեզմով, վասն զի բնութեան հիանալի տեսարա-

(*) Արքունական ճարտարապետ Պալեան Վսեմ. Սարգիս պէյն ներկայացուցած է, եւ այս առթիւ մի եւ նոյն շքանշանը ի միասին ընդունած:

նաց անլուծելի գաղտնիքը պարզեցիք եւ ամենաճարտար վրձիններն անգամ շվինթուեթեան մէջ թողուցիք:

Ուստի մեր կրկին ուրախակցութեան, ազգակցութեան սիրոյ եւ խորին մեծարանաց հաւաստիքը Ձեզ մատուցանելով մնամք,

Անձնուէր ծառայք եւ հանճարոյդ սիրահարք

Գէորգ Ալտուլլան	Տիգեմաք Ղնքսէրճեան
Վիկէն Ալտուլլան	Յովսէփ Սամանճեան
Մեկդոն Տիրացուեան	Յովսէփ Զէրալեան
Մկրտիչ Մելքիսեդեկեան	

13|25 Հոկտ. 1874:

Վսեմափայլ Յովհաննէս Էֆէնտի Այվազովսքի Ուղերձն ընդունելով, հետեւեալ իմաստալից պատասխանն ուղղեց, որն որ գրեթէ բառ առ բառ ճշդութեամբ ըմբռնուած, եւ յետոյ խմբագրուած է ներկայ դնտուող Հայ պատկերահանին մէկուն սուր յիշողութեամբը:

«Շատ շնորհակալ եմ այսօրուան մեր բարեմաղթութիւններէն. սակայն ես երբէք այսչափ պատուոյ «չեմ արժանացած: Եթէ Աստուած քիչ մը կարողութիւն ինծի տուեր է, դիտցէք որ անդուլ աշխատանքով կրցեր եմ ձեռք բերել. այսու ամենայնիւ դեռ «աշակերտ եմ բնութեան եւ միշտ սորվելու հետեւ «ւան զի Աստուծոյ ստեղծած բաներն այնքան շատ «եւ աննկարագրելի են, որ եթէ 300 տարի ալ ապրելու ըլլամ, միշտ նոր բան մը պիտի տեսնամ շինելու համար: Շատ թշնամութիւններ եւ շատ նախանձորդներ ունեցած եմ կեանքիս մէջ, որոնք «յաղթուց միջոցաւ դիս ամչցած են. սակայն երբէք «վնասած չեմ. իմ միակ միսիթարութիւնս կտաւն եւ «վրձինս էր. այն տեղ կը մոռնայի բոլորն ալ: Բէթ«րսպուրկի Աքատէմիան եղած ժամանակս քանի «մը Իտալացի ընկերներ ունէի, որոնք ինծի հետ կաշխատէին. խել մը ժամանակէ վերջը անոնցմէ մին «տեսայ, հարցուցի թէ ինչ կընես. ան ալ ինծի պատասխանեց գանգատելով թէ գործ չկայ, բան մը «ապսպրող չկայ, անոր համար պարապ կը պտըտիմ: «Ինչու համար կսպասես, ըսի իրեն, որ քեզի գործ «ապսպրեն. մենք ամենեւին ժողովրդէն գանգատելու իրաւունք չունինք, եթէ մեր կողմանէ կատարեալ աշխատութիւն չըլլայ. շինէ նախ եւ առաջ ա«ղէկ բան մը, եւ մի վախնար, գանիկայ ուղղող եւ «ծանր դնով առնող շատ կը դտնուի: Շատ անգամ «իմ շինածներս միւղէներու մէկ անկիւնը դրուած «են, սակայն զարմանքով կը տեսնէի որ ժողովուրդը «մէկէն զանի կը գտնար եւ կը դիտէր. Ռուսերէն «առած մը կայ որ կըսէ, այլ ժողովուրդին այլ Աս«տուծոյ: Քառասուն տարի է որ կաշխատիմ, եւ «3000 կտորի չափ պատկերներ շիներ եմ, որոնց «հազիւ 200 հատը ապսպրուած են ինծի: Շատ ու«րախ եմ որ Վ. Սուլթանն իրեն ընտիր ճաշակովը «եւ հասկացողութեամբը կը քաջալերէ պատկերահա«նութեան արուեստը. դիտեցի որ ինքն Սուլթանն «իսկ կը հաւնէր իմ պատկերներուս այն կէտերուն, «որոնց ես հաւնած եմ: Ուրեմն դուք ալ ջանացէք, «աշխատեցէք այս պարագայէս օգուտ քաղելու: Ու«րախութեամբ կը տեսնեմ որ Հայերը քիչ ժամա«նակուան մէջ շատ յառաջ դացեր են արուեստներու «մէջ, մանաւանդ ճարտարապետութեան մէջ. օրինա«կի համար, Սարգիս պէյին կառուցած սալատները «հիանալի են, եւ որ եւ իցէ արուեստաւոր անոր «գեղեցիկ ճաշակին պիտի զմայլի: Կուզէի ծեղի վո«խադարձաբար իւրաքանչիւրիդ այցելութիւն տալ, «բայց Պօլսոյ մէջ այս մասին եղած դժուարութեանց «եւ իմ տկարութեանս պատճառաւ ծեր ամենուդ նե«րողամտութիւնը կը խնդրեմ:»

Ներկայացող պատկերահանը մեծ ուրախութեամբ եւ սիրթարութեամբ, եւ այցելութեան սրահին մէջ Այվազովսքիի վրձինին արդիւնքն եղող 44 կտոր նկարներուն վրայ հիացմամբ լցուած, բաժանուեցան այս տեսութեան յիշատակն անջինջ պահելով իրենց սրտին մէջ, նորին վսեմութեան խրախուսալից խօսքերէն աւելի ոյժ առնելով:

Մամուլ թ: 425, Հոկտ. 15:

25000 ՍՈՎԱՏԱՆԴ ՀԱՑ.

Եթէ աշխարհի վրայ քաղցր բան մը կայ, այն ալ դժբաղդին եւ անօթիին օգնելն է:

Ասիոյ խորերը, մանաւանդ Եօզղատի, Կեսարիոյ եւ Գաղատիոյ կողմերը համաձարակ սով մը տիրել սկսած է, այնպէս որ Հայրն իր որդին, մայրն իր զաւակն ուտելու պարտաւորեր են: Եօզղատէն մեզ խրկուած երկրորդ նամակէ մը կը տեղեկանանք որ սոնկ այս օրերս աւելի սաստկացեր է հոն և տեղւոյն ազգայինք վերջին աստիճան յուսահատական վիճակի մը մատնուելով ամեն օգ-

նուիրեն զուրկ հազարաւոր զրեր թափեր են Պօլիս, Պօլսեցւոց գթութիւնը շարժելու համար։

Յիրաւի այսպիսի վիճակ մը դառն է և ցաւալի և ամեն կարգի ազգայնոց գթութեանը արժանի։

Ուրախ եմք որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրամանաւ 12 անձէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է, որոյ անդամք են

Յակոբ	էֆէնտի	Նորատունկեան
Բարսեղ	,,	Հալաճեան
Մխիթէ	,,	Եսայեան
Ասատուր	,,	Իկիտպաշեան
Տիգրան	,,	Կիւմիւշկէրտանեան
Բարթող	,,	Քիւրքճիպաշեան
Մ. Մանուկ	,,	Մանուկեան
Յարութիւն	,,	Մէրեէմճուլի
Յովհաննէս	,,	Կիւմիւշեան
Պետրոս	,,	Մխրասեէտեան
Կարապետ	,,	Փափազեան
Սեպուհ	,,	Մազուտեան

Յանձնաժողովը իր երկրորդ նիստն ընելով շաբաթ օր ի Գալաթիա, Ազգին մէջ գտնուած ամեն կարգի վաճառականաց ցանկը պատրաստեց հանգանակութիւն մը բանալու համար. սակայն հանգանակութիւնը կարծեմք բաւական չէ սովելոց համար. այլ անմիջական օգնութիւն պէտք է, և այն ուրիշ բանով չկրնար ըլլալ, եթէ ոչ անմիջապէս փոխառութեան դիմելով և ձեռք բերուած գումարը ընդ փոյթ սովելոց խրկելով։ Միւս կողմանէ յանձնաժողովը կարող է դարձեալ հանգանակութեան դիմել և գոյացած արդիւնքը փոխատու անձին կամ ընկերութեան հատուցանել։

Յանձնաժողովոյ Մեծ. Անդամք՝ որք բարեսէր և գթած անձինք են, մեր այս առաջարկութեան օգտակարութիւնը կզգան անշուշտ. ուստի կըյուսամք թէ այս մասին չարկ եղածը ժամ առաջ կըտնօրինեն։

Ս. Պատրիարքը գաւառաց Առաջնորդներուն շրջաբերականներ ուղղեց սովելոց համար դրամ հաւաքել և անմիջապէս յանձնաժողովոյ խրրկելու համար. սակայն այսքանը բաւական չէ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ալ պէտք է Ռուսաստանի վիճակներուն մէջ հանգանակութիւն մը բանայ և իր գժբաղդ զաւակաց օգնութեան հասնի։ Բայց ասկէ Ազգային երեսփոխանները սկսեալ մինչև էն յետին ազգային պաշտօնեայն, տեսուչ խորհուրդներն ու հոգաբարձութիւնները, մայրաքաղաքիս բոլոր թաղ. խորհուրդները պէտք է անմիջապէս միանան և թաղերու մէջ հանգանակութեամբ դրամ հաւաքեն։ Այս միջոցներով միայն կարելի է բաղմահոյ գաւառներէն սովը ջնջել և հազարաւոր անձանց կեանքը մօտալուտ վտանգէն փրկել։

Այն որ մարդասէր է, և ի մասնաւորի այն որ գժբաղդ ազգայնոց կրած ցաւոց վրայ կըկարեկցի պէտք է իրեն ինկած բաժինը վճարէ և վշտահար սրտերն ու լքեալ ազգայինները իրենց ցաւոց մէջ մխիթարէ*)։

Հայրենիք թ. 224, Հոկտեմբեր 15։

ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

Հոգելոյս Թադէոս Եպիսկոպոս՝ Ե-խայեցւոց վիճակի Առաջնորդական փոխանորդն՝ ի 23ն ամսոյս մեկնեցաւ աստի երթալ իւր վիճակ։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆ ՅՕԲԵԱՆՑ։

Գ. Գրիգոր Արքեպիսկոպոս Յօբեանց՝ ի տեղի Թադէոս Վարդապետի՝ կարգեցաւ Առաջնորդական փոխանորդ վիճակին Ախն—Նախիջևանի, և ի 26ն ամսոյս մեկնեցաւ ի Ս. Էջմիածնէ և գնաց իւր պաշտօնատեղին։

(*) Միւս լրագիրներէն ևս կտեղեկանամք որ յիշեալ յանձնաժողովն փութով 1200 ոսկի հաւաքած է ի նպաստ սովելոց և արժանը կարգադրած։ Ս. Խ. Ար.